

1912Ի ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ

ԵՂԻԿ ՃԷՐԷՃԵԱՆ
yeghjerj@dm.net.lb

ՆԱԽԱԲԱՆ

1912ի Օսմանեան երեսփոխանական ընտրութիւններուն հայութեան մասնակցութիւնը, այդ ժամանակաշրջանին նուիրուած պատմագիրքերուն մէջ անհրաժեշտ չափով ուսումնասիրուած չէ: Այդ մասին չկան նաեւ առանձին ուսումնասիրութիւններ: Մինչդեռ, հարցին քննութիւնը կարեւոր է երիտթուրք-հայ յարաբերութիւնները եւ հայ ազգային-հասարակական կեանքին մէջ գործող կուսակցութիւններուն ու հոսանքներուն միջեւ առկայ տարակարծութիւնները աւելի լաւ ըմբռնելու տեսակէտէն:

Այլապէս ալ, օսմանեան երեսփոխանական ընտրութիւններուն հայութեան մասնակցութիւնը, Երեսփոխանական Ժողովէն ներս հայ երեսփոխաններուն գործունէութիւնը, ինչպէս նաեւ 1906-1917ի Ռուսիոյ իրերայաջորդ չորս պետական դումաներու հայազգի պատգամաւորներուն գործունէութեան աւելի խորունկ ուսումնասիրութիւնը կարեւոր կը նկատենք հայ հասարակական միտքի խորհրդարանական մտածելակերպի (փարլամենթարիզմ) սկզբնաւորումն ու զարգացումը աւելի յստակօրէն մեկնաբանելու իմաստով: Որովհետեւ, մեր կարծիքով, ճիշդ չէ հայ հասարակական մտածողութեան մէջ խորհրդարանական մտածելակերպի սկիզբը նկատել Հայաստանի Ա. Հանրապետութեան Խորհրդարանը: Այն անպայմանօրէն պէտք է կապել Օսմանեան եւ Յարական Կայսրութիւններու խորհրդարաններուն հետ. կայսրութիւններ՝ որոնց միջեւ բաժնուած կը մնար Հայաստանը, որոնց մէջ կ'ապրէր հայութեան մեծագոյն հատուածը եւ որոնք համապատասխանաբար կը նկատուէին հոն ապրող հայութեան «հայրենիքը»:

1908ին, յեղափոխութեան միջոցով Օսմանեան Կայսրութեան իշխանութեան ղեկը ընդհանուր առմամբ իր ձեռքերուն մէջ առած (իսկ 1913-1918ին իր ամբողջատիրութիւնը հաստատած) Իթթիհատ Վէ Թերաքքը (միութիւն եւ յառաջդիմութիւն) կուսակցութիւնը կը խոստանար երկիրը ղեկավարել ժողովրդավարական սկզբունքներով, այսինքն՝ սահմանադրութեամբ եւ խորհրդարանով: 1908ին, Սուլթան Ապտուլ Համիտ, տեղի տալով Իթթիհատի ճնշումներուն, արդէն վերահաստատած էր

նադրութեամբ եւ խորհրդարանով: 1908ին, Սուլթան Ապտուլ Համիտ, տեղի տալով Իթթիհատի ճնշումներուն, արդէն վերահաստատած էր 1876ին որդեգրուած սահմանադրութիւնը (ծանօթ իբրեւ Միտհաթեան Սահմանադրութիւն) եւ խորհրդարանական վարչաձեւը, որոնք իր իսկ կողմէ առկախուած էին 1878ին: Այս հիման վրայ, մինչեւ Համաշխարհային Ա. Պատերազմը, Օսմանեան Կայսրութեան մէջ տեղի կ'ունենան երեսփոխանական երեք ընտրութիւններ՝ 1908ին, 1912ին եւ 1914ին:

Վերոյիշեալ երեք ընտրութիւններէն, Հայ ազգային կեանքին մէջ ամէնէն աւելի իրարանցում ստեղծողը կը նկատուի 1912ի ընտրութիւնը: 1908ին, Հայ ազգային-Հասարակական կեանքը բաղկացնող կուսակցութիւններն ու հոսանքները, ինչպէս՝ Արմենական, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան (ՄԴՀ), Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն (ՀԵԴ), Վերակազմեալ Հնչակեան (ՎՀ), Հայ Սահմանադիր Ռամկավար (ՀՍՌ) կուսակցութիւններն ու Ազգային Ժողովի Կեդրոնական եւ Ազատական հոսանքները տակաւին պատրաստ չէին երեսփոխանական ընտրութիւններու, իսկ 1914ին Կայսրութիւնը կը գտնուէր միակուսակցական (Իթթիհատ Վէ Թերաքքը) ամբողջատիրութեան տակ, ուստի երեսփոխանական ընտրութիւնները կորսնցուցած էին իրենց ժողովրդավարական բընոյթը եւ վերածուած ձեւական գործողութեան: Այս պատճառներով, կեդրոնացանք 1912ի երեսփոխանական ընտրութիւններուն վրայ՝ առանց բացառելու միւս ընտրութիւններուն ժամանակ Հայութեան մասնակցութեան հարցի ուսումնասիրութեան կարեւորութիւնը, որոնք կրնան այլ յօդուածներու նիւթ ծառայել:

ԱՄՓՈՓ ԱԿՆԱՐԿ...

Օսմանեան գործող ընտրական օրէնքը 1877ի ընտրական օրէնքն էր, որուն մէջ, 1908 Սեպտեմբեր 27ին կատարուած էին կարգ մը փոփոխութիւններ: Բարեփոխուած օրէնքին համաձայն, ընտրութիւններուն կրնային մասնակցիլ 25 տարիքը բոլորած եւ պետութեան տուրք վճարող տղամարդիկ: Երեսփոխան կրնային ընտրուիլ 30 տարիքը ամբողջացուցած եւ պետութեան տուրք վճարող տղամարդիկ: Ընտրութիւնները տեղի կ'ունենային երկու հանգրուանով: Առաջին հանգրուանին ընտրական իրաւունք ունեցող տղամարդիկ կ'ընտրէին բ. կարգի ընտրողները (մունթախապի սանախ): Երկրորդ հանգրուանին, բ. կարգի ընտրողները կ'ընտրէին երեսփոխանը (մեպուս)¹: 1877ի ընտրական օրէնքին եւ 1908ի անոր փոփոխուած տարբերակին միջեւ հիմնական տարբերութիւնը այն էր, որ առաջինին համաձայն, երեսփոխանները կ'ընտրուէին

չրջանային ինքնակառավարման մարմիններուն (մեծյիսի խտարէ, աշ-
սօրուան հասկացութեամբ քաղաքապետութիւն կամ թաղապետութիւն)
կողմէ²։ Ըստ ընտրաչրջաններու, 250-750 ընտրողներուն կը հասնէր մէկ
ը. կարգի ընտրող իսկ 50.000 ընտրողին կը հասնէր մէկ երեսփոխան։
Ընտրութիւնները բոլոր շրջաններուն մէջ միաժամանակեայ դրու-
թեամբ չէին կատարուեր։ Անոնք կը ձգձգուէին 2-3 ամիս։ Այս պատճա-
ռով ալ խորհրդարանի բացման նիստերուն շատ մը շրջաններու ը. կար-
գի ընտրողներ իրենց երեսփոխանները տակաւին ընտրած չէին ըլլար։
Օսմանեան Խորհրդարանը կազմուած էր երկու պալատներէ՝ Երեսփո-
խանական Ժողով (մեծյիսի մեպուսան) եւ Ծերակոյտ (մեծյիսի ալան)։
Վերջինիս անդամները կը նշանակէր սուլթանը։

ԱԿՆԱՐԿ 1908Ի ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ...

Յետ-սահմանադրական Օսմանեան Կայսրութեան առաջին երեսփո-
խանական ընտրութիւնները տեղի կ'ունենան 1908 Հոկտեմբեր-Դեկ-
տեմբեր ամիսներուն եւ նորընտիր Երեսփոխանական Ժողովին պաշտօ-
նական բացումը կը կատարուի Դեկտեմբեր 17ին։ Այս ընտրութիւնները
Ժողովրդային լայն ընդառաջում չեն գտներ այն պատճառով, որ Ժողո-
վուրդի լայն զանգուածները տակաւին չէին ըմբռներ խորհրդարանին
նշանակութիւնը իրենց կեանքին մէջ, եւ համաօսմանեան իմաստով,
ընտրութեանց մասնակցելու պատրաստ կուսակցութիւններ չկային։
Յարաբերաբար միակ կազմակերպուած կուսակցութիւնը Իթթիհատն
էր, որ տակաւին կը գտնուէր իր գործունէութեան ընդլայնակեայ շրջա-
նին մէջ³։ Իթթիհատէն դուրս կը գործէին ազգային դիմագիծով կու-
սակցութիւններ։ Իթթիհատի իշխանութեան հանդէպ ընդդիմադիր, քիչ
թէ շատ հեղինակութիւն վայելող միակ համաօսմանեան կուսակցու-
թիւնը՝ Օսմանյի Ահրար Ֆիրքասի (օսմանեան ազատական կուսակցու-
թիւն) ծնունդ կ'առնէ Սեպտեմբերի կէսերուն, եւ այդ պատճառաւ չի
կրնար ամբողջ Կայսրութեան առումով ընտրապայքար կազմակերպել։
Այս պատճառներով ալ, «Գալառներուն մէջ հաստատուած Իթթիհա-
տական գրասենեակներն էին որ կը նշանակէին ընտրելիները. ո՛չ որ
կրնար տարբեր թեկնածու մը ներկայացնել։ Եղածը, երոպական
իմաստով, կանոնաւոր ընտրութիւն մը չէր»⁴։

Ընտրութիւններուն ընթացքին Իթթիհատ կը ցուցաբերէ ոչ-թուրք
եւ յատկապէս քրիստոնեայ երեսփոխաններուն թիւը նուազագոյնի ի-
ջեցնելու յստակ միտում, որուն համար ան կ'օգտագործէ իր ձեռքերուն
մէջ կեդրոնացած գործադիր իշխանութեան լծակները։ Այդ մասին

պատմաբան Ալբրուս Բանսու կը գրէ. «օրինակի համար գիտ մը կամ տարածաշրջան մը որ բաղկացած էր հինգ հարիւր քրիստոնեայ ընտրողներէ (թիւ մը որ բաւարար է ք. կարգի մէկ ընտրող տալու համար), կը բաժնուի երեք կամ չորս շրջաններու եւ ապա այդ շրջանները կը միացուին իսլամ գիղերուն կամ տարածաշրջաններուն»⁵:

Իթթիհատի նպատակն էր ապահովել Խորհրդարանի բացարձակ մեծամասնութիւնը՝ օսմանացումի քաղաքականութեան մէջ զայն որպէս օրէնսդիր հաստատութիւն օգտագործելու համար: Օսմանականութիւնը, երիտթուրքական շարժման՝ յատկապէս Ահմէտ Ռիզայի գլխաւորած թեւին ջատագոված գաղափարախօսութիւնն էր՝ երբ տակաւին ան կը գտնուէր վտարանդիութեան մէջ: Օսմանականութեան գաղափարախօսութեան համաձայն Օսմանեան Կայսրութեան մէջ գոյութիւն ունէր տարրեր կրօնքներ դաւանող մէկ ազգ՝ օսմանեան ազգը: Այս տեսութեամբ երիտթուրքերը կ'ուզէին հիմնաւորել տարրեր ազգերու ազգային-ազատագրական պայքարներուն եւ հողային պահանջներուն անհիմն եւ օտարամուտ ըլլալու իրենց համոզումը: Սահմանադրութենէն ետք օսմանականութիւնը կը դառնայ իթթիհատական իշխանութիւններուն պետական գաղափարախօսութիւնը: Անոնք, ա՛յս գաղափարախօսութեամբ կ'ուզեն բացատրել քաղաքացիներու հաւասարութեան սկզբունքը, մինչդեռ ազգային փոքրամասնութիւններուն (հայ, յոյն, արաբ եւն.) մօտ հետզհետէ կ'արմատանայ այն համոզումը, որ սա թրքացումի քաղաքականութեան թաքուն ձեւ մըն է:

Ընտրութիւններու նախօրեակին, իթթիհատական գործիչները կապ կը հաստատեն Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան հետ եւ անկէ կը խնդրեն հայ ընտրելիներու ցանկ մը, որպէսզի ք. կարգի իթթիհատական ընտրողներուն միջոցով խորհրդարան հասցնեն նաեւ հայ երեսփոխաններ: Իթթիհատ դէմ էր Կայսրութենէն ներս ազգային դիմագիծով կուսակցութիւններու գոյութեան եւ այս ձեւով կ'ուզէր նսեմացնել նաեւ հայ կուսակցութիւններուն դերը: Յարաբերութեան այս ձեւէն մեծապէս դժգոհ կը մնայ ՀՅԴն: Վերջինս իթթիհատի հետ իր գործակցութիւնը սկսած էր 1902ի նախօրէին, մասնակցած էր 1902ին Փարիզի մէջ կայացած Օսմանեան Ընդդիմադիր Ուժերու Խորհրդաժողովին եւ կարեւոր դերակատարութիւն ունեցած 1907ին դարձեալ Փարիզի մէջ կայացած Ընդդիմադիր Ուժերու Բ. Խորհրդաժողովի յաջողութեան մէջ: Գործնական կեանքի մէջ եւս, 1906էն սկսեալ ՀՅԴ Վասպուրականի եւ հրգրումի կոմիտէները գործակցութեան մէջ էին ընդդիմադիր տարրերուն հետ: Սահմանադրութեան հռչակումէն ետք, ՀՅԴ ջերմօրէն կը

պաշտպանէ նոր վարչակարգը եւ իթթիհատին վարած օսմանացումի քաղաքականութեան մէջ կը տեսնէ ազգերու հաւասարութեան սկզբունքին գործնականացումը⁶։ ՀՅԴ ինքզինք կը ներկայացնէ որպէս Օսմանեան Կայսրութեան մէջ սահմանադրութիւն բերող ամէնէն կարեւոր ուժերէն մէկը⁷։ ՀՅԴի ակնկալութիւնն էր, որ իր վաղեմի դաշնակիցը գործակցի իր հետ եւ ինք աւելի ներգործօն մասնակցութիւն ունենայ հայ երեսփոխաններու անուններուն որոշման մէջ։

ՄԴՀնչակեան Կուսակցութիւնը եւս, կուսակցութիւնները շրջանցող իթթիհատ-Պատրիարքարան յարաբերութեան ձեւը սխալ կը գտնէ։ Ան իթթիհատի հանդէպ հակադիր կեցուածք որդեգրած էր 1896էն ի վեր, եւ այդ պատճառով ալ մասնակցած չէր 1902ի եւ 1907ի Օսմանեան Ընդդիմադիր Ուժերու զոյգ խորհրդաժողովներուն⁸։ Հնչակեանները սակայն յարաբերութեան այս ձեւը կը նկատեն «քաղաքական մի բարեբախտ սխալ», որուն պատճառով անոնք չեն ստիպուիր ուղղակի յարաբերութեան մէջ մտնել իրենց հին հակառակորդին հետ եւ այդ պարտականութիւնը կը ձգեն Պատրիարքարանին⁹։

Իթթիհատ, նախընտրական բանակցութիւններուն ընթացքին իր տուած խոստումները, յատկապէս՝ հայ երեսփոխաններու թիւին մասին, չի յարգեր։ Սա յատկապէս դժգոհ կը թողու ՀՅԴի ղեկավարութիւնը, որովհետեւ ամէնէն աւելի ան էր որ ակնկալութիւններ ունէր իթթիհատէն¹⁰։ 1908ի ընտրութիւններուն արդիւնքով Երեսփոխանական Ժողով կը մտնեն 11 հայ երեսփոխաններ, որոնք ըստ իրենց ընտրաշրջաններուն եւ քաղաքական պատկանելիութեան կը ներկայացնեն հետեւեալ պատկերը․- ՀՅԴ՝ Գարեգին Փաստրմաճեան-Արմէն Գարօ (էրզրում), Վարդգէս Սերենկիւիեան (էրզրում), Վահան Փափագեան-Կոմս (Վան), Գեղամ Տէր Կարապետեան (Մուշ), իթթիհատականներ՝ Յակոբ Պապիկեան (Թեքիրտաղ), Պետրոս Հալաճեան (Պոլիս), Արթին Պոչկեզեանեան (Հալէպ), անկուսակցականներ՝ Գրիգոր Զօհրապ¹¹ (Պոլիս), Ստեփան Սպարթալեան (Իզմիր), Նազարէթ Տաղաւարեան (Սերաստիա), ՄԴՀԿ՝ Համբարձում Պոյաճեան-Մեծն Մուրատ (Ատանա)։

Հայ ազգային-հասարակական կազմակերպութիւններուն, անհատ մտաւորականներուն եւ մամուլի օրկաններուն մօտ հաստատ համոզում կը գոյանայ, որ հայ երեսփոխաններուն թիւը չէր համապատասխաներ արեւմտահայութեան յարաբերական տոկոսին, եւ կատարուածը արդիւնք էր իթթիհատի դիտաւորեալ քաղաքականութեան։ Երեսփոխանական Ժողովի կուսակցական ներկայացուցչական կազմը եւս չէր արտացոլեր իրականութիւնը։ Այս պարագան ակնբախ կը դառնայ յատ-

կապէս, երբ իթթիհատական հայ երեսփոխաններուն թիւն ու անոնց կազմած տոկոսը բաղդատուի ոչ-թուրք ազգերու երեսփոխաններուն մէջ իթթիհատականներուն կազմած տոկոսին հետ: Ստորեւ այդ աղիւսակը¹² .-

ազգութիւն	երեսփոխաններու թիւ	իթթիհատական երեսփոխաններ	իթթիհատականներուն տոկոսը ազգային կազմին մէջ
արաբ	53	1	1,8
ալպանացի	27	2	7,4
յոյն	22	1	4,5
հայ	11	3	27,2
սերպ	6	0	0
քիւրտ	5	1	20
հրեայ	4	3	75
պուլկար	4	0	0
վրախ	1	0	0

Տրուած աղիւսակին մէջ հրեայ երեսփոխաններու թիւին մէջ իթթիհատականներու կազմած բարձր տոկոսը բնութագրական կարելի չէ նկատել: Հրեաները, ի տարբերութիւն շարք մը այլ փոքրամասնութիւններու, ազգային հարցեր եւ հողային պահանջներ չունէին. անոնք ամբողջապէս օսմանացած էին:

«Հրեաները իրենց շահերուն լաւագոյն պաշտպանութիւնը կը տեսնէին աշխարհիկ եւ սահմանադրական օսմանեան պետութեան մէջ, ուր իսլամ տարրին հետ ընդհանուր մտահոգութիւններ բաժնելով, անոնք նուազագոյն ձեւով կը տուժէին հակասեմական վերաբերմունքներէն»¹³:

Հրեաներէն բացի, թիւով եւ տոկոսով ամենաշատ իթթիհատական երեսփոխան ունեցող փոքրամասնութիւնը կը դառնան հայերը: Երեւոյթին մասին ցարդ եղած բացատրութիւնները կարելի է ամփոփել քանի մը կէտերու տակ.-

1) Որեւէ ընտրաշրջանի բ. կարգի ընտրողներուն մէջ հայերը մեծամասնութիւն չէին կազմեր, հետեւաբար հայ երեսփոխաններու ընտրութիւնը մեծապէս կախեալ էր ոչ-հայ ընտրողներէն: Մինչդեռ միւս բոլոր ազգութիւններուն համար այդպիսի ընտրաշրջաններ գոյութիւն ունէին: Օրինակի համար.- «Աեց ընտրաշրջաններու մէջ (Խոննիմա, Մոզա-

նի, Լեմնոս, Միթիլենե, Քիոս եւ Ռոտոս), միայն յոյն երեսփոխաններ կ'ընտրուէին, որովհետեւ բնակչութեան բացարձակ մեծամասնութիւնը յոյն էր»¹⁴:

2) Քրիստոնեայ փոքրամասնութիւններուն մէջ՝ սահմանադրական կարգերու հաստատումին հանդէպ ամէնէն աւելի խանդավառուողը կ'ըլլայ հայը, հետեւաբար բացառուած չէ, որ այդ շրջանին, քրիստոնեայ փոքրամասնութիւններուն մէջ, տոկոսային յարաբերութեամբ ամէնէն աւելի հայերը ըլլային իթթիհատիական դարձողները:

3) Պատրիարքարանը եւ ՀՅԴն իթթիհատին հետ իրենց բանակցութիւններուն ընթացքին վճռական չեն ըլլար եւ պէտք եղածէն աւելի կը վստահին անոր: Փաստօրէն, «Բոլոր փոքրամասնութիւններու բ. կարգի ընտրողներուն մէջ միայն հայ եւ հրեայ ներկայացուցիչներն են որ կը քուէարկեն ի նպաստ Իթթիհատի թեկնածուներուն»¹⁵:

Երեսփոխանական Ժողովին մէջ իթթիհատ կ'ունենայ 54 կուսակցական երեսփոխաններ: Սակայն, շրջաններէն ընտրուած երեսփոխաններուն մեծ մասը (շուրջ 150 հոգի) շրջանային հեղինակութիւններէն, որոնք ընտրուած էին իթթիհատի ցանկերով: Իթթիհատին համար հական նշանակութիւն ունեցող օրինագիծերու պարագային, ասոնք կը քուէարկէին ի նպաստ անոր: Երեսփոխանական Ժողովի նախագահ կ'ընտրուի իթթիհատի յայտնի պարագլուխներէն եւ գաղափարախօսներէն Ահմէտ Ռիզան: Երեսփոխանական Ժողովը կը դառնայ իթթիհատի ձեռքին գործիք եւ կը վերածուի անոր քաղաքական նպատակներուն, յատկապէս՝ օսմանացումի քաղաքականութեան օրէնսդրական ենթահող տրամադրող հաստատութեան մը:

Երեսփոխանական Ժողովը չ'ունենար իրմէ ակնկալուած լրջութիւնը. «այն մի տեսակ արեւելեան սրճարան էր: Ոմանք յօրանջում, նիրհում, քերուրտում էին, ոմանք էլ նստած տեղերից աջ ու ձախ պոռում: Փարլամենտական լրջութեան նշոյլ անգամ չկար այդտեղ: ...փարլամենտների ծաղրանկար՝ Օտտոմանեան փարլամենտն էր դա»¹⁶:

Երեսփոխան Փափագեանի վկայութեամբ եւս՝ «Նիստերու ատենն ալ անոնցմէ (երեսփոխաններէն - Ե-Ճ-) շատերը չէին շեղեր իրենց տնային սովորութիւններէն. կը բարձրանային բազկաթոռներու վրայ եւ ծունկերը տակերնին ծալած, մուճակնին աթոռին տակ՝ մերկ ոտքերուն մատերու հետ կը խաղային եւ “թեզպէ” կը քաշէին, առանց նեղուելու: Զուէարկութեան ատեն կը նայէին իրենց վստահելի կամ Իթթիհատի խօսկան երեսփոխանի մատերուն ու կը պոռային “կապուլ” (ընդունելի)»¹⁷:

Իթիթիհատական իշխանութիւններն ու նորընտիր Երեսփոխանական Ժողովը լուրջ փորձութիւն կը դիմագրաւեն 1909 Ապրիլ 12-13ին, երբ յետաշրջական եւ հակակառավարական ուժերը կը գրաւեն խորհրդարանի շէնքը եւ փոքրամասնութիւն կազմող երեսփոխաններու ներկայութեամբ կը քուէարկեն շարիաթի սկզբունքներուն վերադառնալու օրէնքներ: Հակադարձ հարուածը չ'ուշանար եւ Ապրիլ 24ին Իթիթիհատի հաւատարիմ զօրամիաւորութիւններն ու սահմանադրական ուժերը կը վերագրաւեն մայրաքաղաքը: Իշխանափոխութեան այս շրջանին տեղի կ'ունենայ Ատանայի աղէտը:

Իշխանութեան վերատիրանալէն ետք, Իթիթիհատին «ձեռքերը ազատ կ'արձակուին իր ուզած օրէնսդրական փոփոխութիւնները կատարելու համար»¹⁸:

Կարճ ժամանակամիջոցի մը մէջ Երեսփոխանական Ժողովը կը քուէարկէ «ընկերակցութիւններու կազմութեան», «Ժողովրդային հաւաքներ»ու, «գործադուլներ»ու, «ոչ-խալամներու գինուորագրութեան», «արհեստակցական միութիւններ»ու, «աւագակութեան եւ խռովարարութեան դէմ միջոցառումներ»ու, «կալուածատուրք»ի, «կանանց աշխատանք»ի եւ այլ կենսական օրէնքներ: «Այս օրէնքներուն նպատակն էր կառավարութեան ձեռքը տալ այնպիսի ոյժ, որ ան կարենայ ճգնել իր քաղաքականութեան հանդէպ դժգոհութիւն արտայայտող որեւէ շարժում»¹⁹:

Ուստի, այս օրէնքները յառաջ կը բերեն ոչ-թուրք փոքրամասնութիւններու դժգոհութիւնը, որովհետեւ անոնք այս օրէնքներուն մէջ կը տեսնեն «քոնի օսմանացումի փորձերը»²⁰:

Այս շրջանին, Երեսփոխանական Ժողովը քանի մը առիթներով կը քննարկէ նաեւ Ատանայի աղէտին պատասխանատուութեան հարցը:

Հայ երեսփոխանները առաջադրուած օրինագիծերուն, ինչպէս նաեւ Ատանայի աղէտին քննարկման ժամանակ, հանդէս կը բերեն լուրջ աշխուժութիւն: Անոնք էական բարեփոխութիւններ կ'ուզեն մտցնել առաջադրուած օրինագիծերուն մէջ, նաեւ՝ կ'առաջադրեն ամբողջապէս նոր օրինագիծեր²¹: Ընդհանրապէս հայ երեսփոխանները իրենց ելոյթներուն եւ օրէնսդրական նախաձեռնութիւններուն մէջ կ'արտայայտեն ժամանակաշրջանի ամէնէն յառաջդիմական սկզբունքները, որոնք կը մերժուին եւ նոյնիսկ երբեմն ծաղրի կ'ենթարկուին իրենց գործընկերներուն կողմէ²²:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ 1912Ի ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՏԵՆ

1912ի երեսփոխանական ընտրութիւններու նախօրէին, որոնք ընտրական օրէնքին համաձայն պէտք է տեղի ունենային Սեպտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն, Օսմանեան Կայսրութիւնը կը դիմագրաւէր արտաքին եւ ներքին դժուարութիւններ:

1911 Սեպտեմբեր 29ին Իտալիա պատերազմ կը հռչակէ Օսմանեան Կայսրութեան դէմ եւ կը յարձակի անոր ափրիկեան նահանգներէն Թրիփոլիթանիոյ (Լիպիա) վրայ: Օսմանեան բանակները, որոնք շրջանէն ներս ունէին թոյլ ներկայութիւն մը միայն, շատ արագ պարտութեան կը մատնուին: Իթիթիհատական կարգ մը սպաներու, որոնց շարքին էնվէր եւ Մուստաֆա Քեմալ, ինքնակամ նախաձեռնութիւնը՝ արար ցեղախումբերով (մասնաւորաբար սինուսի ցեղախումբին) փարթիզանական կռիւներ կազմակերպելու Իտալական բանակին դէմ, կուտայ սահմանափակ արդիւնք մը միայն: Թուրք-Իտալական պատերազմը կը տեւէ մինչեւ 1912 Հոկտեմբեր 17, երբ Լոզանի մէջ ստորագրուած համաձայնագրով Օսմանեան Կայսրութիւնը կը կորսնցնէ Թրիփոլիթանիան եւ Եգէական Մովուն մէջ գտնուող Երկոտասան Կղզիները (Dodecanese Islands)²³: Երեսփոխանական ընտրութիւններու տաք քարոզարշաւը (Մարտ-Ապրիլ ամիսներ) կը համընկնի պատերազմի թէժ իրադարձութիւններուն՝ ուր արձանագրուած պարտութիւնները, իբր իշխանութիւններուն վարած ձախող արտաքին քաղաքականութեան արդիւնքը, լայնօրէն կ'օգտագործուի հիմնականին մէջ Իթիլաֆի կողմէ գլխաւորուած ընդդիմութեան կողմէ: Վերջիններուս կողմէ արձակուած «Թրիփոլիթանիան կը ծախեն» մեղադրանքը լայն տեղ կը գտնէ ժողովրդային զանգուածներուն մօտ: Իշխանամէտ ուժերը եւս ընտրական քարոզչութեան մէջ կը փորձեն օգտագործել արտաքին թշնամիին առկայութիւնը եւ կոչ կ'ընեն համախմբուիլ կառավարութեան շուրջ, աշխատելով ցոյց տալ, որ «ընդդիմութիւնը քանզի է եւ ոչ-հայրենասէր»²⁴:

Ներքին ճակատի վրայ, Իթիթիհատի իշխանութեան հանդէպ դժգոհութիւնը տակաւ կ'աճի. կը ծնին շարք մը ընդդիմադիր կուսակցութիւններ, որոնց կարեւոր մէկ մասը՝ Իթիթիհատէն անջատուածներ: 1911 Նոյեմբեր 21ին, ընդդիմադիր շարք մը խմբակցութիւններու միաձուլումով կը ստեղծուի Իթիթիհատին ընդդիմադիր ամէնէն զօրաւոր ոյժը՝ Հուրիյէթ Վէ Իթիլաֆ (ազատութիւն եւ համաձայնութիւն) կուսակցութիւնը:

1911 Դեկտեմբերին, Պոլսոյ երեսփոխան Ռիֆաթ փաշայի Ֆրանսայի դեսպան նշանակուելուն պատճառով թափուր մնացած երեսփոխանական աթոռին համար տեղի կ'ունենան մասնակի ընտրութիւններ: Իթթիհատի թեկնածու Ներքին Գործոց Նախարար Մեմտուհ պէյին դէմ Իթիլաֆ թեկնածու կ'առաջադրէ Թահիր Հայրէտտինը: Վերջինս բարձր ընտրողներուն մէջ ձեռք կը ձգէ մէկ ձայնի առաւելութիւն եւ կ'ընտրուի երեսփոխան: Մայրաքաղաքի շրջանէն Ներքին Գործոց Նախարարին պարտութիւնը լուրջ հարուած էր Իթթիհատին: Ընդդիմադիրները Իթթիհատի մասին կը սկսին խօսիլ որպէս «պատմութեան անցած ոյժ մը»²⁵:

Այս մթնոլորտին մէջ սպասել յաջորդ երեսփոխանական ընտրութեան՝ Իթթիհատին համար կրնար արկածախնդրական ըլլալ: Իթթիհատի ղեկավարութեան մօտ կը ձեւաւորուի ընտրութիւնները շուտ կայացնելու եւ անոր միջոցով իր ընդդիմադիրներուն ջախջախիչ հարուած տալու գաղափարը:

Արտահերթ երեսփոխանական ընտրութիւններ կատարելու պատճառ կը հանդիսանայ Սահմանադրութեան 35րդ յօդուածին բարեփոխման հարցը²⁶: 1911 Դեկտեմբեր 16ին Սայիտ փաշայի կառավարութիւնը Երեսփոխանական Ժողովին կը ներկայացնէ վերոյիշեալ յօդուածը փոփոխութեան ենթարկելու նոր օրինագիծ մը, որ Երեսփոխանական Ժողովի վաւերացման չ'արժանանար: Դեկտեմբեր 30ին Սայիտ փաշա կը հրաժարի եւ յաջորդ օր Սուլթանին կողմէ վերստին կը նշանակուի վարչապետ²⁷: 1912 Յունուար 2ին Սուլթանը կը վաւերացնէ նոր կառավարութեան կազմը: Երեսփոխանական Ժողովէն ներս 35րդ յօդուածին շուրջ վէճերը կը շարունակուին: Յունուար 15ին, Սուլթանը կը լուծէ Երեսփոխանական Ժողովը եւ ընտրութիւններու նոր թուական կը նշանակէ Մարտ 23էն Ապրիլի վերջը:

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՄՆԱԿԻՑ ՀԱՅ ՈՅԺԵՐԸ

Երեսփոխանական ընտրութիւններուն նախապատրաստուող հայ կուսակցութիւններն ու հոսանքները կը պարզէին հետեւեալ պատկերը:

ՀՅԴԵՆ 1902էն սկսեալ գործակցութիւն ունէր Իթթիհատին հետ: Այդ գործակցութիւնը կը շարունակուի սահմանադրութենէն ետք եւ 1909 Սեպտեմբերին կը կնքուի «Համագործակցութիւն Իթթիհատ-Թերաքի Կուսակցութեան Ընդհանուր Կեդրոնին եւ ՀՅԴաշնակցութեան Կ. Ժողովի Պատասխանատու Մարմին-ին» միջեւ²⁸: Ատանայի աղէտէն անմիջապէս յետոյ կնքուած այս դաշինքը հայ ազգային-հասարակական հո-

սանքներուն եւ մամուլի անկախ օրկաններուն կողմէ կ'ենթարկուի բռն քննադատութեանց, որոնց իր հերթին կը հակադարձէ ՀՅԴ պաշտօնաթերթ Ազատամարտ օրաթերթը²⁹։ Հակառակ անոր, որ ՀՅԴ կը քննադատէ իրերայաջորդ կառավարութիւններու սխալներն ու թերացումները, ան կը մնայ գործակից իթիւհատին եւ ակնկալելի էր, որ երեսփոխանական ընտրութիւններուն ժամանակ, այդ գործակցութիւնը ստանար շօշափելի տարազում։ ՀՅԴ տիրական ներկայութիւն էր Պոլսոյ, Վանի, Պիթիսի եւ էրզրումի նահանգներուն մէջ։

ՄԴՀԿը 1896էն սկսեալ հակառակորդ էր երիտթրքական շարժման մէջ Ահմէտ Ռիզայի կողմէ գլխաւորուած օսմանականութեան գաղափարախօսութիւնը ջերմօրէն պաշտպանող հոսանքին, որ ապագային իթիւհատ Վէ թերաքըր Կուսակցութեան կարելոր բաղկացուցիչներէն մին պիտի դառնար։ Սահմանադրութենէն ետք ՄԴՀԿը կը դառնայ ընդդիմադիր կուսակցութիւն։ Իթիւհատին հանդէպ ՄԴՀԿի հակադիր կեցումածքը տարուէ տարի կը դառնայ աւելի սուր եւ 1912ին կը հասնի իր գագաթնակէտին։ 1913 Սեպտեմբերին, Կուսակցութեան է. համագումարը արդէն կ'որոշէ ամբողջապէս անցնիլ ընդդիմադիր եւ յեղափոխական գործունէութեան³⁰։ Սահմանադրութեան չրջանին ՄԴՀԿը գործակցութեան եզրեր կը փնտռէ ընդդիմադիր այլ խմբակցութիւններու հետ։ 1912 Փետրուար 7ին, երեսփոխանական ընտրութիւններուն նախօրեակին, համաձայնագիր կը կնքուի ՄԴՀԿի եւ ընդդիմադիր Իթիլաֆ Կուսակցութեան միջեւ։ ՄԴՀԿը տիրական ներկայութիւն ունէր Պոլսոյ չրջակայքին, Սփազի, Խարբերդի, Ատանայի նահանգներուն եւ Սեւ Ծովու հայաշատ քաղաքներուն մէջ։

ՎՀԿը, որ 1902էն արդէն կը գործէր որպէս ինքնուրոյն կուսակցութիւն, օսմանեան քաղաքական որեւէ կուսակցութեան հանդէպ սկզբունքային կեցումածք չ'արձանագրեր եւ որեւէ կուսակցութեան հետ դաշինք չի կնքեր։ ՎՀԿը իր ներկայութիւնը զգալի կը դարձնէ Պոլսոյ, Շապին Գարահիսարի եւ Կիլիկիոյ կարգ մը հայաշատ քաղաքներուն մէջ։

ՀՍՌԿը, որ ծնունդ կ'առնէ 1908 Հոկտեմբերին, հիմնական նպատակ կը դարձնէ սահմանադրական կարգերու պաշտպանութիւնը։ Ան, սակայն, թրքական որեւէ հոսանքի հանդէպ արմատական կեցումածք չ'արտայայտեր եւ առաւելարար կը գործէ Պոլսոյ մէջ։

Արմենական Կուսակցութիւնը, կը շարունակէ իր տիրական ներկայութիւնը ունենալ Վանի նահանգին մէջ։

Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը երեսփոխանական ընտրութիւններու կարեւոր գործօններէն էր: Ազգային-քաղաքական-հասարակական հարցերու կապակցութեամբ, Պատրիարքարանը պէտք է գործէր Ազգային Երեսփոխանական Ժողովին եւ ասոր կողմէ ընտրուած Քաղաքական Ժողովին³¹ համաձայն: 1863ի Ազգային Սահմանադրութեան համաձայն, Ազգային Երեսփոխանական Ժողովը պէտք է կազմուած ըլլար 140 երեսփոխաններէ, որոնցմէ 20ը Պոլիս գտնուող եկեղեցականներէ, 80ը Պոլսոյ եւ շրջակայքի հայութենէն եւ 40ը՝ գաւառի հայութենէն³²: Այս բաժանման հետեւանքով գաւառահայութիւնը արդար ձեւով չի ներկայացուիր Ազգային Երեսփոխանական Ժողովին մէջ: Ժողովը միատարր չ'ըլլար նաեւ քաղաքական իմաստով: Սահմանադրութենէն անմիջապէս ետք ան կը բաժնուի Պահպանողական, Կեդրոն եւ Ազատական հոսանքներու: Կարճ ժամանակ անց, Պահպանողական եւ Կեդրոն հոսանքները կը միաձուլուին եւ 1912ի դրութեամբ ազգային Երեսփոխանական Ժողովը կը ստանայ հետեւեալ պատկերը.՝ Կեդրոն խմբակցութիւն՝ 44 երեսփոխան, Ազատական խմբակցութիւն՝ 22 երեսփոխան, Անկախ Երեսփոխաններու Համախմբում՝ 11 երեսփոխան, ՀՅԴի խմբակցութիւն՝ 11 երեսփոխան, ՄԴՀԿի խմբակցութիւն՝ 5 երեսփոխան: ՀՍՌԿ եւ ՎՀԿի երեսփոխանները մաս կը կազմեն Կեդրոն խմբակցութեան³³: ՀՅԴի խմբակցութիւնը ընդհանրապէս կը գործակցի Ազատական խմբակցութեան հետ, իսկ ՄԴՀԿի խմբակցութիւնը Անկախ երեսփոխաններու հետ կ'ունենայ պարագայական գործակցութիւն:

ԸՆՏՐԱԿԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Երեսփոխանական ընտրութիւններուն ընդառաջ, արեւմտահայ բոլոր կուսակցութիւններուն եւ հոսանքներուն հիմնական մտահոգութիւնը կը դառնայ ապագայ Երեսփոխանական Ժողովի հայ երեսփոխաններուն թիւը: Այդ թիւը մեծապէս կախեալ էր ընտրաշրջաններու բաժանումներէն: Ընտրաշրջանները սահմանազօրած էին այնպէս մը, որ ոչ մէկ տեղ ք. կարգի ընտրողներուն մէջ հայերը մեծամասնութիւն կազմէին: Ուստի հայ երեսփոխաններուն ընտրութիւնը կախեալ էր ոչ-հայ ք. կարգի ընտրողներու կամքէն: Այս մասին Պատրիարքարանին գրած տեղեկագիրները՝ *Թաքր/րները*, իշխանութիւններուն կողմէ նկատի առնուած չէին, եւ ընտրաշրջաններու բաժանումը կը մնար ի վնաս հայութեան: Օրինակի համար, Մուշի առաջնորդ Ներսէս եպս. Ղարախանեան 1912 Ապրիլին Պատրիարքարան յղած իր տեղեկագրին մէջ կը նշէ, թէ Դաշտի Շրջանի Զիարէթ գիւղախումբի երկու հայ գիւղեր ընտրականօ-

րէն միացուած են քրտական հինգ գիւղերու: Միւս կողմէ 432 ընտրող հաշուող Ադրենիս եւ 327 ընտրող հաշուող Ագ-Պունար քրտական գիւղերը կու տան մէկական բ. կարգի ընտրող, մինչ հայաբնակ Յրօնք՝ 633 ընտրող, Մրտագոմ՝ 1092 ընտրող եւ Յասգիւղ՝ 1025 ընտրող հաշուող գիւղերը դարձեալ կու տան մէկական բ. կարգի ընտրող: Ընդհանուր առմամբ Սասնոյ հայաշատ շրջանի բ. կարգի 13 ընտրողներուն մէջ միայն երեքը հայեր էին³⁴:

1908-1912ին, Պոլսոյ Պատրիարքութիւնը, կուսակցութիւնները եւ անկախ մամուլը յաճախ կը բարձրացնեն հայերու, ինչպէս նաեւ այլ փոքրամասնութիւններու երեսփոխանական ներկայացուցչութեան հարցը, որ երբեմն նաեւ առիթ կու տայ տարբեր հոսանքներ ներկայացնող հայկական, յունական եւ թրքական մամուլի օրկաններուն միջեւ բռնկուած բանավէճերու: ՀՅԴ Պոլսոյ պաշտօնաթերթ Ազատամարտը իր «Համեմատական ներկայացուցչութիւնը. Ի՞նչպէս Պէտք է կատարուին Ընտրութիւնները Թուրքիոյ Մէջ» յօդուածին մէջ կը գրէ. «Օսմանեան պատգամատրական ժողովի ընտրութիւններուն ատեն ղեկավար կուսակցութիւնը, Իթթիհատ Թերաքքըն, ջանք չխնայեց ցեղերու համեմատական ներկայացուցչութեան սկզբունքը անգործադրելի ձգելու համար, հիմնուած՝ օսմանեան միակ ազգութեան մը գաղափարին վրայ որ օրուան կարգախօսն էր: Այդ օրէն ի վեր սակայն տրամադրութիւնները բաւական փոխուած են, ու Իթթիհատի լիտերները մինչեւ մէկ աստիճան հաշտուած են համեմատական ներկայացուցչութեան սխալման հետ, միայն թէ չեն հաւանիր օրէնքի կարգ անցնելու այդ սխալմանը, հող կանգ կ'առնեն իրենց բարի կամեցողութիւնները»³⁵:

Նախընտրական միւս մտահոգութիւնը ընտրութիւններուն հայութեան մասնակցութեան ձեւին շուրջ էր: 1908ի ընտրութիւններուն, Պատրիարքին հովանաւորութեամբ, ազգային երեսփոխանական ժողովին կողմէ ստեղծուած էր «սահմանադրական ակումբ», որ Իթթիհատին հետ վարած էր ընտրական բանակցութիւններ, յատկապէս՝ հայ երեսփոխաններու թիւին եւ անոնց անուններուն շուրջ: Իթթիհատ խախտած էր իր նախընտրական խոստումները: Այլապէս ալ, անցնող չորս տարիներուն ընթացքին, Իթթիհատի իշխանութեան հանդէպ արձանագրուած էին բազմապիսի դժգոհութիւններ: Հրապարակ եկած էր նաեւ Իթթիհատին ձեռնոց նետող ընդդիմադիր, բաւական ուժեղ թուացող կուսակցութիւն մը՝ Իթիլաֆը: Հայերը ի՞նչ ձեւով պէտք է մասնակցէին ընտրութիւններուն: Այս եւ յարակից հարցերու պատասխանները գտնելու կեդրոնատեղիին կը վերածուի Պատրիարքարանը: 1912 Յունուար

24ին, Ազգային Երեսփոխանական Ժողովի Քաղաքական Ժողովը կը գումարէ նիստ մը՝ ճշդելու համար Պատրիարքարանին դերակատարութիւնը յառաջիկայ ընտրութիւններուն: Ժողովը կ'անցնի բուռն վիճաբանութիւններով եւ չի կրնար որոշել Պատրիարքարանին «ձեռնհասութիւնը» գալիք ընտրութիւններուն, «մանաւանդ այսպիսի փափուկ ժամանակ մը երբ օսմանեան քաղաքական կուսակցութեանց միջեւ բուռն պայքար կայ»³⁶:

Երկու օր անց, Յովհաննէս Արշարունի Պատրիարքին նախագահութեամբ տեղի կ'ունենայ այլ ժողով մը, որուն կը մասնակցին Քաղաքական Ժողովի, Ազգային Երեսփոխանական Ժողովի Մայր Դիւանի անդամները, Ազգային Երեսփոխանական Ժողովի խմբակցութիւններուն եւ կուսակցութիւններուն ներկայացուցիչները: Ժողովը՝ քննարկելէ ետք ընտրական հարցերը, կ'որոշէ.՝ 1) նկատի առնելով որ ընտրական վիճակը խառն է, Պատրիարքարանը որեւէ գործօն մասնակցութիւն չունենայ ընտրութիւններուն, 2) կոչ ընել հայ կուսակցութիւններուն եւ անոնց շուրջ գտնուող անկուսակցական ազգայիններուն՝ պաշտպանել ազգային ընդհանրական շահերը, օրինակ՝ հայ երեսփոխաններու թիւը, 3) պահանջել հայ թեկնածուներէն յանձնառութիւն հայ ազգային ընդհանրական շահերուն եւ Պատրիարքարանի առանձնաշնորհումներուն պաշտպանութեան կապակցութեամբ³⁷:

ՊԱՅՔԱՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԺԱԿԱՏՆԵՐՈՒ ՅՍՏԱԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ինչպէս կ'ակնկալուէր, ընտրապայքարը հիմնականին մէջ իրար դէմ կը հանէ իշխանութեան վրայ գտնուող՝ Իթթիհատ, եւ ընդդիմադիր՝ Իթիլաֆ կուսակցութիւնները³⁸: Երկու մեծ կուսակցութիւնները ճիգ չեն խնայեր ազգային փոքրամասնութիւններն ու աւելի փոքր կուսակցութիւնները իրենց շուրջ համախմբելու համար: Մամուլի էջերը կը լեցուն այս ուղղութեամբ տարուող քարոզարշաւի նիւթերով: Իթիլաֆական Թաշկիլէդ թերթը կոչ կ'ընէ հայերուն՝ իրենց ազգային շահերէն ելած, միանալ Իթիլաֆին³⁹: Իթթիհատական Ժէօն Թիւրքը կը գտնէ, որ ազգային փոքրամասնութիւնները՝ իրենց շահերէն մեկնած, պէտք է վստահին Իթթիհատին⁴⁰: Սթամպուլ թերթը կը գտնէ, որ յոյներուն մօտ կը նկատուի որոշակի միասնականութիւն եւ որ անոնք պիտի քուէարկեն Իթթիհատին դէմ, մինչդեռ հայերուն մօտ նման միասնութիւն չ'երեւիր: Ազատամարտ կը հաստատէ այս նկատողութիւնը եւ ասոր մէջ տարօրինակ ոչինչ կը գտնէ⁴¹: Օսմանեան Սոցիալիստական կուսակցութիւնը⁴² կոչ կ'ընէ բոլոր սոցիալիստներուն քուէարկել ի նպաստ Իթիլա-

Ֆին: Սոցիալիստական ինտերնացիոնալի անդամ ՀՅԴ-ի պաշտօնաթերթը կը գրէ, թէ նման կուսակցութեան մը գոյութեան եւ անոր ղեկավարութեան մասին լուր չունին⁴³: Սթամպուլ կը գրէ, թէ Իթթիհատ-ՀՅԴ համաձայնութիւնը արդէն գոյացած է եւ Իթթիհատ պիտի պաշտպանէ 6-7 «թումրի/թէճի» հայերու թեկնածութիւնը⁴⁴: Այս լրատուութիւնը թարգմանաբար տուող Ազատամարտ կը գրէ, թէ բանակցութիւնները տակաւին աւարտած չեն, իսկ «Գալով Երեսփոխաններու թիւին, բանակցութեանց ընթացքին այդ մասին որեւէ խօսք չէ եղած որովհետեւ ՀՅԴ-աշնակցութիւնը ամէն բանէ աւելի նկատի ունի հայ ժողովուրդի կենսական պահանջներուն խնդիրը»⁴⁵:

Թաշկիրլէզ՝ «Հայերը, Դաշնակցութիւնը, Իթթիհատը եւ Իթիլաֆը» յօդուածին մէջ, անգամ մը եւս կը գտնէ թէ հայերը՝ իրենց ազգային շահերէն մեկնած, պէտք է Իթիլաֆին հետ ըլլան եւ ո՛չ թէ Իթթիհատին: Ազատամարտ, Թաշկիրլէզի խմբագրապետ եւ երեսփոխան Լուսֆի Ֆիքրի պէյի գրչին պատկանող այս յօդուածէն լայն մէջբերումներ կատարելէ ետք, համաձայն չի գտնուիր յայտնուած միտքին ու կը գրէ. «Այս երկրին սահմանադրութեան իսկապէս նեցուկ ըլլալիք եւ վստահելի պետական կուսակցութիւնը՝ հակառակ իր ծանօթ այլեւայլ թերութիւններուն Իթթիհատ-Թերաքքըն է»⁴⁶:

Այս հարցին շուրջ Ազատամարտի եւ Թաշկիրլէզի (որ շարաթ մը ետք կառավարութեան կողմէ կը խափանուի եւ լոյս կը տեսնէ Թաամինէթ անուանով) ծայր կ'առնէ բանավէճ մը, որուն կը ներգրաւուի ու Ազատամարտի տեսակէտերը կը պաշտպանէ Ժէօն Թիւրքը⁴⁷: Այս կապակցութեամբ Ազատամարտի յօդուածները թարգմանաբար կ'արտատպուին Իթթիհատական Թանին եւ Թերճիւման թերթերուն կողմէ, ակներեւաբար հոն տեղ գտած Իթթիհատին ի նպաստ միտքերուն պատճառով⁴⁸:

Յունուարի վերջաւորութեան, ՀՅԴ պաշտօնապէս կը տեղեկացնէ, թէ Յունուար 28էն սկսած են ՀՅԴ-Իթթիհատ բանակցութիւններ, որոնք կ'ընթանան յաջողութեամբ, թէ՛ այդ հանդիպումներուն ՀՅԴ ներկայացուցած է յուշագիր մը՝ հայկական նահանգներու բարեկարգութեան, հողային հարցին, ինչպէս նաեւ ազգային ու պետական այլ կենսական պահանջներու վերաբերեալ: Այս լրատուութիւնը կատարող Ազատամարտ, զարմանք կը յայտնէ, որ կարգ մը թերթերու համաձայն Ազգային Երեսփոխանական Ժողովի խմբակցութիւններու եւ կուսակցութիւններու ներկայացուցիչներէն ծնունդ պիտի առնէ «Համազգային Մարմին» մը՝ ընտրապայքարի հարցերով զբաղելու համար: Թերթը կը գտնէ թէ նման մարմնի մը կազմութիւնը կը հակասէ նախապէս առ-

նուած այն որոշումին՝ ըստ որուն Պատրիարքարանը պէտք է հեռու մնայ ընտրական հարցերէն⁴⁹։

Նոյն օրը ժէօն Թիւրք «ՀՅԴաշնակցութիւնը եւ Հնչակեան Կուսակցութիւնը» վերնագրին տակ կը գրէ, թէ Սալոնիկի Աշխատաւորական Ֆետերացիայի (ՍԱՖ)⁵⁰ ղեկավարներէն Տիմիդար Վլախովի միջնորդութեամբ, բանակցութիւններ սկսած են նաեւ ՀՅԴի եւ ՄԴՀԿի միջեւ։ Թերթը կը գտնէ, որ եթէ այդ բանակցութիւնները յաջողութեամբ աւարտին, ապա ընտրութիւններուն հայերու մասնակցութեան հարցը կը լուծուի, որովհետեւ այդ երկու կուսակցութիւնները կը կազմեն հայ ժողովուրդի հիմնական ոյժը։ Ազատամարտ կ'առարկէ ու կը գտնէ, թէ «Ընտրական պայքարին մասին Դաշնակցութեան եւ Հնչակեան կուսակցութեան միջեւ համերաշխ գործակցութեան մը ձեռնարկը կը բխի ՀՅԴաշնակցութեան Չ. ընդհանուր ժողովին⁵¹ մէջ տրուած մէկ որոշումէն եւ ոչ թէ հետեւանքն է առանձնապէս Պրն. Վլախովի նախաձեռնութեան, որ վերոյիշեալ որոշումին նպաստած է իր ջանքերով»⁵²։

ՀՅԴ-ՄԴՀԿ բանակցութիւնները արդիւնք չեն տար։ Ըստ Սապահ Գիւլեանի, ՀՅԴի ներկայացուցիչները կը վստահեցնեն թէ Իթթիհատը խոստացած է 20 հայ երեսփոխան, նաեւ՝ ընդունած Հայաստանի ինքնավարութեան գաղափարը⁵³։ Երկար վիճաբանութիւններէ ետք, կ'որոշուի Իթթիհատին ներկայացուելիք հայ թեկնածուներուն անունները բաժնել այսպէս.՝ ՀՅԴ՝ 9, ՄԴՀԿ՝ 8, անկուսակցական՝ 3, այն պայմանով, որ անկուսակցական թեկնածուներուն անունները ՀՅԴն պիտի տայ եւ ՄԴՀԿը այդ մասին պիտի չառարկէ։ Ինքնավար Հայաստանի մասին հնչակեանները կ'ուզեն ունենալ Իթթիհատի պաշտօնական եւ կնքուած համաձայնութիւնը։ ՀՅԴ ներկայացուցիչները այդ չեն կրնար բերել եւ բանակցութիւնները կ'ընդհատին⁵⁴։ Շատ հաւանական է, որ հարագատ մնալով իր հակաիթթիհատական կեցուածքներուն, ՄԴՀԿը արդէն իսկ որոշած էր ընտրութիւններուն Իթթիհատին հետ չդաշնակցիլ եւ այն վերածել Իթթիհատի դէմ պայքարի միջոցի մը։ Միւս կողմէ նաեւ, Գիւլեանի տուած երեսփոխանական ակտներու վերոյիշեալ բաժանումը, խոտոր կը համեմատէր ՀՅԴ Արեւելեան Բիւրոյի կողմէ ՀՅԴ Արեւմտեան Բիւրոյին յղուած 1912 Փետրուար 2 թուակիր նամակի այն առաջարկին, ուր կը խօսուի ՄԴՀԿին միայն 1-2 երեսփոխանական ակտով յատկացնելու մասին (նոյն նամակին մէջ կը մերժուի Ազատական խմբակցութեան երեսփոխան տալ եւ համաձայնութիւն կը տրուի կաթոլիկ եւ աւետարանական համայնքներուն յատկացնելու մէկական ա-

թող)⁵⁵։ Այլապէս ալ, ՀՅԴ-ՄԴՀԿ բանակցութիւններուն ընթացքին կատարուած երեսփոխանական ակտներուն բաժանումը, ընդհանրապէս չէր համապատասխաներ իրականութեան, որովհետեւ, ինչպէս ստորեւ պիտի տեսնենք, Իթթիհատ երբեք ալ համաձայն չ'ըլլար հայութեան 20 ակտոս յատկացնելու մտքին։

Կը ձախողի նաեւ Համազգային Մարմնի ժողովը, որուն հանդէպ, ինչպէս տեսանք, ՀՅԴ ի յառաջագունէ ժխտական կեցուածք որդեգրած էր։ ՀՅԴն ժողովին չի մասնակցիր։ ՄԴՀԿի ներկայացուցիչ Մեծն Մուրատ կը գտնէ, որ ժողովը կը հակասէ այն որոշման, ըստ որուն Պատրիարքարանը ընտրութիւններուն գործօն դեր պէտք չէ ունենալ։ Ան կ'առաջարկէ նաեւ, որ Կեդրոն խմբակցութիւնը ինքզինք կուսակցութիւն հռչակէ եւ միւս հայ կուսակցութիւններուն նման տանի ընտրական աշխատանք⁵⁶։ Ժողովը կը յետաձգուի եւ կ'որոշուի յաջորդ նիստին հրաւիրել նաեւ ՀՅԴն։ Քանի մը օր անց գումարուած ժողովը եւս կը ձախողի։ Կը պարզուի, որ ներկաները ընդառաջած են անձնական հրաւերներու եւ անոնք իրենց պատկան կուսակցութիւններէն համապատասխան լիազօրութիւններ չունին...։ Ժողովը կը յետաձգուի եւ կ'որոշուի յաջորդ նիստին հրաւիրել աւելի մեծ թիւով ազգայիններ⁵⁷։

Փետրուար 5ին, Ազգային Երեսփոխանական Ժողովի Ազատական խմբակցութիւնը կ'որոշէ ընտրութիւններուն մասնակցիլ Իթթիհատին եւ Դաշնակցութեան հետ ու իր կողմէ թեկնածուներ կ'առաջադրէ Հալաճեանը, Գրիգոր Զօհրապը, Ստեփան Գարայեանը, Տիրան Երկանեանը, Սմբատ Բիւրատը, Սմբատ Քեթիպեանը, Հմայեակ Խոսրովեանը եւ Յակոբ Պահրին⁵⁸։

Փետրուար 7ին կը կնքուի Իթիլաֆ-Հնչակեան համաձայնութիւնը, զոր ՀՅԴն հրապարակայնօրէն կը քննադատէ⁵⁹։

Փետրուար 13ին կը կնքուի Իթթիհատ-ՀՅԴ ընտրական համաձայնագիրը։ Բանակցութիւններուն ընթացքին ՀՅԴ Արեւմտեան Բիւրօն կը պահանջէ հայութեան յատկացնել 23 երեսփոխանական ակտոս։ Իթթիհատ համաձայն չի գտնուիր։ Կ'որոշուի հայութեան տրուելիք ակտներուն շուրջ բանակցութիւնները շարունակել յետագային։ Խօսակցութեան նիւթ կը դառնայ նաեւ համաձայնագրին հրապարակման ձեւը, որովհետեւ «Իթթիհատ վստահ էր, որ ընդդիմութիւնը (Իթիլաֆը), պիտի օգտագործէ այս համաձայնագիրը մոլեռանդ իսլամները Իթթիհատին դէմ գրգռելու համար»⁶⁰։

Համաձայնութենէն ետք, ՀՅԴ մամուլին մէջ կտրուկ ձեւով կ'աճի Իթթիհատին ի նպաստ քարոզչութիւնը։ «Օսմանցիացնել» վերնագրին

տակ, Ազատամարտ թարգմանարար կու տայ *Թանինի* համանուն յօդուածը, որուն միտք բանին այն էր որ օսմանացման քաղաքականութեան տակ թաքնուած թրքացումի քաղաքականութիւն չկայ: Ազատամարտ իր կողմէ կ'եզրակացնէ. ««Թանին» կ'եզրակացնէ ուրեմն թէ «օսմանցիացնելու» մասին շրջաբերութեան հանուած զրոյցներն ու իրարանցումը՝ բոլորովին անհիմն են եւ անտեղի»⁶¹:

Ազատամարտ կ'արտատպէ նաեւ *Թանինի* «Իթթիհատը Ի՞նչ Ըրաւ» յօդուածաշարքը⁶², որ այլ բան չէր քան Իթթիհատի քառամեայ քաղաքականութեան գովերգումը: Նոյն օրերուն ՀՅԴ Արեւելեան Ամերիկայի օրկան *Հայրենիքը*, հայութեան մօտ Իթթիհատին հանդէպ հակակրանքը մեղմելու ճիգին մէջ քիչ մը յառաջ երթալով, կը գրէ. «Ամէն չարիքի տակ բարիք կայ պահուած խօսքը իրականութեան երանգ կը ստանայ Ատանայի համար: Կոտորածը իր շատ տխուր հետեւանքներուն հետ, միխթարական կողմեր ալ երեսն բերաւ, անիկա շառաչիւն ապտակ մըն էր տրուած համայնքի մը, որ ապուշ թմբիւրի մատնուած առ յաւետ մահանալու անվրէպ վտանգին առջեւ կը գտնուէր: Այդ ուժանակի ցնցումին կը պարտինք թերեւս մեր այսօրուան կենսատու արթնութիւնը. առանց այդ հարուածին, գուցէ, մենք շարունակէինք մեր վտանգաւոր մրափը, խորթացումի կամ ծուլումի սահուն գառիթափին վրայ»⁶³:

Պոլսոյ ՄԴՀԿ պաշտօնաթերթ *Նոր Աշխարհ* օրաթերթը մէջբերումներ կատարելէ ետք այդ յօդուածէն, քմծիծաղի կ'ենթարկէ արտայայտուած տարօրինակ տեսութիւնը ու կը գրէ. «Ալ լաւ չէ՞ք ըներ երթալ Համիտին ձեռքն ալ պագնելու, որ բարեհաճեցաւ 300,000 հայեր կոտորել աւելի մեծ բարիք մը ընելով հայութեան...»⁶⁴:

Միւս կողմէ, *Նոր Աշխարհ* կը թանձրացնէ իր քննադատութիւնները Իթթիհատին հանդէպ ու կը գովէ Իթիլաֆը: Արսէն Կիտուր «Իթթիհատը Եւ Իթիլաֆը» յօդուածին մէջ կու տայ երկու կուսակցութիւններուն նախընտրական ծրագիրներուն բաղդատականը: Ըստ յօդուածագրին, 1) Իթթիհատ ընտրական տարիք կ'ընդունի 25 տարեկանը, իսկ Իթիլաֆ՝ 20ը, 2) Իթիլաֆ դէմ է պետական պաշտօնէութեան քուէարկութեան մասնակցելու իրաւունքին, մինչ Իթթիհատ կը պաշտպանէ այդ իրաւունքը, 3) Իթիլաֆ համաձայն է, որ նախակրթարաններուն մէջ ուսուցումը տրուի ազգային լեզուներով, իսկ Իթթիհատ դէմ է այդ գաղափարին, 4) Իթթիհատ կ'ուզէ զօրացնել խալիֆայութեան եւ սուլթանութեան հաստատութիւնները, իսկ Իթիլաֆ կ'ուզէ տկարացնել զանոնք, 5) Իթթիհատ դէմ է ապակեղրոնացման սկզբունքին, իսկ Իթիլաֆ կը պաշտպանէ ապակեղրոնացումը: Այս պատճառներով, ՄԴՀԿը դիր-

քորոշուած է ի նպաստ *Իթիլաֆին*՝ կ'եզրակացնէ *Կիտուր*⁶⁵։ Մարտ 5ին ընդդիմադիր թերթերուն մէջ լոյս տեսած *Իթիլաֆի* նախընտրական ծրագիրը, կը շեշտէր նաեւ Երեսփոխանական Ժողովէն ներս ազգային եւ կրօնական փոքրամասնութիւններուն յարաբերական ներկայացուցչութեան անհրաժեշտութիւնը⁶⁶։

Փետրուար 20ին, Բերայի Եսայեան Վարժարանի սրահին մէջ տեղի կ'ունենայ Համազգային մարմնի հրապարակային ժողովը, ուր՝ խուռներամ բազմութեան մը ներկայութեան, հայ կուսակցութիւններու, խմբակցութիւններու եւ համայնքներու ներկայացուցիչները պէտք է բացատրէին իրենց ընտրական քաղաքականութիւնները։ Հաւաքը կը վերածուի *Իթիլահատին* հետ կամ անոր դէմ ըլլալու ջղագրգիռ վիճաբանութեան։ Ազգային Երեսփոխանական Ժողովի նախագահ Գարայեան, որ նաեւ կը նախագահէր ժողովը, ՀՅԴի ներկայացուցիչներ Փափազեան եւ Ռուբէն Զարդարեան ու Ազատական խմբակցութեան ներկայացուցիչ Արամ Հալաճեան կը մեղադրեն ՄԴՀԿը, որ՝ *Իթիլահատին* ընդդիմանալով դուրս եկած է ազգային համերաշխութեան ուղեգիծէն։ ՄԴՀԿ ներկայացուցիչներ Գիւլեան եւ Գարեգին Կոզիկեան կը պատասխանեն. «Եթէ ձեզանով ներկայացող հայ ազգը համերաշխում է Իթիլահատի հետ երթալու, մենք, այդ աղետաբեր համերաշխութիւնը պատառոտում ենք. եւ դա կը լինի մեր կուսակցութեան պատիւը»⁶⁷։

Մեկնարանելով այս հաւաքը, *Թանին* կը գրէ, թէ հոն, ՄԴՀԿը քննադատուեցաւ *Իթիլաֆի* հետ իր դաշինքին համար եւ որոշուեցաւ միանալ *Իթիլահատին*, որովհետեւ հայութեան համար աւելի շահաւէտ է այդ⁶⁸։

Այս ժողովէն յետոյ «Համազգային ժողովը» կը լուծարուի։ Յաջորդող օրերուն Ազատամարտ կը տեղեկագրէ թէ, Խարբերդի, Բաբերդի, Երզնկայի, Կեսարիոյ, Արաբկիրի եւ չարք մը այլ վայրերու մէջ հնչակեանները կը խանգարեն ազգային միասնականութիւնը⁶⁹։

Հնչակեանները իրենց կարգին կը քննադատեն «Համազգային ընտրութիւններու տեսութիւնը», ըստ որուն, նպատակայարմար է, որ հայութիւնը ընտրութեան մասնակցի միասնական։ Գիւլեան, «Փարլամենտական Ընտրութիւնների Առիթով» յօդուածաշարքին մէջ կը գրէ. «Իթիլահատին հետ համաձայնութիւն գոյացնելուց յետոյ՝ համազգային ժողովի, ընդհանուր համերաշխութեան քղանցքի տակ մտնել, դա քողարկուած միջոց չէ՞ր իրենց տէր ու տիրական Իթիլահատին տանելու նաեւ նրանց, որոնք այդ համաձայնութիւնից դուրս էին մնացել՝ ամենայն իրաւամբ։ Պատմութիւնը համազգային շահերի անունով խօսող, ճա-

ռողմերին կռուփ ունէր տալիք եւ նա այդ կռուփը հասցրեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան բերանով եւ նրա միջոցով»⁷⁰:

Շարունակելով քննադատել Իթթիհատին հետ գործակցութիւնը, Գիւլեան իր «Ժամանակակից Խնդիրներ - Հակառակորդի Թէզը» յօդուածին մէջ նկատել կու տայ, որ Օսմանեան Կայսրութեան բոլոր փոքրամասնութիւններուն մէջ միայն հայ կուսակցութիւններն են, «որ, մասնաւոր ձգտում ցոյց տուեցին Իթթիհատ Թերազը Կուսակցութեան հետ գործակցելու, - ու կ'եզրակացնէ, թէ՛ - սա պատմական, հասարակական մի երեւոյթ է մասնաւոր ուշադրութեան արժանի»⁷¹:

Իր քննադատութիւններուն մէջ անդրադառնալով նաեւ Իթթիհատի հետ ընտրական գործակցութիւնը ջատագովողներու այն տեսակէտին, թէ՛ Իթթիհատ հայերուն հանդէպ ունի լաւ տրամադրութիւն եւ միայն պայմանները թոյլատու եղած չեն, որ ան գործնականացնէ իր տրամադրութիւնները, Գիւլեան կը գրէ. «Իթթիհատը եթէ ուզէր հայ ժողովուրդի վիճակը բոլորովին այլ կը լինէր Հայաստանի մէջ, քան եղաւ: Ու աւելցնենք, որ նրա դիրքը այսուհետեւ էլ այն կը լինի, գէթ Հայաստանում, իր խոշոր գծերի մէջ, ինչ որ եղաւ մինչեւ ցարդ: ...Հայաստանի վիճակը սրտին ունեցողը Իթթիհատին պախարակաց քուէ միայն կարող է տալ եւ ո՛չ թէ գործակցութեան յօժարութիւն»⁷²:

Ապա եզրափակելով իր յօդուածաշարքը, Գիւլեան կը գրէ. «Հայ ազգի իսկական շահերը կը թելադրեն Իթթիհատի դէմ ըլլալ: Մեր պարտականութիւնը այդպէս հասկցանք եւ նրա համար էլ դիրք բռնեցինք: Թէ ո՞րքան հեռատես եղանք եւ իրաւունք ունեցանք այդ դիրքը բռնելու, ուր որ ենք, դա մօտիկ ապագան ցոյց կու տայ, եթէ ներկան արդէն ցոյց չի տուել»⁷³:

Թանին, իր Փետրուար 21ի եւ Փետրուար 25ի թիւերուն մէջ, յաջորդաբար կը տեղեկագրէ թէ Ազգային Երեսփոխանական Ժողովի Ազատական խմբակցութիւնն ու ՎՀԿը որոշած են ընտրութիւններուն գործակցիլ Իթթիհատին հետ⁷⁴:

Փետրուար ամսու վերջաւորութեան, ՀՅԴՆ կը հրապարակէ իր ընտրական ծրագիրը՝ «Թուրքիոյ Մէջ Խորհրդարանական Գործունէութեան Համար»: «Փլաթֆորմը» կ'ընդգրկէ «ընդհանուր քաղաքական», «տեղական ինքնավարութիւններ» (ինքնակառավարումներ - Ե-Ճ-), «ազգային կրօնական եւ լեզուական իրաւունքներ», «հարկային-եկեւմտական», «հողագործ. եւ արդիւնաբերութեան զանազան միջոցներ», «հաղորդակցութեան միջոցներ», «բանուորական օրէնսդրութիւն», «զինուորագրութիւն», «աւատական մնացորդացներու վերացում», եւ

«դատ եւ արդարադատութիւն» բաժինները⁷⁵: Յաջորդ ամիս, ՄԴՀԿը եւս կը հրապարակէ իր ընտրական ծրագիրը: 18 գլուխներու տակ ամփոփուած ծրագիրը կ'աւարտի վերջաբանով մը, ուր կ'ըսուի. «Ազգային խնդիրներու նկատմամբ պաշտպանել բաղկացուցիչ ազգութիւններու բաղաքական լիակատար իրաւունքները: Ժխտել մէկ ազգի ստորադասումը միւսին: Ազգութիւնները որպէս պատմական անհատականութիւններ ազատօրէն զարգանալու, յառաջդիմելու ամեն պայմաններ պիտի ունենան, առանց որեւէ սեղմումի մէկ կամ միւսի կողմէ»⁷⁶:

Նախընտրական գոյգ ծրագիրներն ալ, յատկապէս՝ իրենց ընկերային բաժիններով, կը ներկայացնէին ժամանակաշրջանի ամենայառաջդիմական մտածողութիւնը, սակայն դժուար թէ գործադրելի ըլլային Օսմանեան Կայսրութեան պարագային: Ակներեւ էր, որ գոյգ ծրագիրներուն մէջ ալ, աշխատաւորութեան շահերու պաշտպանութեան բաժինները մեծապէս ազդուած էին Եւրոպայի սոցիալիստական կուսակցութիւններու ծրագիրներէն:

Փետրուար 29ին, Արշարունի Պատրիարքին ստորագրութեամբ, Ազգային Կեդրոնական Վարչութիւնը կը հրապարակէ «պաշտօնական շրջաբերական» մը, ուր կ'ըսուի, որ թէպէտ Քաղաքական Ժողովը որոշած է, որ Պատրիարքարանը գործօն մասնակցութիւն չբերէ ընտրութիւններուն, սակայն, որպէս «ազգային գործերու վերահսկիչ», Պատրիարքարանը կը յանձնարարէ իրեն ենթակայ մարմիններուն, որ 1) յարգուին ընտրական իրաւունքները, 2) ընտրական կաշառքներ տեղի չունենան, 3) արատաւոր անցեալ ունեցող եւ Երկրին (գլխազիրը բնագրին - Ե.Ծ.) վնասակար անձեր որեւէ ձեւով չհասնին երեսփոխանական աթոռին⁷⁷: Շրջաբերականէն պարզորոշ չ'երեւիր թէ Պատրիարքը ի՞նչ մտահոգութիւններէ ելլելով կարեւոր նկատած է յիշեալ չորս կէտերը:

Այս շրջաբերականի հիման վրայ, Ազգային Երեսփոխանական Ժողովը կը յանձնարարէ Քաղաքական Ժողովին որ վերահսկողութիւն սահմանէ ընտրութիւններուն վրայ: Այս նպատակով Քաղաքական Ժողովը կը կազմէ մարմին մը, որ կը կոչուի «Համերաշխական Ժողով»: Մարտ 21ին կը գումարուի Համերաշխական Ժողովի նիստը, որուն ՄԴՀ, ՀՅԴ, ՎՀ, ՀՍՌ կուսակցութիւններուն, Կեդրոն եւ Ազատական խմբակցութիւններուն կողքին կը մասնակցին նաեւ առաքելական, կաթոլիկ եւ աւետարանական համայնքներու ներկայացուցիչները: Այլ կուսակցութիւններու հետ դաշինքի մէջ մտած կուսակցութիւններու ներկայացուցիչներէն կը պահանջուի բացատրութիւններ տալ իրենց ընտրական քաղաքականութեան մասին: ՄԴՀ ներկայացուցիչ Յակոբ Արծ-

րունի (Յակոբ Աւետիսեան) կը գտնէ, որ ժողովը ուշացած է, որովհետեւ բ. կարգի ընտրողներու ընտրութիւնները, որոնք սկսած էին Ապրիլին, արդէն աւարտելու մօտ են: Ապա՝ մեկնարանելով իր կուսակցութեան կեցուածքը, կ'ըսէ. «Իթիհատին գործակցիլ՝ կը նշանակէ սրբագործել անոր քաղաքականութիւնը եւ ըսել իրեն, քու ամբողջ գործերդ գոհ ենք. շարունակէ ասկէ յետոյ ալ միեւնոյն ուղղութիւնդ: Եւ սա ա՛յն տեսակ ատեն մը՝ երբ ո՛չ մէկ հայ կրնայ ձեռքը խղճին դրած ըսել թէ՛ հայութիւնը գոհ է իր ներկայ վիճակէն: Նոյնիսկ իրեն գործակցողները ամէն օր իրենց թերթով կը նկարագրեն գործուած ոճիրներն ու անարդարութիւնները եւ զարմանալի կերպով կը յամառին գործակցիլ իրեն»:

ինչ կը վերաբերի Իթիլաֆին, ապա Ածրունիի համաձայն, ան «տեսականօրէն, համեմատաբար աւելի յառաջդիմական է»⁷⁸:

Նոյն ժողովին, ՀՅԴի ներկայացուցիչ Արշակ Վռամեան (Օննիկ Դերձակեան) մանրամասնօրէն եւ փաստերով կ'ապացուցէ բոլոր այն հաւաստիքները ու գործնական երաշխիքները, որ տուած է Իթիլաֆի հայ ազգի բոլոր օրինական պահանջներու իրագործումին համար⁷⁹:

Կեդրոն խմբակցութեան ներկայացուցիչ Դաւիթ Տէր Մովսէսեան կը գտնէ, որ Օսմանեան Կայսրութեան մէջ հայկական պահանջներ գոյութիւն չունին, որովհետեւ բոլորն ալ օսմանցիներ են: Անոր կը յիշեցուի, որ՝ որպէս հարստահարութեանց յանձնաժողովի⁸⁰ անդամ, ինք եւս ստորագրած է այն յուշագրին տակ, ուր կը խօսուի հայկական պահանջներու մասին: ՎՀԿի ներկայացուցիչ Լեւոն Լարենց կը յայտարարէ, որ իր կուսակցութիւնը որոշած է քուէարկել Իթիլաֆին «որովհետեւ ան աւելի ուժեղ է»⁸¹:

Կաթոլիկ համայնքին եւ Ազատական խմբակցութեան ներկայացուցիչները կը յայտարարեն, որ պիտի գործակցին Իթիլաֆին եւ ՀՅԴին հետ⁸²:

Կեդրոն խմբակցութեան եւ ՀՍԴԿի «ներկայացուցիչներ Տէր Մովսէսեան եւ Վահան Թէքեան նախ անվտառութիւն կը յայտնեն Դաշնակցութեան այդ մթին խոստումներուն»⁸³ եւ ապա կը փափաքին գիտնալ, որ Իթիլաֆին քանի՞ հայ ակնաբան խոստացած է ՀՅԴին: Նոր Աշխարհ թերթին համաձայն, այս հարցադրումէն ետք, Վռամեան՝ խիստ բարկացած ձեւով, կ'ըսէ. «Դուք այլանդակ մտքեր կը յայտնէք, ձեզ թոյլ չենք տար այդ յանդգնութեան, ով կ'ըլլաք որ քոնքրովի (վերահսկողութեան) իրաւունք ունենալ կը կարծէք. Դաշնակցութիւնը իր ուժով ամէն ինչ կրնայ ընել»⁸⁴:

Տարբեր թերթերու համաձայն, ժողովը կ'աւարտի տարբեր ձեւերով՝ ըստ Նոր Աշխարհին, ժողովը կը փոթորկի՝ սակայն, ըստ Ազատամարտին, ժողովը փոթորկոտ աւարտ չ'ունենար, այլ «նշաններ կան ենթադրելու որ կեդրոն-ռամկավարներն ալ վերջ ի վերջոյ պիտի ճշդեն իրենց դիրքը ի նպաստ Իթքիհատին, որով բոլոր կուսակցութիւններն ու խմբակցութիւններն ալ պիտի համաձայնին յառաջիկայ ընտրական պայքարին մէջ բացառութեամբ հնչակեաններուն»⁸⁵:

Յաջորդ օր, Քաղաքական ժողովի նիստին, Կեդրոն խմբակցութեան ղեկավար Տէր Մովսէսեան փորձ կ'ընէ վերարժարձել ընտրութիւններու մասնակցութեան հարցը: Կ'առարկեն, որ Պատրիարքարանը գործօն մասնակցութիւն պիտի չունենայ երեսփոխանական ընտրութիւններուն: Նոյն օրը, Կեդրոն խմբակցութիւնը հարցը կը ներկայացնէ նաեւ Ազգային Երեսփոխանական ժողովին: Յառաջ կու գան վէճեր եւ իրարանցում: Կ'որոշուի ընտրութիւններուն ժամանակ ո'ր կուսակցութեան կողքին դիրքորոշուելու հարցը յետաձգել յաջորդ նիստին⁸⁶:

Մարտ 26ին, Կեդրոն խմբակցութիւն-ՀՍՌԿ համախմբումի ներկայացուցիչներ Յակոբ Եսայեան եւ Թէքէեան ՀՅԴին կը յայտնեն, որ որոշած են գաւառներու իրենց համախոհները ազատ ձգել քուէարկութեան մասնակցելու՝ տեղական պայմաններէն ելած: Պոլսոյ պարագային, անոնք իթքիհատին պիտի առաջարկեն իրենց ներկայացուցած մէկ թեկնածուին անունը ներառնել ընտրացանկ, որուն հիման վրայ պիտի կայացնեն համապատասխան որոշում: ՀՅԴ կը պատասխանէ, թէ այս հարուած մըն է հայ ժողովուրդի միասնականութեան, որուն հետեւանքներուն համար պատասխանատու կը մնան Կեդրոն խմբակցութիւնն ու ՀՍՌԿը⁸⁷: Գաւառներու իր համախոհները ազատ ձգելու մասին ՀՍՌԿը հանդէս կու գայ նաեւ պաշտօնական յայտարարութեամբ⁸⁸:

Մարտ 29ի Ազգային Երեսփոխանական ժողովին կը կարդացուի Քաղաքական ժողովի զեկոյցը, ուր կ'ըսուի, թէ Համերաշխական ժողովի գործունէութիւնը արդիւնաւէտ եղած չէ, որովհետեւ ընտրութիւնները արդէն ընթացքի մէջ են: Քաղաքական ժողովը կ'առաջարկէ, որ Պոլսոյ եւ գաւառներուն համար կազմուի ընտրելիներու ցանկ մը եւ ղրկուի առաջնորդարաններուն ու թաղական խորհուրդներուն: Տէր Մովսէսեան կ'առաջարկէ արտօնել Պատրիարքին, որ ազգին անունով ղեկավարէ ընտրական գործերը: ՀՅԴ ներկայացուցիչներ Վռամեան, Ատոմ (Յարութիւն Շահրիկեան) եւ Զարդարեան բոլուն կերպով կը հակազդեն այս առաջարկին: Զարդարեան կը գտնէ, թէ այս ձեւով ժողովը կը ստիպէ Պատրիարքը դուրս գալ իր չէզոք դիրքէն: Թէքէեան կը պա-

տասխանէ. «Կառավարութիւնը այս ընտրութեանց մէջ որչափով որ «չէզոք» է, այդ չափով ալ պատրիարքը «չէզոք» թող ըլլայ»⁸⁹:

Ժողովը կը վերածուի ամուլ վիճարանութիւններու եւ կ'աւարտի ապարդիւն:

Ապրիլ 1ին, Համերաշխական Ժողովը կը գումարէ նիստ մը եւս, որուն կը մասնակցին Կեդրոն խմբակցութիւնը (Խոճասարեան, Սուին, Օհանեան), Ազատական խմբակցութիւնը (Ս. Գարայեան, Ա. Հալաճեան), Կաթոլիկ համայնքը (Մարտիկեան, Ոսկեան, Մէնէճեան), աւետարանական համայնքը (Յ. Շահպազ), ՀՅԴն (Փափագեան, Վառամեան), ՎՀԿը (Լարենց), եւ ՀՍՌԿը (Թէքէեան): Ժողովը կ'որոշէ քուէարկել ի նպաստ Իթիհատին, ինչպէս նաեւ. -

1. Ընտրուած հայ երեսփոխաններուն պարտադրել. -

ա. սահմանադրութեան շրջագիծէն ներս ապահովել բաղկացուցիչ ազգերու հաւասարութիւնը:

բ. պաշտպանել Պատրիարքարանի առանձնաշնորհումները:

գ. աշխատանք տանիլ որ ազգային իրաւունքներուն համապատասխան լուծուին հողային հարցը, կրթական հարցերը եւ հայարնակ նահանգներու բարեկարգութեան խնդիրը:

2. Այս յանձնառութիւնները ստանձնող թեկնածուները հռչակել ազգային ընտրելիներ եւ ազգային իշխանութիւններուն ու կուսակցութիւններուն միջոցով աշխատանք տանիլ անոնց ընտրութիւնը ապահովելու համար⁹⁰:

Որոշումին տակ կը ստորագրէ նաեւ Թէքէեան, որ սակայն կը յայտնէ թէ իր կուսակցութիւնը վերջնական պատասխան կու տայ երեք օր ետք:

Այս որոշումէն ետք, Համերաշխական Մարմինէն բխած պատուիրակութիւն մը այցելութիւն կու տայ Իթիհատի Կեդրոնատեղին եւ բանակցութիւններ կը սկսի հայ ժողովուրդի իրաւունքներուն եւ հայութեան տրուելիք երեսփոխանական աթոռներուն շուրջ⁹¹:

Մանգումի Էֆֆիար թերթը, իր Ապրիլ 10ի թիւին մէջ, գոհունակութեամբ կ'ընդունի հայ կուսակցութիւններուն Իթիհատին քուէարկելու լուրը եւ գայն կը գտնէ. «Չորս տարուայ սահմանադրական շրջանի ամէնէն ոգետրիչ արարքը»⁹²:

Թանինի Ապրիլ 11ի թիւին համաձայն, Արշարունի Պատրիարք, յայտարարութեան մը մէջ կ'ըսէ, թէ Իթիլաֆը նոր կուսակցութիւն մըն է եւ անոր անդամները ունին ծայրայեղական տեսակէտեր, մինչ Իթիհատ-

տը իշխանութեան վրայ գտնուող կուսակցութիւն է եւ կարելի է վստահիլ անոր⁹³ :

ՄԴՀԿ բուռն կերպով կը քննադատէ Իթթիհատին քուէարկելու որոշումն ու անոր հետ բանակցութեան սեղան նստողները: Գիւլեան՝ իր «Աթոռամարտութիւն» յօդուածին մէջ երեսփոխանական հայ աթոռներուն շուրջ Իթթիհատին հետ սակարկութեան նստողները կ'որակէ «ռայայի հոգեբանութեամբ ծնած մեծցածներ»⁹⁴:

Կիտուր՝ «Իթթիհատը եւ Ազգային ճիւղները» յօդուածին մէջ, կը ծաղրէ ազգային ցաւերէ ճառողները, որոնք Իթթիհատին քուէարկելով կ'ուզեն «փափուկ թիկնաթոռներ գրաւել Երեսփոխանական Ժողովին մէջ»⁹⁵:

Կոզրկեան՝ իր «Միշտ Պատնէշին Վրայ» յօդուածին մէջ, կը մեղադրէ խօսքով եւ գրիչով Իթթիհատը քննադատողները, որոնք գործնական պահուն կը դաշնակցին անոր հետ եւ այս ձեւով «կը լզեն թքածնին: ... Բայց այս ամէնը կու գան ու կ'երթան, իսկ վաղուան պատմութիւնը կու տայ իր անկողմնակալ, անկաշառելի դատավճիռը: Եւ մենք չենք որ սեւերես պիտի ըլլանք անոր առջեւ»⁹⁶:

Ընտրական ճակատներու յստակացումէն ետք, ՀՅԴ կը հրապարակէ իր ընտրական կարգախօսը. «ԳՈՐԾԱԴՐԵՑԷՔ ՁԵՐ ՔՈՒԷԻ ԻՐԱԽՈՒՆՔԸ, ԶԵՐ ՔՈՒԷՆԵՐԸ ՏՈՒԷՔ ԻԹԹԻՀԱՏԻ ԵՒ Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՆ»⁹⁷:

Երկու օր անց սակայն, ՀՅԴ կը փոխէ իր կարգախօսը եւ հրապարակ կը հանէ նոր մը. «ԳՈՐԾԱԴՐԵՑԷՔ ՁԵՐ ՔՈՒԷԻ ԻՐԱԽՈՒՆՔԸ, ՔՈՒԷԱՐԿԵՑԷՔ Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ»⁹⁸: Այս լոգունգը, մինչեւ ընտրութիւններուն աւարտը, կը մնայ անփոփոխ:

Երկու լոգունգներուն միջեւ եղած տարբերութենէն կարելի է ենթադրել, որ ՀՅԴ խուսափած է երկրորդ լոգունգին մէջ Իթթիհատի անունը նշելէ՝ անոր հանդէպ եղած ժխտական տրամադրութիւնները չգրգռելու, ինչպէս եւ փորձած է թեկնածուներուն վրայէն հանել միայն ՀՅԴի թեկնածուն ըլլալու տպաւորութիւնը՝ Համերաշխական Ժողովի իր գործակիցներուն զայրոյթը չչարժելու համար:

ՄԴՀԿ եւս կը հրապարակէ իր ընտրական կարգախօսը. «ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ, ՁԵՐ ՔՈՒԷՆ ՏՈՒԷՔ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՇԱՀԵՐՈՒՆ ՊԱՇՏՊԱՆ Ս.Դ.ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ, ԻԹԻԼԱՖԻ ԵՒ ՅՈՅՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԼՈՒԲԻ ԸՆՏՐԵԼԻՆԵՐՈՒՆ»⁹⁹:

ԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱԽ

Մամուլէն զատ, ընտրական քարոզարշաւի միւս ձեւը միթինկներն էին: Հայկական միջավայրին մէջ տեղի կ'ունենան բազմաթիւ միթինկներ, որոնք առաւելաբար կը կազմակերպուին ՀՅԴԻ եւ ՍԴՀԿԻ կողմէ:

Փետրուար 20ին, Ատապազարի մէջ հնչակեաններու կազմակերպած միթինկին ելոյթ կ'ունենայ Գիւլեան եւ կը քննադատէ ՀՅԴ-Իթիհատ դաշինքը: Նոյն օրը Սամսոնի մէջ կայացած միթինկի ընթացքին, Հնչակեան գործիչ Կորիւնը կը յայտարարէ, թէ ՍԴՀԿը պարտութեան մատնելու համար Իթիհատը համաձայնած է Իթիլաֆին հետ: Այս առիթով Ազատամարտ իր «Իթիլաֆօհնչակը Սամսոնի Մէջ» յօդուածով հարց կու տայ. «բայց ինչո՞ւ, ի՞նչ համոզումով, ի՞նչ հիմքով»¹⁰⁰:

Հակազդելու համար հնչակեաններու Ատապազարի միթինկին, Փետրուար 26ին նոյն վայրին մէջ, ՀՅԴԻ կազմակերպած միթինկին ելոյթ կ'ունենայ Գարեգին Խաթակ (Գարեգին Չազալեան): Բանախօսութենէն յետոյ ձայն կ'առնեն հնչակեան գործիչներ Ս. Ժիրայր (Սարգիս Նալպանտեան) եւ Գ. Վանիկ (Գեղամ Վանիկեան), որոնք ըստ Նոր Աշխարհին՝ «փաստացի ցոյց տուին կառավարական կուսակցութեան մտադրութիւնը բաղկացուցիչ ազգութիւններու հանդէպ եւ այդ մտայնութեան աւերները անցնող 4 տարուայ շրջանին»¹⁰¹:

Սկիւտարի մէջ ՀՅԴԻ կազմակերպած միթինկին կը բանախօսէ Վռամեան, որ «քուէլ վերջ Իթիհատին գնահատելի կողմերը, ըսաւ թէ մեր (հայութեան - Ե.Ժ.) շահը կը պահանջէ որ այս երկրին սահմանադրական կեանքը ամրապնդուի, երկիրը խաղաղի եւ մեր ժողովուրդը իր քայքայուած կեանքը վերաշինէ եւ միայն Իթիհատն է որ կրնայ ապահովել մեզ՝ ի նպաստ մեր այս ձգտումներուն»¹⁰²:

Շուրջ 15 օր անց նոյն բանախօսը միեւնոյն վայրին մէջ կը յայտարարէ. «Իթիհատին ու Դաշնակցութեան գործակցելու համար տրուած որոշումը կը ցուցնէ որ վերջապէս հայ ժողովուրդը սկսած է քաղաքացիական իմաստութեամբ գործել եւ հասկնալ թէ որոնք են իր բարեկամները եւ թէ որոնք կրնան գոհացում տալ իր պահանջներուն»¹⁰³:

Մարտ 3ին Այտրնի մէջ կայացած միթինկին կը բանախօսէ չրջանի Իթիհատի ակումբին նախագահ եւ թեկնածու Ուպետուլլահ էֆենտին: Ան իր ելոյթին մէջ կ'ըսէ, որ քրիստոնեաներու եւ իսլամներու միջեւ հաւասարութիւն գոյացնելու համար անհրաժեշտ է վերացնել պատրիարքութիւններուն առանձնաշնորհումները. հետոյ կ'աւելցնէ. «Հայ մեպոսները կ'ընտրենք մենք թուրքերս, մեր քուէովը, որովհետեւ հայերը միմիայն իրենց քուէովը հայ մեպոս չեն կրնար ընտրել, բայց ի՞նչ ը-

նենք որ իրենց թիւին համեմատութեամբ չ'ըլլար եղեր, երկրին օրէնքը այդպէս է»¹⁰⁴:

Տեղւոյն վրայ Ուպետուլլահ էֆենտին բուռն կերպով կը հակաճառէ շրջանի հնչակեան պատասխանատու, փաստաբան Հայկազուն Թապալեանը:

Ապրիլ 9ին, Գում Գարուի մէջ ՀՅԴի կազմակերպած միթինկին Զօհրապ կը յայտարարէ, որ հայերուն աջակցութիւնը իթթիհատին «քաղաքական իմաստութեան մէկ գեղեցիկ արտայայտութիւնն է»¹⁰⁵, - ու կ'աւելցնէ, - մենք (օսմանցիներս - Ե.Ժ.) 600 տարուայ ազգ ենք՝ մի քանի հարիւր վրանաբնակներէ յառաջացած»¹⁰⁶:

Նոյն միթինկին ընթացքին կը բանախօսէ նաեւ խաթակ որ կը գտնէ թէ թուրքերու հետ գործակցութեան ժամանակ սխալ է Ատանայի ջարդը հրապարակ նետել: Միթինկին ներկայ գտնուող հնչակեաններ կը հակաճառեն արտայայտուած տեսակէտերուն, որոնց, ըստ Ազատամարտին, բանախօսները կու տան «Ջախջախիչ» պատասխաններ¹⁰⁷:

Գիւլեան «Մարդիկ եւ Նրանց Արժէքը» յօդուածին մէջ կը քննադատէ Զօհրապի վերոնշեալ միտքը ու կը գրէ. «Օսմանեան պետութիւն եթէ կայ, Օսմանեան ազգութիւն չկայ. իսկ եթէ կայ, ապա դա ասել է թուրք ազգութիւն՝ ո՛չ աւելի, ո՛չ պակաս: «Հայ ազգ»ի ներկայացուցչի համար Օսմանեան պետութեան մէջ ո՛չ թէ մէկ ազգութիւն կայ, այլ մի քանի ազգութիւններ»: Յօդուածագիրը ապա հռետորական հարց կու տայ. «Սրա՞նք են որ փարլամենդ պիտի երթան»¹⁰⁸:

Մարտ 11ին Վանի մէջ կայացած ՄԴՀԿի եւ ՀՍՌԿի միացեալ միթինկին, ՄԴՀԿի կողմէ ելոյթ կ'ունենան Արտաշէս Սոլախեան եւ Արրահամ Բրուտեան, իսկ ՀՍՌԿի կողմէ՝ Արտակ Դարբինեան: (ՀՅԴի հետ ընտրական կարգ մը անհամաձայնութիւններու պատճառով՝ որոնց պիտի անդրադառնանք քիչ ետք, ՀՍՌԿը վերատեսութեան ենթարկած էր ՀՅԴի հետ համագործակցելով ամբողջապէս իթթիհատին քուէարկելու իր նախնական որոշումը): Քօսք կ'առնեն նաեւ միթինկին ներկայ գտնուող ՀՅԴ գործիչներ Գարմէնը (Տաճատ Մելքոնեան), Իշխանը (Նիկոլ Օտապաշեան), Սարգիսը (Սարգիս Բարսեղեան), Մաքսապետեանը եւ Բարունակ Կապուտիկեանը: Միթինկը, ըստ Նոր Աշխարհի, կը վերածուի տուրուղմբոցի, որուն կը միջամտէ ոստիկանութիւնը¹⁰⁹:

Ապրիլ 8ին Սկիւտարի ՀՅԴի միթինկին բանախօս է. Ակնունի (Խաչատուր Մալումեան) կը բացատրէ, թէ հայերուն փափաքը Երեսփոխանական Ժողովին մէջ 18-20 անդամ ունենալ՝ արդար է: Ան, իթթիհատի դէմ բողոքները կը նկատէ սին տրտունջքներ: Նոյն միթինկին Զօհրապ

կը գտնէ, որ Իթթիհատը «յոյս կը ներշնչէ թէ պիտի կարենայ յարգել իր խոստացածը»¹¹⁰:

ԸՆՏՐԱԿԱՆ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1912ի Օսմանեան երեսփոխանական ընտրութիւնները արդի թուրք պատմագրութեան մէջ¹¹¹ կը յիշատակուին որպէս «գաւազանի ընտրութիւններ» (սոփալի սեչիւ) կամ «ծեծի ընտրութիւններ» (տալալլի սեչիւ)՝ աշխարհն որ շատ էին կատարուած բռնարարքները, ծեծն ու ապօրինութիւնները:

Իթթիհատ իր հակառակորդներուն հանդէպ ջախջախիչ յաղթանակի հասնելու եւ երկրին մէջ իր ամբողջատիրութիւնը հաստատելու համար ո՛չ մէկ միջոց կը խնայէ: Անօրինական այդ ձեւերուն առաջինը, ընտրապայքարին մէջ պետական միջոցներու օգտագործումն էր: Այս մասին Արծրունի՝ իր «Յաղթութեան Դրսերեւոյթը» յօդուածին մէջ, կը գրէ. «Տիրապետող կուսակցութիւնը՝ իր կոնակը տուած կառավարութեան, ամէն միջոց ներելի կը համարէ իր յաջողութեան համար: Պարզ է, որ այս տեսակ պայմաններու մէջ յաղթութիւնը պիտի մնայ դարձեալ Իթթիհատին կողմը»¹¹²:

Արծրունի՝ իր մէկ այլ՝ «Յաղթութիւն Թէ Պարտութիւն» յօդուածին մէջ, նշելէ ետք թէ նահանգապետերը, հարկահաւաքները, գաւառապետերն ու գիւղապետերը լծուած են ընտրապայքարին ու կը խոչընդոտեն քուէարկողներուն անկախութիւնը, կը նախազգայ թէ այս ձեւով ընտրողները «չպիտի կրնան յաղթանակի հանգիստ դափնիներու վայելքը ըմբոշխնել ... կ'ապրինք ու կը տեսնենք»¹¹³:

Իթթիհատականները իրենց ապօրինութիւնները թաքցնելու համար լուրջ ճիգեր չեն ալ գործադրեր: Կիրասոնի մէջ, Իթթիհատ-ՀՅԴ համատեղ միթինկին, երեսփոխան Հասան Ֆեհմի իր ելոյթին մէջ երկրէն ներս ընդդիմադիրներու գոյութիւնը վնասակար կը գտնէ ու կը յայտարարէ. «Փանի երկրին վարչային, զինուորական ուժերը մեր ձեռքերը կը գտնուին, պիտի շտապենք օգտուիլ ջնջելու համար անոնց հետքը, երբեք չպիտի ուզենք խտրութիւն դնել միջոցներու մէջ»¹¹⁴:

Սամսոնի կառավարիչ Մեհտի պէյ, որ կը ստանձնէ Իթթիհատի տեղւոյն ընտրամեքենային ղեկավարութիւնը, իր հրապարակային ելոյթներուն ընթացքին կոչ կ'ընէ քուէարկել ի նպաստ Իթթիհատի թեկնածուներուն, որովհետեւ «հակառակ պարագային... լաւ չ'ըլլար»¹¹⁵:

Գաւառային շրջաններուն մէջ ընտրութիւններուն վրայ իրենց ազդեցութիւնը կ'ունենան նաեւ համիտեան շրջանին հանրածանօթ դար-

ձած քրէական յանցագործներ, որոնք նախորդ տարիներուն վայելած էին իթիւհատական իշխանութիւններուն թողտուութիւնը: Բաղէշի մէջ, օրինակ, շէյխ Սալիտ Ալիի աւագակախութիւն տղաները բացայայտ ճնշումներ կը գործադրեն ի նպաստ իթիւհատի բ. կարգի ընտրելիներուն¹¹⁶:

Գիւլեան իր «Իթիլաֆ Վէ Հուրիէթ Կուսակցութեան Դերը» յօդուածին մէջ՝ շեշտելէ ետք, թէ իթիւհատի ընտրական յաղթանակը արհեստական, կեղծ ու երեւութական է, կ'աւելցնէ. «քաղկացուցիչ ազգերը նրա դէմ են, ո՛չ թէ նրա համար, որ նա թուրք կուսակցութիւն է, - երբեք. այլ նրա համար, որ նա իր գաղափարաբանութեամբ գալիս է այս երկրի մէջ եղող ազգերի ապագան փշրելու եւ ամէն ինչ թրքական, բացառապէս թրքական անելու: ... Եթէ կառավարական ուժը իր ետեւը չ'ունենար՝ Իթիհատի անկումն անխուսափելի էր»¹¹⁷:

Իշխանութեան լծակներու ապօրինի օգտագործման միւս ձեւը առանց լուրջ հիմնաւորումներու ընդդիմադիր գործիչներու ձերբակալութիւնն էր: Ապրիլի սկիզբը կը ձերբակալուին ՍԱՖի ղեկավարներ Վլախովը, Պենորէան ու Ֆետերացիայի 28 այլ գործիչներ: Այս կապակցութեամբ ՄԴՀԿ Վարիչ Մարմինն ու «Կայծ» Ուսանողական Միութիւնը բողոքագիրներ կը յղեն Ներքին Գործոց Փոխ-նախարար Թալաաթ փաշային եւ պետական այլ մարմիններու: Կարճ ժամանակ անց Սապանճիի մէջ կը ձերբակալուին Իթիլաֆի ղեկավարները եւ կ'ուղարկուին Իզմիթի բանտը: ՄԴՀԿ պատասխանատուներ այցելութիւն կու տան ձերբակալուած իթիլաֆականներուն¹¹⁸: Իթիլաֆական գործիչներ կը ձերբակալուին նաեւ Գոնիայի, Էսկիշեհիրի, Ամասիայի եւ այլ շրջաններու մէջ¹¹⁹: Կը ձերբակալուին նաեւ կարգ մը ընդդիմադիր թերթերու խմբագիրներ ու թղթակիցներ, որոնց շարքին Միգան թերթի տնօրէն Մուրատ պէյ, Սերպեստ թերթի տնօրէն Ռիֆաթ Մելանզատէ¹²⁰, Ալ Մուքթապաս թերթի խմբագիր Ահմէտ Քիւրտ Ալի, Ալ Իրֆան թերթի խմբագիր Ահմէտ Արիֆ Ալ Զէյն, Ալ Պալադ թերթի խմբագիր Մահմէտ Ալ Եաֆի եւ ուրիշներ: Ձերբակալուած ընդդիմադիրներուն մեծ մասը ազատ կ'արձակուի Ապրիլ 27ին, սուլթան Մեհմէտ Ե.ի գահակալութեան երրորդ տարեդարձին առիթով... երբ բ. կարգի ընտրութիւնները գրեթէ հասած էին իրենց աւարտին:

Ընտրութիւններու ընթացքին ծեծն ու խռչտանգումները կը դառնան սովորական երեւոյթներ: Էտիրնէի մէջ Իթիլաֆի թեկնածու տոքթ. Լիզա Թեւֆիք պէյ ընտրական միթինկի մը ընթացքին ծեծի կ'ենթարկուի: Այս կապակցութեամբ, իթիւհատին դաշնակից նկատուող Ազա-

տամարտ՝ իր «Մ՛հ, Այդ Չէ Յաջողութեան Ուղին» խմբագրականով, կը դատապարտէ դէպքը:¹²¹ Խոշտանգումի կ'ենթարկուի նաեւ Իթիլաֆի յայտնի գործիչներէն Նեճատի պէյը:¹²² Նոր Աշխարհ կը տեղեկագրէ, որ բռնարարքներու միջոցով ընտրական զեղծումներ կը կատարուին Իգմիրի, Պիլեճիկի, Խարբերդի, Կեսարիոյ, Պրուսայի, Ամասիոյ, Վեզիր Քէօփրիւլի, Կիրասոնի, Քիլիսի, Չարշամպայի, Իգմիրի մէջ եւ այլուր:¹²³

Իթիլաֆի ամէնէն զօրաւոր թեկնածուներէն նկատուող Լուիֆի Ֆիքրի, երբ մայրաքաղաքէն կը մեկնի իր ծննդավայրը Տերսիմ՝ իր ընտրապաշարը ղեկավարելու համար, կ'իմանայ թէ տեղւոյն իշխանութիւնները ընտրութեան թուականը յառաջ բերած են եւ այն արդէն տեղի ունեցած է:¹²⁴

Սկիւտարի մէջ տեղի ունեցած զեղծարարութիւններուն կապակցութեամբ, շրջանի ՄԴՀԿ մասնաճիւղը բողոքագիր մը կը յղէ Կեդրոնական Ընտրական Յանձնախումբին:¹²⁵ Քեմալի հայոց առաջնորդ Խաչատուր վարդապետ նոյնպէս, ընտրութիւններու ընթացքին տեղի ունեցող զեղծարարութիւններուն մասին ընդարձակ տեղեկագիր մը կը ղրկէ Պոլսոյ Պատրիարքութեան:¹²⁶ Նոր Աշխարհ կը տեղեկագրէ թէ Տրապիզոնի, Վանի, Սերաստիոյ մէջ եւ այլուր, իթիլահատականներուն կողքին դաշնակցականներ եւս կը մասնակցին բռնարարքներուն եւ զեղծումներուն:¹²⁷

Ամէն ձեւի ապօրինութիւններու դիմելէ յետոյ, Իթիլահատի գործակատարները նաեւ կը բեկանեն ընտրական այն տեղամասերուն արդիւնքները, որոնք ի նպաստ Իթիլահատին չէին: Պոլսոյ արուարձաններէն Առնաուտ Քէօյի մէջ, քաղաքապետարանի քննիչ յանձնախումբը կը բեկանէ Բ. կարգի ընտրութեան արդիւնքը, որ ի նպաստ Իթիլաֆին էր: Ընտրութիւնները կը վերակրկնուին եւ Բ. կարգի ընտրողներ կ'ընտրուին Իթիլահատի թեկնածուները:¹²⁸ Մեծ Արմտանի ընտրութեան արդիւնքը չեղեալ կը յայտարարուի եւ երեք Բ. կարգի հայ ընտրողներու թիւը կ'իջեցուի երկուքի:¹²⁹ Ընտրութեան արդիւնքներուն հետ բացայայտ խաղ կը կատարուի Ֆաթմայի, Սամսոնի, Արաբկիրի, Ակնի, Հաճրնի մէջ եւ այլուր:¹³⁰ Իթիլահատի այսօրինակ բռնարարքները քննադատելով, հնչակեան գործիչ Գազիկ Օզանեան՝ իր «Ընտրութիւն Թէ Անուանում» յօդուածին մէջ կը գրէ. «այս բարձրագոյ բռնութիւնները, որոնց ենթարկուեցան բոլոր ընդդիմադիր ազգութիւններն ու կուսակցութիւնները, եւ այն աչք ծակող զրկանքները, որոնք անխնայ կերպով բաժին հանուեցան տիրապետող կուսակցութեան անվստահութիւն յայտնող տարրերու եւ ճակատաբաց պայքարողի դիրքին մէջ կեցող

կուսակցութիւններուն... մնացին այնպիսի ջախջախիչ փաստեր, որոնք սահմանադրութեան պաշտպաններուն սխրագործութիւններու կորոզը պիտի կազմեն»¹³¹:

Ազատամարտ եւս, քննադատելով Իթթիհատի ապօրինութիւնները, իր խմբագրականին մէջ կը գրէ. «Այսօրուան փարլամենտը այլեւս Օսմանեան Կայսրութեան փարլամենտը չէ, այլ միայն Իթթիհատինը: Իթթիհատը յաղթեց. այդ մասին կասկած չկայ այլեւս: Սակայն ո՛չ թէ յաղթեց այնպէս, որ իր յաղթանակը կեանք բերէ երկրին, այլ այնպիսի յաղթանակ մը ունեցաւ, որմէ մեռելութիւն պիտի ծնի: Իթթիհատը յաղթեց. բայց այդպիսի յաղթանակ մը եւս, եւ Թուրքիան կորսուած է»¹³²:

ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԱՐԴԻՒՆՔԸ

Ընտրական սանձարձակ ապօրինութիւններու շնորհիւ, Իթթիհատ ձեռք կը բերէ Բ. կարգի ընտրողներուն բացարձակ մեծամասնութիւնը: Այսպիսով անոր կամքէն կախեալ կը մնայ նաեւ հայ երեսփոխաններու ընդհանուր թիւին ու անուններուն որոշումը: Նախքան ընտրութիւններուն աւարտը, Ժէօն Թիւրք թերթը կը նախատեսէր արդէն, որ եկող Երեսփոխանական Ժողովին մէջ ընդգլիմադիր ուժեր չըլլան: Անոր պատասխանելով Նոր Աշխարհ կը գրէ. «մարգարէ ըլլալու պէտք չկայ, կը կարծենք, գուշակելու համար, որ նոր Երեսփոխանական Ժողովը բացարձակապէս Իթթիհատական կազմ պիտի ունենայ. այդ մասին մենք տարակարծիք չենք մեր պաշտօնակիցին հետ: Ընտրական այդ աններելի եւ հակասահմանադրական գէնքերը, որոնք Իթթիհատի կողմէն կը կիրարկուին ընտրական պայքարին մէջ, ուրիշ արդիւնք չեն կրնար տալ»¹³³:

Բ. կարգի ընտրութիւններու ամբողջ ընթացքին եւ մինչեւ երեսփոխաններու վերջնական ընտրութիւնը, Իթթիհատին եւ անոր դաշնակից հայ կուսակցութիւններուն եւ խմբակցութիւններուն՝ յատկապէս ՀՅԴին միջեւ բանակցութիւնները կը շարունակուին, մասնաւորաբար հայ երեսփոխաններու թիւին շուրջ: Իթթիհատ պէտք ունէր առաւելագոյն թիւով Բ. կարգի ընտրողներու՝ իր ընդգլիմախօսներուն Երեսփոխանական Ժողով մուտքը արգիլելու համար. ան, միայն այսքանով պէտք ունէր հայերու քուէներուն եւ բնաւ մտահոգուած չէր Երեսփոխանական Ժողովին մէջ հայ երեսփոխաններու թիւին աճով: Թանին, տակաւին Փետրուարի սկիզբը, քննադատելով աւելի թիւով երեսփոխաններ պահանջող փոքրամասնութիւնները կը գրէր. «աւելի երեսփոխաններ կ'ուզենք պահանջը՝ երբ տարբեր եղանակով արտայայտել

ուզենք, պիտի ըսենք՝ «Ժողովին մէջ թուրք երեսփոխաններու թիւը թող նուազի»: Արդեօք այս խեղճ թուրքերուն յանցանքը ի՞նչ է որ ամէն կողմէ յարձակումի ենթակայ կ'ըլլան: Երկրին սահմանադրութիւն տուած ըլլալնի՞ն...»¹³⁴:

Իթթիհատ-ՀՅԴ համաձայնագիրէն ետք, **Իթթիհատ** կը շարունակէ մերժել հայութեան 23 աթոռ յատկացնելու **ՀՅԴ**-ի պահանջքը: Ան յօժար կ'ըլլայ հայութեան յատկացնել 13 աթոռ, մնացեալ 10 աթոռները ձգելով յաւելեալ բանակցութիւններու: **Իթթիհատ** կը խոստանայ նաեւ հայկական այլ կողմերու հետ բանակցութիւններ չվարել եւ այդ կատարել միայն **ՀՅԴ**-ի միջոցով¹³⁵: Աւելի ուշ, **Իթթիհատ** կը մերժէ նաեւ **ՀՅԴ** Արեւմտեան Բիւրոյի 18-20 հայ երեսփոխանի պահանջքը եւ կը պնդէ 13 երեսփոխանի իր առաջարկին վրայ¹³⁶: Միւս կողմէ, **Իթթիհատ**-ի էրզրումի կոմիտէն, **ՀՅԴ** Արեւելեան Բիւրոյի հետ իր ընտրական բանակցութիւնները կը ձգձգէ: Վերջինս, Արեւմտեան Բիւրոյի իր ընկերներուն ուղղուած նամակին մէջ, կ'առաջարկէ **Իթթիհատ**-ին հետ հայ երեսփոխաններու թիւին եւ ընտրաշրջաններուն մասին խօսիլ աւելի ճշգրիտ ու կը կատարէ հետեւեալ բաժանումը.՝ էրզրում՝ 2 հայ երեսփոխան, Վան՝ 2, Մուշ (Պիթլիս)՝ 2, Տիգրանակերտ (Տիարպեքիր)՝ 1, Տրապիզոն՝ 1, Սեբաստիա (Սվազ)՝ 1, Խարբերդ՝ 1, Կիլիկիա՝ 1, Կեսարիա՝ 1, Պոլիս՝ 1, Իգմիր՝ 1, Երզնկա՝ 1 եւ 3-5 յաւելեալ աթոռներ հայկական այլ կուսակցութիւններու համար¹³⁷: Այսինքն, ընդհանուր առմամբ 15 երաշխաւորուած եւ 3-5 յաւելեալ երեսփոխանական աթոռներ: **Իթթիհատ** կը համաձայնի հայերուն յատկացնել առաւելագոյնը 15 աթոռ, պատճառաբանելով կարգ մը շրջաններու մէջ իր մասնաճիւղերուն տկարութիւնը, ինչպէս նաեւ հայութեան աւելի աթոռներ տրուելու պարագան **Իթթիլաֆի** կողմէ որպէս հակաքարոզչութիւն ծառայեցնելու հաւանականութիւնը: Ընդ որում, **Իթթիհատ** կ'երաշխաւորէ միայն 13 հայերու ընտրութիւնը, իսկ Մարաշի եւ Մարզոլանի շրջաններուն մէջ կը խոստանայ միայն օգտակար դառնալ¹³⁸:

Հայերուն քիչ թիւով երեսփոխանական աթոռներ տալով, **Իթթիհատ** կ'ուզէր նաեւ անուղղակի կերպով ապացուցել հայերու քիչ թուաքանակը Կայսրութեան մէջ: Ընտրութիւններու առիթով **Իթթիհատ** կը հրատարակէ տուեալներ, ուր հայերու թուաքանակը խիստ նուազ կը ներկայացուի. օրինակի համար Տրապիզոնի նահանգի հայութեան թիւը կը նշուի 6000 հոգի, երբ իրականութիւնը, ըստ Գիւլեանի, անոր աւելի քան հնգապատիկն էր¹³⁹:

Երբ բ․ կարգի ընտրողները շրջանային իրենց նիստերուն մէջ կը սկսին կատարել երեսփոխաններուն ընտրութիւնները, պարզ կը դառնայ որ հայ երեսփոխաններուն թիւը Իթթիհատի տուած 13 երեսփոխանի խոստումէն ալ քիչ էր։ Այդ միայն 8ն էր։

Այս պարտութիւնը ՀՅԴ առաջին հերթին կը փորձէ բարդել Կեդրոն խմբակցութեան ուսերուն։ Վառամեան իր «Համերաշխութեան Ժողովին Շուրջը - Կեդրոնը Պառակտիչ Եւ Պատասխանատու» յօդուածին մէջ կը գտնէ, որ ակնկալուածէն աւելի քիչ թիւով հայ երեսփոխաններ ունենալու պատճառը Կեդրոն խմբակցութիւնն է, որ Իթթիհատին մօտ ՀՅԴն ամբաստանած է «պոմպաճի եւ անփանթոյ» ու պնդած, որ ազգը Կեդրոնին հետն է։ Յօդուածագիրը կը գտնէ, որ «Կեդրոնը իր եսամոլութեամբ եւ տիրելու մոլութեամբ յիմարացած, ո՛չ միայն հարուած մը տուաւ համերաշխութեան գործին, այլ վտանգեց նաեւ ընտրական գործը, որովհետեւ ան Իթթիհատին հետ խօսեցաւ ո՛չ թէ հայ աթոռներուն թիւին շուրջ, այլ միայն աթոռներ աղերսեց անորմէ»¹⁴⁰։

Ապրիլ 18ին, Պատրիարքարանը բողոքագիր կը յղէ Բ․ Դուռ, ուր՝ նշելէ յետոյ որ տոկոսային համեմատութեամբ հայերուն կը հասնի 20 աթոռ, 8 հայ երեսփոխաններու թիւին շուրջ իր բողոքը կը յայտնէ ու կը պահանջէ, որ «կարելոր միջոցներ տնօրինուին՝ զրկանքը դարմանելու համար, այլապէս հայութիւնը չպիտի կարենայ ընդունիլ որ այս պայմաններու մէջ ընտրուած քանի մը սակաւաթիւ ազգայինք՝ իբր հայ երեսփոխան կարենան բազմիլ Օսմանեան խորհրդարանին մէջ»¹⁴¹։

Ազատամարտ, ընդհանուր գիծերուն մէջ համաձայն ըլլալով հանդերձ բողոքագրին, կ'առարկէ անոր եզրակացութեան եւ այդ կը գտնէ «լրջութենէ եւ տրամաբանութենէ զուրկ»¹⁴²։

Յաջորդ օր, Իթթիհատի Կեդրոնական Վարչութեան անդամ, երեսփոխան Ահմէտ Նեսիմ պէյ կ'այցելէ Արշարունի Պատրիարքին, որ վերջինիս կ'ըսէ․ «հայ ազգը այնքան յուսախաբ եղած է որ՝ շատ գոհ կ'ըլլայ եթէ Պատրիարքարանը կոչում ընէ ընտրուած հայ երեսփոխաններուն՝ հրաժարիլ իբր ցոյց այդ անիրաւութեան դէմ»¹⁴³։ Ահմէտ պէյ խորհուրդ կու տայ նման քայլի չգիմել, որովհետեւ ընտրութիւնները տեղի ունեցած են հին մարդահամարներու հիման վրայ, իսկ գեղծումները կատարուած են անփորձ պաշտօնեաներու եւ կարգապահութեան չենթարկուող կուսակցական մասնաճիւղերու կողմէ։ Արշարունի Պատրիարք կը պնդէ, որ հոն ուր բ․ կարգի ընտրողներու ընտրանիստերը տակաւին չեն կայացած, աշխատանք տարուի հայերուն գոհացում տալու։

Նոյն օրը, ՀՅԴ Պոլսոյ իրաւասու մարմինը Իթթիհատի Կեդրոնական Վարչութեան կը յղէ բողոքագիր մը, ուր կ'ըսէ թէ հայ երեսփոխաններուն թիւը «իրաւացիօրէն բոլորն դժգոհութիւն յարուցած է Դաշնակցութեան բոլոր մարմիններուն, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի բոլոր խաւերուն մէջ: ... Դաշնակցութիւնը իրեն վերապահած է՝ միջոցներ ձեռք առնել՝ ապահովելու համար յառաջիկային, հայ ժողովուրդի ներկայացուցչական այդ իրաւունքը, ինչպէս եւ ընտրական գործողութեան օրինաւոր կիրառումը»¹⁴⁴:

Հայ երեսփոխաններու թիւին շուրջ ՍԴՀԿը զարմանք կամ հիասթափութիւն չ'արտայայտեր: Գիւլեան՝ իր «Մարդիկ Եւ Նրանց Արժէքը» յօդուածին մէջ, կը գտնէ, որ Իթթիհատը հայերուն, ինչպէս նաեւ այլ փոքրամասնութիւններուն պիտի տայ այնքան թիւով երեսփոխաններ, որքանով որ անոր պէտք է խորհրդարանը ժողովրդավարական ներկայացնելու համար¹⁴⁵: «Պատրիարքի Փէշերի Տակ» յօդուածին մէջ, Գիւլեան կը գտնէ, թէ Արշարունի Պատրիարք սխալ ըրած է հանդիպելով Իթթիհատի ներկայացուցիչին հետ՝ որքան որ ալ վերջինս տիրող կուսակցութիւնը ըլլայ՝ ըստ յօդուածագրին, Պատրիարքը պէտք է յարաբերի միայն կառավարութեան եւ պետական մարմիններուն հետ:¹⁴⁶ Հնչակեան մէկ այլ գործիչ Ս. Մուրատ (Մուրատ Տէրտէրեան), իր «Օրուան Խնդիրը» յօդուածին մէջ կը գրէ. «այն բերանները, որոնք դեռ մինչեւ երէկ Իթթիհատը կը փառաբանէին, այսօր անէծք կը կարդան: Բայց ատիկա անկեղծութեան յայտարար նշան մը չէ: ... Կ'ըսեն թէ Իթթիհատը զիրենք խաբեր է եւ հայ ազգի թուին համեմատ ներկայացուցիչներ չէ տուած: Քանի որ Իթթիհատն է փշրանքներ տուողը, բնական է որ նա պիտի տար այնքան որ ինքը կը ցանկար: ... Եթէ խաբերայ մը կայ, այն ալ Դաշնակցութիւնն է, որ Իթթիհատի հետ խօսեր է, որպէս հայ ազգի ներկայացուցիչ»¹⁴⁷:

Կատարուած բողոքներէն եւ միջնորդութիւններէն յետոյ հայ երեսփոխաններուն թիւը կը հասնի 10ի: Երեսփոխան կ'ընտրուին դաշնակցականներ՝ Փաստրմաճեան (Էրզրում), Սերենկիւլեան (Էրզրում), Վռամեան (Վան), Տէր Կարապետեան (Մուշ) եւ Տոքթ. Կարապետ Փաշայեան (Սերաստիա): Իթթիհատականներ՝ Վահան Պարտիզպանեան (Իզմիր), Հալաճեան (Պոլիս), Յարութիւն Պոշկեզեճեան (Հալէպ) եւ Յակոբ Պոյաճեան (Ռոստոսթո). անկուսակցական՝ Զօհրապ (Պոլիս):

Ընդհանուր առմամբ, ընտրուած 275 երեսփոխաններէն միայն 6ը ընդդիմադիր էին¹⁴⁸: Այս համեմատութիւնը բացարձակապէս չէր համապատասխաներ իրականութեան: Թանին կը փորձէ չքմեղանալ՝ գրելով

թէ Երեսփոխանական Ժողովի արդիւնաւէտ աշխատանքին համար, ընդդիմադիր հոսանքի մը գոյութիւնը բնաւ ալ անհրաժեշտ չէ¹⁴⁹։ Ազատամարտ համաձայն չի գտնուիր այս տեսակէտին ու իր «Ընդդիմադիրի Պէտք Կա՛յ...» խմբագրականին մէջ կը գրէ. «չպաշտպանենք սխալ մը, աւելի մեծ սխալի մըն ալ դուռ չբանալու համար։ Եւ մենք վստահ ենք թէ մեր թուրք պաշտօնակիցը չի կրնար ոչ մէկ ատեն ձեռքը խղճին վրայ դնելով պնդել նաեւ սա ես որ՝ ընտրութեանց ներկայ արդիւնքը ձեռք բերուեցաւ, որովհետեւ Ժողովուրդին ազատ կամքը այդպէս ուզեց։ Ո՛չ, ջանանք գտնել ճշմարտութիւնները հրապարակաւ ծանականքէ գերծ պահել»¹⁵⁰։

Իր կարգին Գիւլեան, «Խորհրդարանի Բացման Առթիւ» յօդուածին մէջ կը գրէ. «չկայ ընդդիմադրութիւն՝ խորհրդարանական մեքենայի ջիղը։ Սրանք բոլորը պարտական ենք Իթթիհատին եւ միայն նրան։ ... Իթթիհատը այլեւս յառաջ երթալ չի կարող, նա պիտի աշխատի դէպի ետ երթալ - նա բռնուած է պատմութեան սղոցատամների մէջ, ... եւ վստահ ենք, որ փարլամենտական այս շրջանի կեանքը պիտի գայ այդ ապացոյցը բերելու իր բոլոր իրադարձութիւնների մէջ»¹⁵¹։

Նորընտիր հայ երեսփոխաններուն մէջ ամէնէն ակնառու բացական կ'ըլլայ Մեծն Մուրատը։ Այդ կը կատարուի հետեւեալ պայմաններուն տակ. նախընտրական շրջանին, ՀՅԴ Ատանայի շրջանէն թեկնածու կ'առաջադրէ Զաքարիա Պատիկեանը։ Մարտ 19ին, ՀՅԴի (Փափագեան, Վառժեան) եւ Կեդրոն խմբակցութեան (Խոճասարեան, Մուրին) միջեւ կը կնքուի ընտրական համաձայնագիր, որուն մասին Ազատամարտ աւելի ուշ կը գրէ, թէ Կեդրոնի մարդիկը «եկան հոն՝ ուրկէ պարտ էին սկսիլ, բայց երկու ամիս առաջ»¹⁵²։

Կեդրոն խմբակցութիւնը կ'առաջադրէ Մինաս Զերագի թեկնածութիւնը՝ Պոլսոյ շրջանէն։ ՀՅԴ կ'ընդունի Զերագի թեկնածութիւնը՝ բայց ոչ Պոլսի ընտրաշրջանէն։ Այս կապակցութեամբ, ան յարաբերութիւններ կը մշակէ Իթթիհատին հետ, որպէսզի Զերագի անունը փոխարինուի Հալէպի կամ Ռոստոսթոյի շրջանի իթթիհատական հայ թեկնածուին հետ։ Արհեստական պատճառաբանութիւններով, Իթթիհատ այս առաջարկին ընթացք չի տար։ Ստիպուած, ՀՅԴ իր Ատանայի թեկնածուն յետս կը կոչէ եւ ակնառու կը գիջի Զերագին¹⁵³։ Սակայն Զերագի թեկնածութիւնը Ատանայի նահանգէն դրուելը, Կեդրոն խմբակցութեան չի բաւարարեր եւ այս պատճառով Մարտ 29ին տեղի կ'ունենայ վերջիններուն խզումը ՀՅԴէն։ Միւս կողմէ, Ատանայի նահանգին մէջ, Զերագի անունը Ժողովրդականութիւն չի գտներ։ Անոր դէմ կը դիրքորոշուին

յատկապէս Սիսի Կաթողիկոսն ու Ատանայի Առաջնորդը, որոնցմէ իւրաքանչիւրը ունէր իր թեկնածուն եւ աշխատանք կը տանէր անոր յաջողութեան համար¹⁵⁴։ Հետեւանքը կ'ըլլայ այն, որ Բ. Կարգի հայ ընտրողներուն ձայները կը տարտղնին եւ Բ. Կարգի թուրք ընտրողներուն մօտ հայ թեկնածուի մը անուան շուրջ կեդրոնացեալ քարոզչութիւն չի տարուիր։ Իսկ վերջնական արդիւնքը կ'ըլլայ այն, որ հայ ազգային-ազատագրական պայքարի ամէնէն անբասիր դէմքերէն եւ իր երեսփոխանական անրիժ գործունէութեամբ ժողովուրդին ծանօթ Մեծն Մուրատի փոխարէն կ'ընտրուի իթթիհատական թուրք մը։

ՅԵՏ-ԸՆՏՐԱԿԱՆ ԴԺԳՈՀՈՒԹԻՒՆՆԵՐ, ՅՈՒՍԱԽԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԲԱՆԱՎԷՃԵՐ

Ընտրութիւններուն արդիւնքը խոր դժգոհութիւն յառաջ կը բերէ արեւմտահայ բոլոր հոսանքներուն մօտ։ Արդիւնքէն յատկապէս դժգոհ կը մնայ ՀՅԴ՝ պարզ այն պատճառով, որ ընտրութիւններուն հանդէպ ամէնէն խանդավառ ակնկալութիւններն ունէր ան։

Իթթիհատի ընտրական խարդաւանքներուն հանդէպ ՀՅԴի մէջ կուտակուած գայրոյթին առաջին եւ ամէնէն համարձակ արտայայտիչը կ'ըլլայ Սիմոն Զաւարեան։ Տակաւին Ապրիլին, երբ ընտրութիւնները իրենց ընթացքին մէջ ն, ՀՅԴ Բերայի ակումբին մէջ կատարուած ընտրական միթինկի մը ընթացքին, Զաւարեան կը յայտարարէ, թէ գաւառներէն հասած լուրերուն համաձայն Իթթիհատի շրջանային մասնաճիւղերը կը դրժեն իրենց նախընտրական խոստումները եւ կը նախատեսուի, որ գայիք Երեսփոխանական Ժողովը 90 տոկոսով ըլլայ իթթիհատական։ Զաւարեան կ'աւելցնէ. «ուստի, լաւատես չենք կրնար ըլլալ խորհրդարանի նոր կազմին հանդէպ, եւ - այժմ օգնելով Իթթիհատին որ համեմատաբար լաւ տարրեր ընտրուին - ապագային հայ երեսփոխաններու մեծամասնութիւնը պիտի պատրաստուի ընդդիմադիր ըլլալու հոն, որպէսզի կարենայ գտնել անոնց մէջէն լաւագոյնները եւ իրեն հետ միացնել»¹⁵⁵։

Այս կապակցութեամբ Նոր Աշխարհ կը գրէ. «մէկ կողմէ կը դաշնակցին Իթթիհատին հետ, եւ ամէն կերպով անոր ջատագով հանդիսանալով կ'աշխատին ազգը անոր ետեւէն տանիլ, միւս կողմէ կը յայտարարեն թէ ընտրուելիք դաշնակցական երեսփոխանները ընդդիմադիր դեր պիտի կատարեն յառաջիկայ օսմանեան խորհրդարանին մէջ։ ...Կը մնայ միայն տեսնել թէ Իթթիհատն ալ կ'ուզէ՞ այդպէս ապուշի տեղ դրուիլ»¹⁵⁶։

Շարունակելով իր հրապարակային քննադատութիւնները, Զաւարեան՝ իր «Կառավարական Կուսակցութիւնը եւ Օրոգիցիոնի Դերը» յօդուածին մէջ, կը քննադատէ Խորհրդարանին մէջ ընդդիմութիւն չունենալու համար կառավարութեան կատարած ապօրինութիւնները¹⁵⁷։ «Բարեկամութեան Արդիւնքը» յօդուածին մէջ, Զաւարեան կը գտնէ, թէ հայերու արդարացի եւ չափաւոր ակնկալութիւնն էր Խորհրդարանին մէջ իրենց թիւին համեմատ ունենալ 16-18 երեսփոխան. ակնկալութիւն մը, որ իր օրին իթիւհատի դեկավարները ընդունած էին սիրայիրութեամբ. սակայն արդիւնքը եղած էր 9-10 երեսփոխան։ Յօդուածագիրը՝ գտնելէ ետք թէ ամբողջ հայութիւնը յուսախար եղած է, կ'եզրակացնէ. «ընտրական պայքարի դեկը իր ձեռքն ունեցող քաղաքական կուսակցութիւնը խաբուած է իր հօօր «քարեկամ»-ին կողմէ։ Բարոյական նոր Ատանա մըն է աս՝ որ կը պայթի հայուն գլխին, - Ատանա՝ որ չի կրնար մեղմացուիլ ո՛չ Մարտ 31-ով, ոչ «տգետ» խուժանով»¹⁵⁸։

Միւս կողմէ, շարունակելով իր հակադարձութիւնները, Նոր Աշխարհ «Զուր Ողբեր» վերնագրին տակ կը գրէ. «ընտրական պայքարը դեկավարող հայ քաղաքական կուսակցութիւնը խաբուած է իր հօօր «քարեկամ»-ին կողմէ։ ..Խաբողը անշուշտ յանցաւոր է։ Բայց յանցաւոր չէ՞ արդեօք նաեւ խաբուողը, կամ անելի ճիշտ, ան՝ որ թոյլ տուած է, որ խաբեն զինքը։...Ես քեզ հետ դաշնակցած եմ մղելու համար արդարութեան, իրաւունքի կոիր, եւ ո՛չ թէ գործակից, մեղսակից ըլլալու համար ապօրինութեան ու անիրաւութեան. ապօրինութիւն, անիրաւութիւն, որուն գոհը կ'ըլլամ ուղղակի ես։ Գործադրէ արդարութիւնը եւ զիս պիտի գտնես քու կողքիդ։ Հակառակ պարագային՝ մենք չենք կրնար ձեռք ձեռքի տալ։ Խօսեցա՞ւ այդպէս Դաշնակցութիւնը Իթի-հատի հետ։ Ո՛չ։ Ինչո՞ւ, ի՞նչ իրաւունքով ան երեմիականներ կը կարդայ այսօր հայ ժողովուրդին՝ ողբալու համար իր «քարեկամ»-ին դաւաճանութեանը վրայ»¹⁵⁹։

Այլ առիթով մը, արձագանգելով Ազատամարտի այն կանխատեսութեան, որ եկող Երեսփոխանական Ժողովը նախորդին նման, լեցուն պիտի ըլլայ անարժան եւ անարժէք երեսփոխաններով, Նոր Աշխարհ կը գրէ. «այս տողերը կարդալով Ազատամարտ-ի էջերուն մէջ, ակամայ մեր առջեւ պատկերացաւ մինչեւ իր ուղնուծուծը մոլութիւններով վարակուած այն ճարպիկ դերասանը, որը բեմին վրայ ամենայն լռութեամբ, անբիծ ու անարատ մարդու մը պէս, բարոյականութիւնը պատկերացնող դեր մը կը կատարէ»¹⁶⁰։

Շարունակելով ընտրական արդիւնքներուն վերլուծութիւնը, Զաւարեան իր «Արդարացուցիչ Պարագանները» յօդուածին մէջ կը թուարկէ

Պոլսոյ, Տիգրանակերտի, Խարբերդի, Պիթլիսի, Շապին Գարահիսարի, Ատանայի եւ այլ վայրերու մէջ Իթթիհատին կատարած խարէութիւնները: Իսկ այն վայրերուն մէջ ուր Իթթիհատ «բարեացականութիւն» ցուցաբերած է (Իզմիր, Հալէպ, Իզմիթ, Կեսարիա, Ռոտոսթօ), «Իթթիհատը անցուց իր հլու հնազանդ անդամները, ձախողութեան մատնելով քիչ շատ անկախ նկարագրի տէր անձնատրութիւնները... անշուշտ այն յոյսով թէ այս վայրերու երեսփոխանները չպիտի խօսէին հայ տառապանքներուն վրայ»: Նոյն յօդուածի աւարտին, Ջաւարեան կ'երգի՝ «ԶՅԴ-Իթթիհատ բարեկամութիւնը ու կը գրէ. «ա՛յս այս «բարեկամութիւնները», որ վճարել չեն գիտեր, այլ միայն պահանջել: Ակամայ կը յիշեմ հին առածը. փրկէ զիս աստուած՝ «բարեկամներես», իսկ թշնամիներէ ես զիս կը պաշտպանեմ»¹⁶¹:

ՀՅԴ շարք մը գործիչներ՝ քննադատելով հանդերձ Իթթիհատի ապօրինութիւնները, կը փորձեն արդարացնել ՀՅԴի կեցուածքներն ու գործակցութիւնը անոր հետ: «Ընտրութիւններու Ընթացքը եւ Հետեւանքները» յօդուածաշարքին մէջ, Ատոմ, ընդունելէ ետք թէ՛ «տարաբախտաբար, նախընտրական եւ ընտրական շրջանի միջոցին ստեղծուած դրութիւնը մեզ կը թելադրէր նուազագոյն չարիքին հետ հաշտուիլ», կը պատասխանէ ՀՅԴի քննադատներուն եւ կը գտնէ թէ այդ քննադատութիւնները տեղի չէին ունենար եթէ հայ ժողովուրդը կազմող խաւերն ու կուսակցութիւնները «չունենային այլասերման ախտանիշերը եւ կրէին ազգային սրբութիւն, քաղաքական հասունութիւն»¹⁶²:

Ատոմ Ազգային Երեսփոխանական Ժողովն ու միւս կուսակցութիւնները կը մեղադրէ անսկզբունքայնութեան մէջ, որոնք ՀՅԴն կը քննադատեն պարզապէս «պատառ մը խլելու» համար, իսկ Իթթիհատը կը շահագործէ ստեղծուած մթնոլորտը: Յօդուածագիրը կ'եզրակացնէ. «Եթէ Իթթիհատը պարտական է իր մտայնութիւնը, ձգտումներն ու թերութիւնները իր բաղադրիչ տարրերուն, դաշնակցութիւնն եւս իր ձախողութեան, նկարագրին եւ մեքենայութիւններուն: Մթնոլորտին տպաւորութիւններու տեսակէտէն չենք տարբերիր Իթթիհատէն: Հականեխումը անհրաժեշտ է եւ անոնց համար, եւ մեզի համար»¹⁶³:

Ժիրայր գրչանուհով մէկ այլ յօդուածագիր՝ «Ընտրութիւններու Ուշագրաւ Կողմերէն» յօդուածաշարքին մէջ, նշելէ ետք թէ ընտրութեանց մէջ, հայկական շահերու տեսակէտէն, Իթթիհատին դերը բացասական էր, Ազատամարտին մէջ կը գրէ. «Իթթիհատը հայկական կարգ մը կենսական խնդիրներու եւ պահանջներու լուծման մասին ալ վճռա-

կան յանձնառութիւններ եր ստանձներ՝ նոյնիսկ նախքան ընտրական աշխատութեանց մասին համաձայնութեան գալը ՀՅԴ աշխակցութեան հետ, որոնց էութիւնն ու բնոյթը – ընդգծենք այս կէտը – կը մնայ դեռ անձանօք հայ ժողովուրդին»¹⁶⁴:

Պատասխանելով ՀՅԴ-ի ընտրական քաղաքականութեան դէմ ՀՍՌԿ ղեկավար դէմքերէն Թէքէեանի կատարած հրապարակային քննադատութիւններուն, ՀՅԴ յայտնի գործիչներէն Ա. Արծիւեան (Ռուբէն Դարբինեան) իր «Քաղաքագէտներ Թէ Փարիսեցիներ» առաջնորդող յօդուածաշարքին մէջ կը գտնէ, որ ՀՅԴ-ի թիկնաւոր ընտրական գործակցութիւնը կարելի չէ «դաշինք» կոչել ու կ'աւելցնէ. «մենք գիտենք որ Իթքիհատականները, իբր թուրք կազմակերպութիւն, կարող էին նոյնիսկ իրենց տուած գրաւոր խոստումները չկատարել. ինչքան էլ որ կատարէին, մեզի համար էլի օգուտ էր: Իսկ եթէ ոչինչ էլ չկատարէին, մենք թուրք ունէինք, մենք պահանջատէր էինք եւ միշտ կարող էինք պահանջել նրանցից, երեսներովը տալ»¹⁶⁵: Արծիւեան ամբողջապէս անհիմն կը գտնէ Թէքէեանի այն պնդումները, ըստ որոնց «Իթքիհատի պէս՝ դաշնակցութիւնն ալ իր բոլոր ջանքը թափեց. որպէսզի մեր ազգին մէջ միակը տիրէ, կամ Իթքիհատի պէս ան ալ մեր ընտրութիւնները խարդաւեց երբ կրցաւ»¹⁶⁶:

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

1912 Ապրիլ 12ին, Սուլթանին ներկայութեամբ տեղի կ'ունենայ նոր ընտիր Երեսփոխանական Ժողովին առաջին նիստը: Ժողովը մեծամասնութիւն չի կազմեր՝ որովհետեւ Բ. կարգի ընտրողներէն զգալի թիւ մը տակաւին իրենց ընտրանիստերը չէին գումարած եւ նոր երեսփոխաններ չէին ընտրած: Խորհրդարանի նախագահ կ'ընտրուի Իթիթիհատի խորհրդարանական խմբակցութեան պետ Խալիլ պէյ: Բ. խօսնակ կ'ընտրուի Պետրոս Հալաճեան¹⁶⁷:

Երեսփոխանական ընտրութիւններու ամբողջ ընթացքին, Իտալիոյ հետ պատերազմը Թրիփոլիթանիոյ մէջ կը շարունակուէր: Սակայն, Երեսփոխանական Ժողովի Ա. նիստի բացման ժամերուն տեղի կ'ունենայ ռազմական նոր մագլցում մը՝ իտալական մարտանաւերը կը ռմբակոծեն Տարտանէլի օսմանեան ամրութիւնները: Սա կը նկատուի Իթիթիհատի ձախող արտաքին քաղաքականութեան վերջնազանգը:

Ներքին ճակատի վրայ եւս, Իթիթիհատին կը սպասէին դառն յուսախարութիւններ: Ընտրութիւններուն ընթացքին Իթիթիհատի կատարած ապօրինութիւնները ընդդիմութեան կու տան անօրինական եւ հակա-

կառավարական քայլերու դիմելու պատրուակ: Ապրիլի վերջաւորութեան արդէն, ապստամբական շարժումները Ալպանիոյ մէջ կը ստանան լայն ծաւալներ: Մայիս-Յունիսին, սպաներու խումբ մը՝ «Փրկարար Սպաներու Խումբ» (ՓՍԽ, հայասկարանի գապիթան կրօնփոխ) անուան տակ, նախ՝ հաղորդագրութեամբ մը կ'իմացնէ իր գոյութիւնը Պոլսոյ մէջ եւ ապա իրերայաջորդ յայտարարութիւններով կը քննադատէ տիրող վարչախումբը:

«ՓՍԽն փաստօրէն Իթիլաֆի զինուորական թեւն էր»¹⁶⁸: Ան կը պահանջէ իթիլահատականներուն դուրս գալը Կառավարութենէն, Խորհրդարանին լուծարումը եւ երեսփոխանական ազատ ընտրութիւններու կայացումը: Յունիս 21-22ին մեծ թիւով սպաներ եւ զինուորներ Մակեդոնիոյ մէջ կը լքեն իրենց զօրանոցներն ու կ'ապաստանին լեռները: Յուլիս 9ին, երկրի ամէնէն զօրաւոր անձերէն նկատուող եւ իթիլահատի վստահութեան արժանացած Մահմուտ Շելքէթ փաշա կը հրաժարի Պաշտպանութեան Նախարարի պաշտօնէն: ՓՍԽն իր ճնշումները կառավարութեան վրայ կը մեծցնէ: Յուլիս 17ին Սալիտ փաշայի դահլիճը կը հրաժարի¹⁶⁹: Նոր վարչապետ կը նշանակուի Ղազի Ահմէտ Մուխթար փաշան: Կառավարութիւնը, որ կը կազմուի հակա-իթիլահատական տարրերով, կը կոչուի «մեծերու դահլիճ», որովհետեւ անոր կազմին կ'ընդգրկուին երեք նախկին վարչապետեր¹⁷⁰: Գարրիէլ Նորատունկեան կը նշանակուի Արտաքին Գործոց Նախարար:

Ապստամբ սպաներէն պատուիրակութիւն մը հանդիպում կ'ունենայ Պետական Խորհուրդի Նախագահ Քամիլ փաշայի հետ եւ կը պահանջէ Երեսփոխանական Ժողովի լուծարքը: Շարք մը երեսփոխաններ կը մտածեն հրաժարական տալ: (Պէտք է ի նկատի ունենալ որ, հրաժարականի պարագային, նոյն ք. կարգի ընտրողներն է, որ պէտք է ընտրէին նոր երեսփոխանը, մինչդեռ Երեսփոխանական Ժողովի լուծարման պարագային՝ պէտք է տեղի ունենային ք. կարգի նոր ընտրութիւններ): Հայ երեսփոխանները փորձ կը կատարեն համոզել իրենց իթիլահատական գործընկերներէն ոմանք հրաժարական ներկայացնել եւ թոյլ տալ, որ ընդդիմադիր երեսփոխաններ ընտրուին՝ ընտրութիւններու ընթացքին գործուած ապօրինութիւնները սրբազրելու եւ քաղաքական շիկացած մթնոլորտը մեղմացնելու համար: Իթիլահատական երեսփոխանները կը մերժեն այս առաջարկը՝ գտնելով, որ այդ ձեւով ընդունած կ'ըլլան ընտրութիւններուն ապօրինութիւնը¹⁷¹:

Յուլիս 24ի երեսփոխանական նիստը կ'անցնի աղմկալից: Նախագահ Խալիլ պէյ կը կարդայ ՓՍԽի կողմէ գրուած վերջնագիր մը, ուր կը պա-

հանջուի Խորհրդարանին լուծարումը: Կարգ մը երեսփոխաններ, որոնց շարքին Վարդգէս, Հալաճեան եւ Զօհրապ Հայրենասիրական ճառեր կ'արտասանեն¹⁷²: Յուլիս 30ին նոր Կառավարութիւնը Խորհրդարան կը ներկայանայ վստահութեան քուէի: Վարչապետ Ղազի Մուխթար փաշա կը ներկայացնէ Կառավարութեան ծրագիրը, ուր երկրի ծանր վիճակին համար պատճառներ կը նշուին՝ ընտրութիւններու ընթացքին գործուած ապօրինութիւնները, զինուորականներուն քաղաքականութեամբ զբաղիլը, պաշտօնեաներու նշանակման ժամանակ օրէնքներուն ոտնահարումը եւ սահմանադրութեան տրամադրութիւններուն խախտումները: Վարչապետը կը յայտնէ նաեւ, թէ ձեռնարկած է ընտրութիւններուն հետ կապուած բողոքագիրներուն քննութեան, որուն արդիւնքին լոյսին տակ պիտի առնուին համապատասխան որոշումներ: Ժողովի դադարին, իթթիհատական երեսփոխանները կը գումարեն նիստ մը, ուր կը գտնեն, թէ վստահութեան քուէ չտալու պարագային ծանր պատասխանատուութիւն կը դրուի իրենց ուսերուն: Քուէարկութեան արդիւնքը կ'ըլլայ այն, որ 115 թեր, 45 դէմ եւ 9 ձեռնպահ քուէներով հակա-իթթիհատական Կառավարութիւնը կ'արժանանայ իթթիհատական Երեսփոխանական Ժողովի վստահութեան: Յաջորդ օր, իթթիհատական թերթերը կը գրեն, թէ այդ ոչ թէ վստահութեան քուէ էր Կառավարութեան, այլ երկիրը ծանր կացութեան մէջ չձգելու գիտակցութեան արտայայտութիւն¹⁷³:

Յուլիս 31ին Ազատամարտ կը տպէ ՀՅԴ Արեւմտեան Բիւրոյի «Օսմանեան Քաղաքացիներուն» ուղղուած կոչը, ուր երկրին մէջ տիրող ահազանգային վիճակին համար պատասխանատու կը նկատուին իրերայաջորդ Կառավարութիւնները: Վիճակէն դուրս գալու համար ՀՅԴ կ'առաջարկէ՝ 1) ձեռնհաս եւ արդարամիտ պաշտօնեաներու նշանակում, 2) տուրքերու նուազեցում աշխատաւոր դասակարգին վրայէն, 3) պետական պիւտճէի նուազեցման համար պաշտօնեաներու թիւի եւ աւոնց ամսավճարներու կրճատում, 4) հրաժարում այնպիսի կարգադրութիւններէ եւ քայլերէ, որոնք բաղկացուցիչ ազգութիւններուն թրջացումի եւ իսլամացումի երկիւղ կը ներշնչեն: Ազգային փոքրամասնութիւնները Խորհրդարանին մէջ պէտք է տեղ գտնեն իրենց թուային համեմատութեամբ, 5) խօսքի, խղճի, ժողովներու եւ միութիւններու ազատութիւն: Կոչի աւարտին կ'ըսուի. «Եւ այսօր ալ մենք անկախ խմբակցական եւ կուսակցական նեղ վեճերէն, չունենալով ոչ մէկ կապ որեւէ կուսակցութեան հետ, մենք մեր կատարեալ ազատութեան մէջ՝ մեր խօսքը կ'ուղղենք Օսմանեան երկրի բոլոր գաղափարական տար-

րերուն, ունենալով ընդհանուր հայրենիքի բարձրագոյն շահերուն մտահոգութիւնը միայն»:

Սա, թէկուզ անուղղակի, բայց իթթիհատէն խզուելու ՀՅԴի առաջին պաշտօնական յայտարարութիւնն էր: Դիրքորոշում մը՝ որուն վրայ ակներեւարար մեծ ազդեցութիւն կ'ունենան երեսփոխանական ընտրութեանց արդիւնքն ու իթթիհատին իշխանագրկումը:

Օգոստոս 3ի Երեսփոխանական Ժողովին, իթթիհատական «կարծր թեւ»ի խումբ մը երեսփոխաններ Կառավարութեան գրաւոր հարցադրում կը ներկայացնեն թէ՛ ինչպէ՛ս ՓՍԽին պատկանող սպաներ, որոնք մասնակցած են ապստամբական շարժումներու եւ սպառնալիքներ յղած պետական մարդոց, ազատօրէն կը շրջին մայրաքաղաքին մէջ ու անոնց պատուին նոյնիսկ ճաշկերոյթ կը տրուի: Հարցադրումը գոր կը կարդայ Հալաճեան ուղղուած էր Պատերազմական Նախարար Նազիմ փաշային, որ կը բացակայէր նիստէն: Ժողովը կ'որոշէ երկու օր ետք հրաւիրել արտակարգ նիստ եւ Պատերազմական Նախարարէն լսել պատասխանը: Իթթիհատի «կարծր թեւ»ը նպատակադրած էր վերստին դնել Կառավարութեան վստահութեան քուէի հարցը: Կառավարութիւնը լաւապէս կ'ըմբռնէ այդ եւ չ'ուզեր պատահականութեան յանձնուիլ: Նոյն օրն իսկ, ան կ'ունենայ նիստ մը եւ յաջորդ օրը կառավարական պատուիրակութիւն մը կը ներկայանայ Մերակոյտի դռնփակ նիստին ու կը բացատրէ թէ երկրի ծանր վիճակին հիմնական պատճառը իթթիհատին հանդէպ ժողովուրդին մօտ կուտակուած դժգոհութիւնն է, որուն պատճառով Այապահա գտնուող 60 վաշտերէն 20ը անցած են ապստամբներուն կողմը եւ թէ շարժումը կրնայ աւելի ընդլայնիլ: Քանի որ Մերակոյտը կը վայելէր սահմանադրութեան յօդուածները մեկնաբանելու իրաւունքը, կառավարական պատուիրակութիւնը Մերակոյտէն կը պահանջէ սահմանադրութեան 43րդ յօդուածը մեկնաբանել այնպէս՝ որ ընտրուած Խորհրդարանը գործէ չորս ամիս, այսինքն՝ միայն այն ժամանակամիջոցին համար որ ինկած է նախորդ Խորհրդարանի լուծարման եւ անոր օրինական աւարտին միջեւ: Չայներու 28 թեր եւ 5 դէմ յարարերութեամբ Մերակոյտը կը կատարէ պահանջուած մեկնաբանութիւնը¹⁷⁴: Որոշումը կը տարուի Սուլթանին, որ անմիջապէս գայն կը վերածէ սուլթանական հրամանագրի: Երեկոյեան, Սուլթանը կը հրաւիրէ Երեսփոխանական Ժողովի Նախագահը եւ այս մասին պաշտօնապէս կը տեղեկացնէ անոր: Յաջորդ օր, Խորհրդարանի նիստին, իթթիհատի «կարծր թեւ»ի ներկայացուցիչները ի զուր փորձեր կ'ընեն կացութեան մէջ փոփոխութիւն մտցնելու համար: Հալաճեան նոյնիսկ կը սպառնայ

կառավարութիւնը Գերագոյն Դատարան յանձնել: Բոլոր ճիգերը կ'անցնին ապարդիւն: Վարչապետը Երեսփոխանական Ժողովին եւ Մերակոյտին առջեւ կը կարդայ Երեսփոխանական Ժողովը լուծելու եւ նոր ընտրութիւններ կատարելու մասին սուլթանական հրամանագիրը¹⁷⁵:

Նոր կառավարութեան կազմը եւ Երեսփոխանական Ժողովին լուծարումը քաղաքականօրէն կը նշանակէր Իթթիհատի իշխանութեան անկումը: Այս իշխանափոխութեան հանդէպ ՀՅԴ խանդավառութիւն ցոյց չի տար: Երբ Իթիլաֆական Ռիզա Թեւֆիք պէյ Իքտամի մէջ կը քննադատէ Իթթիհատի իշխանութիւնը եւ զայն կը մեղադրէ ազգայնամոլական եւ կայսերապաշտական քաղաքականութիւն վարելու յանցանքներով, գրելով թէ «տիրող ազգի, թրքութեան խնդիր հանելով, չմտածեցին թէ այս շովեցիզմը ամենէն աւելի օսմանցիութիւնը կտորկտոր պիտի ընէր», *Բիւթանիա (Ազատամարտ)*՝ իր «Արթնացման Նշաններ» խմբագրականին մէջ, կ'ողջունէ յօդուածի միտք բանին, սակայն կ'աճապարէ աւելցնելու, որ Իթթիհատի հասցէին եղած մեղադրանքներուն մեծ մասը միայն անոր չեն վերաբերիր, այլ անոնք յատուկ են «թուրք մտաւորականութեան խոշոր մասին»¹⁷⁶:

Այլ առիթով մը, *Ազատամարտ*՝ բանավէճի մտնելով Հիքմէթ թերթին հետ, իր «Ծագող Աստղը Իր Լոյսէն Յայտնի է» խմբագրականին մէջ կը գրէ թէ երբ *Ազատամարտ* չորս տարի անընդհատ կը գրէր հայկական ցաւերուն մասին, իր դէմ կը գտնէր «ուշ այնքան կառավարական թերթերը... որքան ընդդիմադիր համարուած կուսակցութեանց օրկանները»: *Ազատամարտ* չ'ընդունիր նաեւ Հիքմէթի այն վերագրումը, ըստ որուն «ղաշնակցութիւնը չորս տարիէ ի վեր յենարան ծառայած է Իթթիհատի սխալներուն»¹⁷⁷: *Ազատամարտ* համաձայն չ'ըլլար նաեւ գործուած բոլոր սխալները Իթթիհատի ուսերուն բարդելու մօտեցումին եւ հարց կու տայ թէ արդեօ՞ք անոր տեղ եկողները աւելի լաւ պիտի ըլլան:

Իթթիհատի անկումը խանդավառութեամբ կ'ընդունի ՍԴՀԿԸ: Գիւլեան, իր «Պատմական Անկումն» յօդուածին մէջ կը գտնէ, թէ Իթթիհատի իշխանագրկումը արդիւնքն էր անոր կեդրոնաձիգ քաղաքականութեան, ազգայնամոլութեան եւ ռազմապաշտութեան:¹⁷⁸

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

Երեսփոխանական Ժողովի լուծարումէն անմիջապէս ետք հայութեան առջեւ վերստին կը յայտնուի յառաջիկայ ընտրութիւններուն մասնակցութեան հարցը:

Օգոստոսի 1-12 տեղի կ'ունենայ ՀՅԴ Պոլսոյ Շրջանային ժողովը, որ երեսփոխանական ընտրութիւններուն կապակցութեամբ կ'որոշէ 1) թրքական կուսակցութիւնները իրենց կազմով, ուղղութեամբ եւ հետապնդած նպատակներով չեն ներշնչեր այնպիսի վստահութիւն, որ կարելի ըլլայ անոնցմէ որեւէ մէկուն հետ ժամանակաւոր դաշինք կնքել, 2) ընկերվարական կուսակցութիւններուն համար ընտրութիւնները քարոզչութեան համար շատ լաւ միջոցներ են, ուստի ժողովը կ'որոշէ մասնակցիլ ընտրութիւններուն անկախարար եւ կուսակցական թեկնածուներով: Ժողովը կ'որոշէ նաեւ շրջանային կոմիտէներուն ազատութիւն տալ՝ տեղական պայմաններէն մեկնելով, ընտրական գործակցութիւններ եւ պլոքներ կազմելու, հայ երեսփոխաններու թիւին շուրջ ազգային իշխանութիւններուն հետ գործակցելու, իսկ այն շրջաններուն մէջ, ուր կուսակցութիւնը սեփական թեկնածու չունի, ոեւէ թուրք ազատախոհ թեկնածուի քուէարկելու՝ ո՛ր կուսակցութեան ալ պատկանի ան՝¹⁷⁹:

Օգոստոս 15ին Ազգային Երեսփոխանական ժողովը եւս կը քննարկէ երեսփոխանական ընտրութիւններու հարցը, յատկապէս՝ հայ երեսփոխաններու թիւին եւ ընտրական տեղամասերու բաժանման տեսանկիւնէն ու կը յանձնարարէ Պատրիարքին, որ այս կապակցութեամբ դիմումնազիր ներկայացնէ կառավարութեան¹⁸⁰:

Սեպտեմբերի վերջը, ՄԴՀԿ Տաճկաստանի շրջանի Բ. Պատգամաւորական ժողովը իր հերթին կ'որոշէ. «ազգայնական, կործանարար հոսանքին դէմ ընդդիմադիր ուժ ստեղծելու եւ թուրք տարրին յառաջդիմական հոսանքին նպաստելու եւ անոր մէջ ազատական ոգի զարգացնելու համար, նախապատուութիւն տալ այն թուրք քաղաքական կուսակցութեան, որ համեմատաբար աւելի ձախ կեցած է եւ կը ներկայացնէ յառաջդիմական սկզբունքներ»¹⁸¹:

Ժողովը կ'որոշէ գործակցիլ ՍԱՖին հետ ու կը վաւերացնէ Հնչակեան-Իթիլաֆ Փետրուար 7ի համաձայնութիւնը՝ յստակ դարձնելով յառաջիկայ ընտրութիւններուն կուսակցութեան հիմնական դիրքորոշումները:

Ընտրական աշխուժութիւն հանդէս կը բերէ նաեւ ՀՍԴԿը: Անոր Պոլսոյ Վարիչ Մարմինն անունով պատուիրակութիւն մը կը հանդիպի իշխանութեան վրայ գտնուող Իթիլաֆ կուսակցութեան ղեկավարութեան եւ փափաք կը յայտնէ ընտրական դաշինք կնքել անոր հետ: Իթիլաֆականները կը պատասխանեն, որ նախ պէտք է հնչակեաններուն դիմեն, «քանի որ Հնչակեանները իր նեղ օրերուն միս միմակ կանգնած էին իր կողքին ընդդէմ Իթիլաֆի եւ անոր հայ գործակիցներուն»¹⁸²:

Աւելի ուշ ՀՍՌԿի անունով Թէքէեան կը հերքէ հանդիպման պաշտօնական բնոյթը ու կ'ըսէ, թէ այդ տեղի ունեցած է անհատ կուսակցական պատասխանատուի մը անձնական նախաձեռնութեամբ¹⁸³ :

Կեդրոն խմբակցութենէն եւս պատուիրակութիւն մը կը հանդիպի Իթիլաֆին ու կը ստանայ նոյն պատասխանը: Կեդրոնի ներկայացուցիչները, սակայն, կ'ըսեն թէ իրենք եկած են Պատրիարքին գիտակցութեամբ: Ստուգելու համար այս պարագան, ՄԴՀԿի կողմէ Մեծն Մուրատ կը հանդիպի Արշարունի Պատրիարքին հետ, որ կը ժխտէ նման հանդիպումէ մը իր տեղեակ ըլլալը: Այս առիթով հնչակեան ներկայացուցիչը կը յայտնէ թէ ՄԴՀԿը պատրաստ է Կեդրոն խմբակցութեան հետ ընտրական համագործակցութիւն գոյացնելու, «քանի որ կուսակցութեան ցանկութիւնն է փարլամենտի մէջ ներկայացուած տեսնել բոլոր հայ խմբակցութիւնները, որքան ալ անոնք փոքրամասնութիւն կազմած ըլլան»¹⁸⁴:

Միւս կողմէ, սակայն, կը պարզուի, որ հնչակեաններուն այս ցանկութիւնը առանց նախապայմաններու չէ, որովհետեւ Գիւլեան իր «Քաղաքական Ազնւութիւն» յօդուածին մէջ կը գրէ. «Իթքիհատի այս շորս տարուան գործունէութիւնը բաւականին զօրեղ փաստեր բերաւ, ամենաբաւարարողներին անգամ համոզելու չափ, որ նա իր էութեամբ թոյն է, որ բաղկացուցիչ ազգերի իրատունքների գոյութեան եւ նրանց ապագայի տեսակէտից մի չարաղետ սպառնալիք է: ... Ուզո՞ւմ են համերաշխութեան, համագործակցութեան դրութիւն ընդունիլ, նախ պէտք է ժխտեն ամեն գործակցութիւն Իթքիհատի հետ. իրենց դիրքը այդ նկատմամբ պէտք է լինի անվերապահ եւ բացայայտ: - Դրանք նախնական պայմաններ են հասկացողութեան գալու: ... Հայ կուսակցութիւնների եւ խմբակցութիւնների միջեւ, միայն այդ գիծի վրայ համագործակցութիւն կարող է գալ, եթէ դա ցանկալի է»¹⁸⁵:

Յառաջիկայ ընտրութիւններուն նախապատրաստութեան համար Պատրիարքարանը թեմական առաջնորդներուն, թաղական խորհուրդներուն եւ ազգային մարմիններուն կը յղէ «Պատրիարքարանի Շրջաբերական-Հրահանգ»ը, ուր մանրամասնօրէն կը շարադրուին Պատրիարքին տեսակէտերն ու ակնկալութիւնները երեսփոխանական ընտրութիւններէն: ՀՅԴ համաձայն չի գտնուիր շրջաբերականին: «Պատրիարքարանի Շրջաբերականը Փարլամենտական Նոր Ընտրութեանց Մասին» խմբագրականին մէջ Ազատամարտ կը դժգոհի, որ «Պատրիարքարանը, ներկայ ընտրութեանց մէջ, կ'ուզէ հայ երեսփոխանները ինք ընտրել»¹⁸⁶:

ՀՅԴԻ պաշտօնաթերթը նոյն խմբագրականին մէջ կ'առաջարկէ Բ. Կարգի ընտրութիւններուն չմիջամտել, զանոնք ամբողջապէս ազատ ձգել, ապա, իւրաքանչիւր ընտրաշրջանէ ներս, այն կուսակցութիւնը, որ ձեռք կը բերէ առաւել թիւով Բ. Կարգի ընտրողներ, ըլլայ առաջատար, եւ միւսները ենթարկուին անոր ու քուէարկեն անոր առաջադրած թեկնածուին՝ Բ. Կարգի հայ ընտրողներուն ձայները չտարտղնելու համար: Ազատամարտի վերոյիշեալ խմբագրականը կ'առաջարկէ նաեւ, որ Պատրիարքարանը այս «սրբագրութիւնը» կատարէ չրջաբերականին մէջ, «եթէ չ'ուզեր յառաջիկային զոջալ եւ պատասխանատուն համարուիլ ընտրական նոր ձախորդութեանց»:

Շրջաբերականին դէմ կը դիրքորոշուի նաեւ ՍԴՀԿԸ «Պատրիարքարանի Հրահանգների Առթիւ» յօդուածաշարքին մէջ, Գիւլեան կը գտնէ, որ, բոլոր պարագաներու տակ, երեսփոխանական ընտրութիւններուն գլխաւոր դերակատարները պէտք է ըլլան կուսակցութիւնները եւ ոչ թէ եկեղեցին¹⁸⁷: Յօդուածագիրը երկարօրէն կանգ կ'առնէ շրջաբերականի այն մտքին վրայ, որ կ'ըսէ թէ հայ թեկնածուն պէտք է ըլլայ ծանօթ անձնաւորութիւն մը ո՛չ միայն հայերուն, այլ նաեւ՝ թուրքերուն: «Ո՞ր թուրքերէն, արդեօ՞ք Իթքիհատէն», հարց կու տայ Գիւլեան ու կ'աւելցնէ. «մարդ արտաքոյ կարգի ուղեղ պիտի ունենայ, մինչեւ ցարդ դրականապէս համոզուած չլինելու համար՝ որ Իթքիհատը, այս բառի իսկական եւ քաղաքական նշանակութեամբ, թուրք կուսակցութիւնն է, - մի կուսակցութիւն որ պարզ, մեկին, որոշ ձգտում, պատմական տխուր միսիա ունի. այս երկրի բաղկացուցիչ բոլոր ազգութիւնները ջնջել՝ ուժի վրայ յենած պետական մեքենայի եւ թրքական քաղաքակրթական միջոցներով, - այսինքն մասնակի ու զանգուածային ջարդերով եւ այլ պատմական հնարիմացութիւններով...: Հայ ազգի գոյութիւնը նա վտանգ է համարել օսմանեան պետութեան մնայուն շահերին եւ նա այդ վտանգը հեռացնելու պատմական պարտականութիւնը վրան է առել՝ նման իր նախորդներին, իր նախահայրերին»¹⁸⁸:

Գիւլեան գտնելէ ետք, թէ նման հրահանգագիրները պատուելն ու անոնց հեղինակներուն ճակտին չպրտելը պարտականութիւնն եւ իրաւունքն է, կը շարունակէ. «մենք որեւէ գործ չենք կարող ունենալ հայ ազգային այն մարմինների, այն հաստատութիւնների հետ, որոնք ամենափոքր չափով անգամ փորձ կ'անեն Իթքիհատին քուէ տալու: Իթքիհատին քուէ տուողի, նրա թեկնածուների հետ պլոք կազմողի, այդ կուսակցութեան հետք որեւէ քոմիտոմիսի մէջ մտնողի հետ, մենք պայքար ունենք, եւ անխնայ: ... Պատմութիւնը կը բողոքի, մեր արի-

նով ներկուած քարերն անգամ կարող են աղաղակել, եթէ մէկ քուէ անգամ Իթթիհատին տրուելու լինի: Մենք ոչինչ ա՛յնքան ցած, ոչինչ ա՛յնքան ստորնացուցիչ չենք գտնում հայ անհատի եւ հաւաքական մարմնի համար, որ իր ծայնը ու քուէները կու տայ Ատանան կոտորել տուող Իթթիհատին»¹⁸⁹:

*

* *

Երեսփոխանական նոր ընտրութիւնները, 1912 Հոկտեմբեր 25ի սուրժանական հրամանագրով կը յետաձգուին¹⁹⁰: Անոնք տեղի կ'ունենան միայն 1914ի սկիզբը (երբ Իթթիհատ ամբողջ Կայսրութեան վրայ հաստատած էր իր ամբողջատիրութիւնը), որովհետեւ 1912 Հոկտեմբերի սկիզբը Օսմանեան Կայսրութեան առջեւ կը ծագի նոր եւ մեծ զգուարութիւն մը՝ Պալքանեան Պատերազմը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Hasan Kayali, "Elections and the Electoral Process in the Ottoman Empire, 1876 - 1919," *International Journal of Middle Eastern Studies*, Vol 27, No 3, 1995 Aug., էջ 269 - 270:

² Նոյն, էջ 267:

³ Սահմանադրութենէն անմիջապէս ետք Իթթիհատ իրողապէս կը գործէր բացայայտ պայմաններու մէջ, սակայն անոր Պոլսոյ ղեկավար մարմինը տակաւին կը կոչուէր «գաղտնի կոմիտէ» եւ տակաւին պաշտօնապէս չէր հրաժարած գործունէութեան յեղափոխական ձեւերէն: (Մօտաւորապէս նոյն իրավիճակին մէջ կը գտնուէին Հայկական կուսակցութիւններն ու Համիտեան վարչակարգին դէմ յեղափոխական պայքարի երած միւս խմբաւորումները): Սակայն, Իթթիհատի պարագային, գործունէութեան այս իրավիճակը կը գոյատեւէ անսովոր ըլլալու չափ երկար: Դեռ 1912 Սեպտեմբերին, կուսակցութեան Ե. Համագումարին ընդառաջ, անոր պարագլուխներէն Զահիտ պէյ Փարիզի Լը Մաթէն թերթին կը յայտնէ, թէ Իթթիհատ շուտով պիտի վերածուի եւրոպական առումով կուսակցութեան մը, անոր գաղտնի գործունէութիւնը պիտի վերացուի, կուսակցական երդման արարողութենէն սուրն ու ատրճանակը պիտի հանուին եւ Պոլսոյ Կեդրոնական Կոմիտէին պիտի փոխարինէ երեսփոխանական խմբակցութիւնը (Ազատամարտ, 1912, Օգոստ. 31/13 Սեպտ.):

⁴ Գուրգէն Եսգընեան, Ապտուլ Համիտ Բ. Կարմիր Սուլթանը, Պէյրութ, 1980, տպարան «Սեւան», էջ 665:

⁵ Aykut Kansu, *The Revolution of 1908 in Turkey*, New York, 1997, էջ 205:

⁶ Սա այն ժամանակաշրջանն է, որուն մասին ՀԵԴի պատմագիրներէն Հրաչ Տասնապետեան կը գրէ. "In short, the Dashnaktsutun thus associated itself with the concept of "Ottomanism", Dasnabedian H., *History of the Armenian Revolutionary Federation Dashnaktsutun* (1890-1924), Milan, 1989, էջ 87:

⁷ Arsen Avagyan, Gaidz F. Minassian, *Ermeniler ve Ittihat ve Terakki*, Istanbul, 2005, էջ 33: 1907 Դեկտ. 27-29 Փարիզի մէջ տեղի կ'ունենայ օսմանեան ընդդիմադիր ուժերու Բ. խորհրդաժողովը, որուն կազմակերպման եւ կայացման մէջ ՀԵԴ կ'ունենայ լուրջ դե-

րակատարութիւն: Խորհրդաժողովէն շուրջ եօթ ամիս ետք տեղի կ'ունենայ սահմանադրական յեղաշրջումը, որուն իրականացման մէջ ՀՅԴ մեծ նշանակութիւն կուտայ խորհրդաժողովին, մինչդեռ Իթթիհատի ղեկավարները, յեղաշրջման իրականացման մէջ խորհրդաժողովին ոչ մէկ գերակատարութիւն կը վերապահեն, փոխարէնը կը շեշտեն Ռումելիի շրջանի ապստամբական եւ զինուորական իրադարձութիւններուն դերը («Աճէտ Ռիզայի Հարցազրոյցը Սուրէն Պարթեւեանի Հետ», Ազգ, Հոկտ. 17, 1908, ըստ՝ Եագրճեան, էջ 672-673): Այս խմաստով, Իթթիհատի պարագլուխները, յատկապէս Աճէտ Ռիզա սահմանադրութեան հռչակման մէջ ՀՅԴին որեւէ դեր չի վերապահեր: Հնչակեան ղեկավարներ եւս կը քննադատեն յեղաշրջման մէջ ՀՅԴի կողմէ իր դերին գերազնահատման փորձերը եւ զանոնք կը նկատեն «յաւակնոտ», (Սապահ Գիւլեանի «Թրքական Ռեֆորմիստական Շարժումը», Հնչակ, 1908 Յունիս-Յուլիս, նաեւ՝ Ռուբէն Խանազատ «Ինքնամոռացութեան Փայլուն Նմոյշներէն» Մշակ, 1908 Օգոստ. 6):

- ⁸ 1896ի ՄԴՀԿ Ա. Համագումարին Կուսակցութիւնը կը պառակտուի երկու Հատուածներու: Վերամիացման փորձերը կը ձախողին եւ 1902ին արդէն կը գործեն երկու ինքնուրոյն Կուսակցութիւններ՝ Հնչակեան Կուսակցութիւնը (1909էն՝ ՄԴՀԿ) եւ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը (ՎՀԿ): 1902ի Ընդդիմադիր Ուժերու Բ. Խորհրդաժողովին կը մասնակցի ՎՀԿ: Անահիտ Տէր Մինասեան, առանց այս տարբերակումը ընդգծելու, իր «The Role of the Armenian Community in the Foundation and Development of the Socialist Movement in the Ottoman Empire and Turkey (1876-1923)» ուսումնասիրութեան մէջ կը գրէ, թէ Խորհրդաժողովին Հայերու կողմէ կը մասնակցէին Հնչակեան եւ Դաշնակցական պատուիրակներ (Mete Tuncay and Erik J. Zürcher, *Socialism and Nationalism in the Ottoman Empire 1876-1923*, London, 1994, British Academic Press, էջ 137): Մինչդեռ, ՄԴՀԿ ոչ միայն կը մերժէ մասնակցիլ այդ Խորհրդաժողովին, այլեւ իր պաշտօնաթերթին մէջ երկարօրէն կը քննադատէ զայն եւ անոր մասնակից Հայերը ու կը գրէ. «Կօնգրէսը կազմակերպողները, նրանց ջոջերը, տաճկական խորամանկ դիպլոմատների այդ ասպազայ խորամանկ կանդիդատները, կօնգրէսի հրաւիրեցին հայ յեղափոխականներին, որպէսզի, յանուն օսմանեան ընդհանուր ժողովուրդի միութեան, յանուն ընդհանուր քարեկարգումների, խեղդէին, ոչնչացնէին, իսպառ անհետ անէին քաղաքական աշխարհից հայկական դատը: Այն՝ ինչ չկարողացաւ անել Համիդը իր հարիւր հազարաւոր զոհերով, նրանք ուղեցին, խաղաղ միջոցներով, լոկկ մնջիկ, կաքինետային հաշիւներով, յաջողեցնելով» (Հ. Ե., «Երիտասարդ Թիւրքիա եւ Երիտասարդ Հայաստան Անտաղօնիզմը», Հնչակ, 1 Մայիս 1902):

- ⁹ Ստեփան Սապահ Գիւլեան, Պատասխանատուները, Պէյրութ, 1974, տպարան «Տօնիկեան», էջ 315:

- ¹⁰ ՀՅԴի յետընտրական դժգոհութեան եւ յուսախաբութեան մասին արտայայտուած են ընտրական բանակցութիւններուն քաջածանօթ Վահան Փափագեան, Իմ Յուշերը, Հատոր Բ., Պէյրութ, «Համագալային», 1952, էջ 35-36, 85, 90, եւ Միքայէլ Վարանդեան, Վերածնունդ Հայրենիքը Եւ Մեր Դերը, Ժրնեւ, 1910, «ՀՅԴաշնակցութիւն», էջ 98:

- ¹¹ Գրիգոր Զօհրապ մինչ այդ յարած էր Ահրար Կուսակցութեան: Այդ պատճառով Իթթիհատ սկիզբը կը մերժէ անոր անունը դնել իր ընտրացանկին վրայ: Սակայն Պատրիարքարանի պնդումներուն վրայ, կ'ընդունի Զօհրապը իր ցուցակին մէջ, բայց միայն՝ ձեւականօրէն: Ընտրութեան արդիւնքը կ'ըլլայ այն, որ Բ. կարգի 512 ընտրողներէն (5 հոգի բացակայ) Իթթիհատի թեկնածու Մանայիգատէ Ռեֆիկ պէյ կը ստանայ առաւել

լազոյն 503 քուէ, իսկ Զօհրապ կ'ընտրուի նուազագոյն 392 քուէներով: Կարելի է ենթադրել, որ իթթիհատականները քուէարկած չէին Զօհրապին եւ ան իր քուէները ապահոված էր անձնական հեղինակութեան շնորհիւ:

- ¹² Օսմանեան Երեսփոխանական Ժողովին ընդհանուր թիւը, տարրեր ազգութիւններու պատկանող երեսփոխաններու թիւն ու անոնց տոկոսային յարաբերութիւնը, քաղաքական տարրեր հոսանքներու պատկանող երեսփոխաններուն յարաբերական տոկոսը եւն., տարրեր հեղինակներու մօտ մեծապէս կը տարբերին իրարմէ: Այս աղիւսակը ընդհանուր քաղուածքի մը սեփական դիտարկման արդիւնք է կարելի չէ անոր մօտենալ գիտական ճշգրտութեամբ: Այն ընդհանուր պատկերացում մը տալու համար է միայն:

- ¹³ Hasan Kayali, "Jewish Representation in the Ottoman Parliaments", in Avigdor Levy, *The Jews of the Ottoman Empire*, The Darwin Press, Inc. (In Cooperation with The Institute Of Turkish Studies, Inc.), New Jersey, 1994, էջ 511: Նիւթին մասին կարելի է տեսնել նաեւ Feroz Ahmed, "Unionist Relations With the Greek, Armenian, and Jewish Communities of the Empire, 1908-1914," in B. Braude and B. Lewis (eds.), *Christians and Jews in the Ottoman Empire*, New York, 1982:

- ¹⁴ Catherine Boura, "The Greek Millet in Turkish Politics: Greeks in the Ottoman Parliament (1908-1918)," in Dimitri Gondicas and Charles Issawi, *Ottoman Greeks In The Age Of Nationalism: Politics, Economy, and Society in the Nineteenth Century*, The Darwin Press, Inc., New Jersey, էջ 196:

- ¹⁵ Kansu, էջ 241:

- ¹⁶ Գիւլեան, էջ 113-114:

- ¹⁷ Փափագեան, *Իմ յուշերը*, էջ 92:

- ¹⁸ Handan Nezir Akmeshe, *The Birth of Modern Turkey*, 2005, London/New York, էջ 94:

- ¹⁹ Feroz Ahmed, *The Young Turks (The Committee of Union and Progress in Turkish Politics 1908-1914)*, Oxford, 1969, էջ 61:

- ²⁰ Akmeshe, էջ 95-96:

- ²¹ Այդ շրջանի պոլսահայ օրաթերթերը լայն տեղ կը տրամադրէին Երեսփոխանական Ժողովի անցուղարձերուն, մասնաւորապէս հայ երեսփոխաններու ելոյթներուն եւ կեցուածքներուն՝ պատմութեան թողլով ուսումնասիրութեան հարուստ առաղձ:

- ²² Օրինակի համար նշենք հետեւեալ մանրագէպը. երբ 1910 Մարտ 20ին Երեսփոխանական Ժողովը կը քննարկէ կալուածատուքի օրինագիծը, հայ երեսփոխաններ (Զօհրապ, Վարդգէս, Մեծն Մուրատ) կը պաշտպանեն տուրքերու յառաջատուական (progressional) սկզբունքը, (որ այսօր յայնօրէն կը կիրարկուի ԱՄՆի մէջ): Ելեւմտական Նախարար Ճաւիտ պէյ, իթթիհատի երեսփոխանական խմբակցութեան ղեկավար Քալիլ պէյ, Սուրիոյ մէջ հսկայ կալուածներու տէր երեսփոխան Շէֆիք էյ Մուէյէտ կը հակադարձեն հայ երեսփոխաններուն: Ընդ որում, անոնք իրենց ելոյթներուն մէջ «կը յայտնագործեն», թէ հայ երեսփոխաններուն առաջարկը «սոցիալիստական» է եւ հայ երեսփոխանները թաքնօրէն կը փորձեն կայսրութեան մէջ կիրառել սոցիալիստական սկզբունքներ: Ազգութեամբ արաբ երեսփոխան Թեֆիք պէյ նոյնիսկ բռունցքներով կը յարձակի Վարդգէսի վրայ եւ կը փորձէ բռնութեամբ լռեցնել զայն (Ազատամարտ, 1910, 8/21 Մարտ):

- ²³ Akmeshe, էջ 94:

²⁴ Rashid Ismail Khalidi, "The 1912 Election Campaign in the Cities of Bilad al-Sham", *International Journal of Middle East Studies*, Vol. 16, No 4, 1984 Nov., էջ 465:

²⁵ Ahmed, *The Young Turks*, էջ 100:

²⁶ Սահմանադրութեան 35րդ յօդուածին փոփոխութիւնը քանի մը անգամ քննարկուած էր Երեսփոխանական Ժողովէն ներս: Ըստ յօդուածի նախնական ձեւին, եթէ որեւէ հարցի շուրջ կառավարութեան եւ Երեսփոխանական Ժողովին միջեւ երկարատեւ վէճ յառաջանար եւ կողմերը անդրդուելի մնային իրենց տեսակէտերուն վրայ, Սուլթանը կրնար լուծել կառավարութիւնը եւ նշանակել նոր կառավարութիւն կամ կրնար լուծել Երեսփոխանական Ժողովը եւ նշանակել ընտրութիւններու նոր թուական: Սահմանադրութեան այս յօդուածը 1908ի Երեսփոխանական Ժողովին կողմէ բարեփոխութեան ենթարկուելով ստացած էր բովանդակութիւն մը, ըստ որուն, երբ Երեսփոխանական Ժողովին եւ Դաշլիճին միջեւ ձգձգուող վէճ յառաջ գայ, կառավարութիւնը պէտք է յարգէ Երեսփոխանական Ժողովին կարծիքը կամ ալ հրաժարի: Եթէ նոր կառավարութիւնը վերապնդէ հրաժարեալ կառավարութեան տեսակէտին վրայ, ապա Սուլթանը, Մերակոյտի 2/3ին մեծամասնութեամբ (սահմ. յօդ. 9) կրնայ լուծել Երեսփոխանական Ժողովը եւ նշանակել երեսփոխանական ընտրութիւններու նոր թուական: Այս յօդուածին փոփոխութեան համար Սայիտ փաշայի կառավարութիւնը կ'առաջարկէ նոր տարբերակ մը, ըստ որուն, եթէ կառավարութեան եւ Երեսփոխանական Ժողովին միջեւ երկարատեւ վէճ յառաջանայ, Սուլթանը կրնայ փոխել կառավարութիւնը կամ լուծել Երեսփոխանական Ժողովը: Երեսփոխանական մէկ նստաշրջանի ընթացքին միայն մէկ անգամ կարելի էր ժողովը լուծել: Պատերազմի ժամանակ Երեսփոխանական Ժողովի աշխատանքները կ'ընդհատէին: Երեսփոխանական Ժողովը լուծարքի ենթարկելու համար Սուլթանը չի պարտաւորուիր Մերակոյտին կարծիքը առնել:

²⁷ M. Naim Turfan, *Rise of the Young Turks*, London, 2000, էջ 180-181:

²⁸ Ազատամարտ, 1909, Օգոստ. 24/Սեպտ. 6:

²⁹ Ազատամարտ, 1909, 2/15 Սեպտ.: Այլ առիթով մը, երբ Բիւզանդիոն քննադատելով ՀՅԴ-ի թիկնաւոր համաձայնագիրը, կը գրէ, թէ Իթթիհատ այդ պէտք է կնքէր ոչ թէ ՀՅԴ-ի, այլ Պատրիարքարանին հետ, Ազատամարտ (1910, 10/23 Օգոստոս), քմծիծաղի ենթարկելով յայտնուած կարծիքը կը գրէ. «նախ կ'ուզեմ քիչ մը շունչ առնել. ուրախութենէ շունչս կտրուեւ էր. Պատրիարքարանը Իթթիհատի» հետ – ըսել է Պատրիարքարանն ալ պիտի բաժնէ Դաշնակցութեան հետ՝ դաւաճան ըլլալու պատիւը... խոստովանեցէք, որ պզտիկ մխիթարութիւն մը չ'է աս...»:

³⁰ Արսէն Կիսուր, Պատմութիւն ՄԴ Հնչակեան Կուսակցութեան, Հատոր Ա. Պէյրութ, տպարան Շիրակ, 1962, էջ 364-368:

³¹ Քաղաքական Ժողովը, Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ ընտրուած երկու Ժողովներէն մէկն էր. միւսը՝ Կրօնական Ժողովն էր: Զույգ Ժողովները միասնաբար կը կազմէին Ազգային Վարչութիւնը: Քաղ. Ժողովի գործունէութեան բնագաւառը ոչ-եկեղեցական, քաղաքացիական բնագաւառն էր, ընդ որում՝ պետական մարմիններու հետ յարաբերութիւնը, քաղաքական ընդհանրական հարցերու կապակցութեամբ կեցուածքներու որդեգրումը եւն.:

³² Յովհաննէս Յակոբեան, Քաղաքացիական Կրթութիւն, Կ. Պոլիս, 1911, հրտ. Միացեալ Ընկերութեանց Հայոց, էջ 129:

³⁵ Կեդրոն խմբակցութիւնը կ'ընդգրկէ եւ իր շուրջ կը համախմբէ Պոլսոյ հայ մտաւորականութենէն եւ գործարար շրջանակներէն պատկառելի թիւ մը: Ազգային Երեսփոխանական Ժողովէն ներս իր ստուար թիւին եւ պաշտօնողական նկարագրին համար, Կեդրոն խմբակցութիւնը ընդհանրապէս լաւ գործակցութեան մէջ կ'ըլլայ Պատրիարքին հետ: Այս պատճառով անոր մնայուն նպատակը կ'ըլլայ ազգային-հասարակական հարցերու լուծման կեդրոնը պահել Պատրիարքարանը՝ ազգային կեանքին վրայ իր հեղինակութիւնը միշտ ունենալու համար:

³⁶ Ազատամարտ, 1912, 2/15 Մայիս:

³⁷ Ազատամարտ, 1910, 17/30 Յունիս:

³⁸ Ազատամարտ, 1912, 12/25 Յունուար:

³⁹ Ազատամարտ, 1912, 17/30 Յունուար:

⁴⁰ Ինչպէս ստորեւ պիտի նկատէ ընթերցողը, ընտրապայքարի տարբեր երեսներուն մեկնարանման մէջ, մենք հիմնականին մէջ յենած ենք ՀԵԴԻ եւ ՄԴՀԿԻ Պոլսոյ պաշտօնաթերթեր Ազատամարտին եւ Նոր Աշխարհին վրայ: Սա, պարզ աչք պատճառով, որ երբ ընտրապայքարը իրարու դէմ կը հանէ երկու գլխաւոր ոյժեր նկատուող Իթիհատն ու Իթիլաֆը, վերջիններուս հետ որպէս հայ դաշնակիցներ հիմնականին մէջ երեւան կու գան համապատասխանաբար ՀԵԴԻ ու ՄԴՀԿԻ: Սա բնաւ չի նշանակեր, թէ Պոլսոյ, շրջաններու եւ նոյնիսկ արտերկրի հայ մամուլի օրկաններուն մէջ 1912ի Օսմանեան Կայսրութեան երեսփոխանական ընտրութիւնները մեկնարանող ուշագրաւ եւ արժէքաւոր յօդուածներ չկան: Այդ բոլորին ամփոփումն ու վերլուծութիւնը շատ աւելի ծաւալուն եւ համապարփակ աշխատութեան մը նիւթը կրնայ ըլլար:

⁴¹ Ազատամարտ, 1912, 18/31 Յունուար:

⁴² Ազատամարտ, 1912, Յունուար 20/2 Փետրուար:

⁴³ Ազատամարտ, 1912, 14/27 Յունուար:

⁴⁴ Օսմանեան Սոցիալիստական Կուսակցութիւնը (Օսմանյի Սոսիալիստ Ֆիրքասի, ՕՍՖ), կը հիմնադրուի 1909ին Պոլսոյ մէջ, Հուսէյն Հիլմիի կողմէ, որ կը դառնայ նաեւ Կուսակցութեան ղեկավարը: ՕՍՖ կ'ընդգրկէ քիչ թիւով մտաւորականներ, որոնց շարքին Իսմայիլ Ֆաիք (Ինսանիյէթ թերթի նախկին խմբագիր) Զուա Շելքի (Ֆէօն թիւթ թերթի նախկին խմբագիր) Տոքթ. Ռաֆիք Նելգէթ (որ կը դառնայ ՕՍՖի Փարիզի կազմակերպութեան ղեկավարը եւ կապեր կը մշակէ Սոցիալիստներու եւ եւրոպական սոցիալիստական Կուսակցութիւններուն հետ): ՕՍՖ կ'ունենայ հակաիթիհատական ուղղութիւն, որուն պատճառով անոր ղեկավարները կ'ենթարկուին հալածանքներու: Բացի այն որ ՕՍՖ Օսմանեան քաղաքական կեանքին մէջ էական դերակատարութիւն մը չ'ունենար, անոր ղեկավարները թոյլ կ'ըլլան նաեւ տեսական հարցերու մէջ: Այս կապակցութեամբ, կայ ծիծաղաշարժ գրուագ մը: Փարամագ (Մատթէոս Սարգիսեան), Նոր Աշխարհ թերթին մէջ տպուած բաց նամակով մը, «Կայծ» Ուսանողական Միութեան իր երիտասարդ ընկերներուն կը թելադրէ աւելի աշխոյժ ձեւով ընդգրկուիլ սոցիալիստական շարժման մէջ եւ այս ուղղութեամբ աւելի բացուիլ ոչ-հայ հանրային կարծիքին: «Կայծ»ի ղեկավար Վանիկ, դարձեալ Նոր Աշխարհին մէջ տպուած բաց նամակով մը, կը պատասխանէ իր աւագ ընկերոջ, նշելով թէ Հնչակեան երիտասարդները այդպիսի նախաձեռնութիւններ վերցուցած են, սակայն թրքական մամուլը տեղ չի տար սոցիալիստական բովանդակութեամբ յօդուածներու: Վանիկ «այդ կարգի գաղափարային կեղծիքներու ներկայացուցիչներն են մէկն ար» կը նկատէ ՕՍՖի պաշտօնաթերթ Իշթիրաքը եւ Փարամագին կը յիշեցնէ այն «ծիծաղելի դէպ-

բը» երբ յիշեալ թերթը բաց նամակ գրած էր Կարլ Մարքսին... անոր մահէն 25 տարի անց (Նոր Աշխարհ, 1912, 7/20 Սեպտ.):

⁴³ Ազատամարտ, 1912, Յունուար 19/1 Փետրուար:

⁴⁴ Ազատամարտ, 1912, Յունուար 26/8 Փետրուար:

⁴⁵ Նոյն:

⁴⁶ Ազատամարտ, 1912, Յունուար 27/9 Փետրուար:

⁴⁷ Ազատամարտ, 1912, 5/8 Փետրուար:

⁴⁸ Ազատամարտ, 1912, 11/24 Մարտ:

⁴⁹ Ազատամարտ, 1912, 18/31 Յունուար:

⁵⁰ ՍԱՖ կը հիմնուի 1909 Մայիս-Յունիսին Սալոնիկի մէջ, սափարտին հրեաներ Արրահամ Պենորէայի, Դաւիթ Լեկանադի, Ժողէֆ Գազանի եւ այլոց կողմէ: Կարճ ժամանակ անց, ՍԱՖի կը միանայ պուլկար ծագումով Տիմիդար Վլախով (1874-1954)՝ իր Ազգային Դաշնակցային Կուսակցութիւն խումբով, եւ կը դառնայ ՍԱՖի յայտնի ղեկավարներէն: ՍԱՖ իր բնոյթով աշխատաւորական, բազմազգեան կառոյցով կուսակցութիւն էր, որուն մէջ հրեաները թիւով միշտ կ'ըլլան գերակշիռ: Սոցիալիստներին կ'անդամակցի 1909 Նոյեմբերին: ՍԱՖ կը հրատարակէ սոցիալիստական ուղղութեամբ բազմալեզու (երբայերէն, թրքերէն, յունարէն, պուլկարերէն) թերթեր եւ պարբերականներ, կը նպաստէ արհեստակցական միութիւններու ստեղծման, կը կազմակերպէ բազմամարդ ցոյցեր ու հաւաքներ: Կը փորձէ մէկ կուսակցութեան մէջ համախմբել Օսմանեան Կայսրութեան բոլոր սոցիալիստական կուսակցութիւնները: ՍԱՖ ընդհանրապէս եւ Վլախով ի մասնաւորի՝ որ նաեւ 1908-1912 անդամ էր Երեսփոխանական Ժողովին, բարեկամական կապեր կ'ունենայ ՀՅԴի եւ ՄԴՀԿի հետ: Ազատամարտ, 1909 Օգոստ. 15/28ի թիւէն սկսեալ, երեք յաջորդական մասերով կը տպագրէ Վլախովի հետ ընդարձակ հարցազրոյց մը: 1909ին Վլախով, Հնչակեան եւ Դաշնակցական երեսփոխաններուն հետ կը կազմէ Երեսփոխանական Սոցիալիստական Խմբակցութիւնը, որ երկար կեանք է՝ ունենար (սա կարելի է նկատել, ընդհանրապէս Թուրքիոյ Երեսփոխանական Ժողովին առաջին սոցիալիստական խմբակցութիւնը): 1910էն սկսեալ, ՍԱՖ կ'ունենայ խիստ հակաիթիւհատական դիրքորոշում, որուն պատճառով անոր ղեկավարները կ'ենթարկուին հալածանքներու: 1912 Մարտ 12ին ՍԱՖի ղեկավար Գազան, Սոցիալիստների Ընդհանուր Քարտուղար Հուլիսմանգին կը յղէ ՍԱՖ-ՄԴՀԿ յարաբերութեան մասին տեղեկագիր մը (Socialism and Nationalism ..., էջ 182): 1912 Սեպտեմբերին, ՄԴՀԿ Տաճկաստանի չըջանի Բ. Պատգամաւորական Ժողովը կը վաւերացնէ Վլախովի կողմէ ներկայացուած գործակցութեան նախագիծ մը (Նոր Աշխարհ, 1912, 13/26 Սեպտեմբեր): 1912 Հոկտեմբերին, Պալքանեան Պատերազմի նախօրէին, ՍԱՖը, Ռումանիոյ Սոցիալ-Դեմոկրատ Կուսակցութիւնը, Պաղեստինի Սոցիալ-Դեմոկրատ Բանուորական Հրեայ Կուսակցութիւնը, ՀՅԴն եւ ՄԴՀԿը համատեղ կը ստորագրեն «Պալքանեան Եւ Փոքր Ասիոյ Աշխատաւոր Ժողովուրդի Հանրային Կարծիքին» (սոցիալիստներու յայտարարութիւնը) կոչը, որ կը տպագրուի Սոցիալիստների պաշտօնաթերթ Պիլլեթինի եւ եւրոպական շարք մը սոցիալիստական կուսակցութիւններու թերթերուն մէջ (կոչին հայերէնը տեսնել՝ Ազատամարտ, 1912 Սեպտ. 30/13 Հոկտեմբեր թիւին մէջ): Պալքանեան Պատերազմին, Սալոնիկ քաղաքի յունական բանակին կողմէ գրաւման հանդէպ ՍԱՖ խանդավառութիւն ցոյց չի տար, բայց կը համակերպի իրականութեան: Անկէ ետք, անոր գործունէութիւնը որոշապէս կը նուազի: 1920ականներուն սկիզբը ՍԱՖ կը դառնայ նորաստեղծ Յունաստանի Համայնավար

- կուսակցութեան բաղկացուցիչներէն: (ՍԱՖի մասին տեսնել *Socialism and Nationalism in the Ottoman Empire 1876-1923*, գիրքին մէջ):
- ⁵¹ ՀՅԴ Զ. Ընդհանուր Ժողովը կը գումարուի Պոստի մէջ 1911 Օգոստոս-Սեպտեմբերին: Ժողովը իր ղեկավարութիւնը կ'արձանագրէ Իթթիհատական կառավարութիւններու եռամեայ քաղաքականութեան հանդէպ, սակայն Իթթիհատին հետ գործակցութիւնը խզելու վճռական որոշում չ'առնեն: Ժողովը կ'որոշէ ՀՅԴի անունով Իթթիհատին ուղղել յայտարարագիր մը, ուր նշուին կառավարութեան գործած սխալները: Լուրջ փոփոխութիւններ չյառաջանալու պարագային, Արեւմտեան Բիւրոյին կ'արտօնուի յարաբերութիւնները խզել Իթթիհատին հետ (այս յայտարարագիրը Իթթիհատին կը փոխանցուի բաւականին ուշ, երեսփոխանական ընտրութիւններէն ետք միայն): Ժողովը կ'որոշէ նաեւ գործակցութեան եզրեր գտնել հայ կուսակցութիւններուն հետ:
- ⁵² *Ազատամարտ*, 1912, Յունուար 19/1 Փետրուար: Աւելի ուշ Վլախով եւս կ'ընդունի թէ այս հարցին մէջ ինք հիմնական դեր չէ խաղցած (*Ազատամարտ*, Յուն. 22/4 Փետրուար): Գիւլեան այդ դերը կը վերապահէ Փարլիւսին՝ որուն հանդէպ նաեւ չի թաքցնել իր հակակրօնութիւնը (*Գիւլեան*, էջ 295-296):
- ⁵³ Գիւլեան, էջ 301:
- ⁵⁴ Նոյն:
- ⁵⁵ Dikran M. Kaligian, *The Armenian Revolutionary Federation Under Ottoman Constitutional Rule, 1908-1914*, dissertation for the degree of Doctor of Philosophy in Boston College, 2003, էջ 188: Անտիպ:
- ⁵⁶ *Ազատամարտ*, 1912, Յունուար 19/1 Փետրուար:
- ⁵⁷ *Ազատամարտ*, 1912, Յունուար 24/6 Փետրուար:
- ⁵⁸ *Ազատամարտ*, 1912, 8/21 Փետրուար:
- ⁵⁹ *Ազատամարտ*, 1912, 9/22 Փետրուար:
- ⁶⁰ ՀՅԴ Արեւմտեան Բիւրոյի նամակը *Դրօշակի* խմբագրութեան (1912, Փետր. 12), նաեւ՝ Kaligian, էջ 189:
- ⁶¹ *Ազատամարտ*, 1912, 11/24 Փետրուար:
- ⁶² *Ազատամարտ*, 1912, Փետրուար 12/3 Մարտ:
- ⁶³ *Նոր Աշխարհ*, 1912, 4/17 Ապրիլ:
- ⁶⁴ Նոյն:
- ⁶⁵ *Նոր Աշխարհ*, 1912, 7/20 Մարտ:
- ⁶⁶ Kaligian, էջ 191:
- ⁶⁷ Գիւլեան, էջ 318-323:
- ⁶⁸ Recep Karacakaya, *A Chronology of the Armenian Problem with a Bibliography (1878-1923)*, Prime Ministry General Directorate of State Archives Directorate of Ottoman Archives Publication No 57, Ankara, 2002, էջ 82:
- ⁶⁹ *Ազատամարտ*, 1912, 10/23 Մարտ, Մարտ 30/12 Ապրիլ, Մարտ 31/13 Ապրիլ, 3/16 Ապրիլ:
- ⁷⁰ *Նոր Աշխարհ*, 1912, 15/28 Մարտ:
- ⁷¹ *Նոր Աշխարհ*, 1912, Մարտ 24/6 Ապրիլ:
- ⁷² Նոյն:
- ⁷³ *Նոր Աշխարհ*, 1912, Մարտ 25/7 Ապրիլ:
- ⁷⁴ Karacakaya, էջ 82:
- ⁷⁵ *Ազատամարտ*, 1912, 15/28 Փետրուար:
- ⁷⁶ *Նոր Աշխարհ*, 1912, 5/18 Մարտ:

- ⁷⁷ Ազատամարտ, 1912, 16/29 Փետրուար:
- ⁷⁸ Նոր Աշխարհ, 1912, 9/22 Մարտ:
- ⁷⁹ Ազատամարտ, 1912, 9/22 Մարտ:
- ⁸⁰ Մահամադրութենէն յետոյ, գաւառի հայութեան ամէնէն հակաճարգը կ'ըլլայ համիտեան շրջանին բռնադատուած կամ ապօրինի ձեւերով իւրացուած հողերու եւ անշարժ կայուածներու վերստացման խնդիրը: Հարցը, որ ծանօթ կը դառնայ «հողային հարց» ընդհանուր անուանումով, իրմով կը զբաղեցնէ Պատրիարքարանն ու հայ կուսակցութիւնները: Այս կապակցութեամբ գաւառներէն եկող բողոքագիրները ուսումնասիրելու եւ զանոնք հետազոտելու աշխատանքը կը յանձնուի Ազգային ժողովի մնալուն յանձնախումբերէն՝ «Հարստահարութեանց Յանձնաժողով»ին, որ կեանքի կոչուած էր Մկրտիչ Խրիմեանի պատրիարքութեան օրերուն (1869-1873), վերջինիս պնդումներուն շնորհիւ:
- ⁸¹ Նոր Աշխարհ, 1912, 9/22 Մարտ:
- ⁸² Ազատամարտ, 1912, 9/22 Մարտ:
- ⁸³ Նոր Աշխարհ, 1912, 9/22 Մարտ:
- ⁸⁴ Նոյն:
- ⁸⁵ Ազատամարտ, 1912, 9/22 Մարտ:
- ⁸⁶ Նոյն:
- ⁸⁷ Ազատամարտ, 1912, 14/27 Մարտ:
- ⁸⁸ Նոր Աշխարհ, 1912, 1/14 Ապրիլ:
- ⁸⁹ Ազատամարտ, 1912, 17/30 Մարտ:
- ⁹⁰ Ազատամարտ, 1912, մարտ 20/2 Ապրիլ:
- ⁹¹ Նոր Աշխարհ, 1912, Մարտ 31/13 Ապրիլ:
- ⁹² Karacakaya, էջ 83:
- ⁹³ Նոյն:
- ⁹⁴ Նոր Աշխարհ, 1912, Մարտ 31/13 Ապրիլ:
- ⁹⁵ Նոր Աշխարհ, 1912, 8/21 Մարտ:
- ⁹⁶ Նոր Աշխարհ, 1912, 13/26 Մարտ:
- ⁹⁷ Ազատամարտ, 1912, Մարտ 22/4 Ապրիլ:
- ⁹⁸ Ազատամարտ, 1912, Մարտ 24/6 Ապրիլ:
- ⁹⁹ Նոր Աշխարհ, 1912, Մարտ 24/6 Ապրիլ:
- ¹⁰⁰ Ազատամարտ, 1912, Փետր. 23/7 Մարտ:
- ¹⁰¹ Նոր Աշխարհ, 1912, 8/21 Մարտ:
- ¹⁰² Ազատամարտ, 1912, Փետր. 28/12 Մարտ:
- ¹⁰³ Ազատամարտ, 1912, Մարտ 21/3 Ապրիլ:
- ¹⁰⁴ Նոր Աշխարհ, 1912, 11/24 Ապրիլ:
- ¹⁰⁵ Ազատամարտ, 1912, Մարտ 30/12 Ապրիլ:
- ¹⁰⁶ Նոր Աշխարհ, 1912, Մարտ 28/10 Ապրիլ:
- ¹⁰⁷ Ազատամարտ, 1912, Մարտ 30/12 Ապրիլ:
- ¹⁰⁸ Նոր Աշխարհ, 1912, Մարտ 28/10 Ապրիլ:
- ¹⁰⁹ Նոր Աշխարհ, 1912, Մարտ 30/12 Ապրիլ:
- ¹¹⁰ Ազատամարտ, 1912, Մարտ 28/10 Ապրիլ:
- ¹¹¹ Erik Zurcher, Turkey - A Modern History, London, 1994, էջ 107-108, նաեւ՝ Ahmed, The Young Turks..., էջ 103, նաեւ՝ Kayali, "Elections and..., էջ 273:

- 112 Նոր Աշխարհ, 1912, 8/21 Մարտ:
- 113 Նոր Աշխարհ, 1912, 10/23 Մարտ:
- 114 Նոր Աշխարհ, 1912, 13/26 Ապրիլ:
- 115 Նոր Աշխարհ, 1912, 15/28 Ապրիլ:
- 116 Ազատամարտ, 1912, 11/24 Մայիս:
- 117 Նոր Աշխարհ, 1912, 17/30 Ապրիլ, Մարտ 24/6 Ապրիլ, 3/16 Ապրիլ:
- 118 Նոր Աշխարհ, 1912, 3/16 Ապրիլ:
- 119 Նոր Աշխարհ, 1912, Մարտ 30/12 Ապրիլ, 11/14 Ապրիլ:
- 120 *Ռիֆաթ Մեւլանզատէ հեղինակն է Օսմանեան Յեղափոխութեան Մութ Մայրերը Եւ Իթիֆհատի Հայաջինջ Ծրագիրները վիճարարոյց գիրքին:*
- 121 Ազատամարտ, 1912, 14/27 Մարտ:
- 122 Նոր Աշխարհ, 1912, Մարտ 31/13 Ապրիլ:
- 123 Նոր Աշխարհ, 1912, 13/26 Մարտ, Մարտ 24/6 Ապրիլ:
- 124 Kayali, "Elections ..." էջ 276:
- 125 Նոր Աշխարհ, 1912, Մարտ 25/7 Ապրիլ:
- 126 Նոր Աշխարհ, 1912, 6/19 Ապրիլ:
- 127 Նոր Աշխարհ, 1912, Մարտ 29/11 Ապրիլ, 4/17 Ապրիլ, 5/18 Ապրիլ:
- 128 Ազատամարտ, 1912, Փետր. 28/12 Մարտ:
- 129 Նոր Աշխարհ, 1912, 5/18 Ապրիլ:
- 130 Նոր Աշխարհ, 1912, 11/24 Ապրիլ, 15/28 Ապրիլ, 12/25 Ապրիլ:
- 131 Նոր Աշխարհ, 1912, 11/24 Ապրիլ:
- 132 Ազատամարտ, 1912, Ապրիլ 25/8 Մայիս:
- 133 Նոր Աշխարհ, 1912, Մարտ 30/12 Ապրիլ:
- 134 Ազատամարտ, 1912, Յունուար 24/6 Փետրուար:
- 135 **ՀՅԴ Արեւմտեան Բիւրոյի նամակը ՀՅԴ Իզմիրի Կոմիտէին** (1912, Փետր. 28), Kaligian, էջ 192:
- 136 **ՀՅԴ Արեւմտեան Բիւրոյի նամակը ՀՅԴ Իզմիրի Կոմիտէին** (1912, Մարտ 16), նոյն էջ 193:
- 137 **ՀՅԴ Արեւելեան Բիւրոյի նամակը ՀՅԴ Արեւմտեան Բիւրոյին** (1912, Մարտ 4), նոյն էջ 194:
- 138 **ՀՅԴ Արեւմտեան Բիւրոյի նամակը Դրօշակի խմբագրութեան** (1912, Ապրիլ 23), նոյն էջ 196:
- 139 Սապահ Գիւլեան, *Ինքնագիր Հայաստան*, 1915, Գահիրէ, էջ 52: Ըստ Հայկական Համառօտ Հանրագիտարանին, Տրագիզոնի Նահանգի հայերուն թիւը եղած է 65-75,000, ըստ Պոլսոյ Պատրիարքարանի 1912-1913 թուականի տուեալներուն (Հայկական Համառօտ Հանրագիտարան, հատոր Դ., Երեւան, Հայկական Հանրագիտարան Հրատարակչութիւն, 2003, էջ 774):
- 140 Ազատամարտ, 1912, 15/28 Ապրիլ:
- 141 Ազատամարտ, 1912, Ապրիլ 20/3 Մայիս:
- 142 Նոյն:
- 143 Նոյն:
- 144 Նոյն:
- 145 Նոր Աշխարհ, 1912, Մարտ 29/11 Ապրիլ:
- 146 Նոր Աշխարհ, 1912, Ապրիլ 19/2 Մայիս:

- 147 Նոյն:
- 148 Akmeshe, էջ 101:
- 149 Ազատամարտ, 1912, 8/21 Մայիս:
- 150 Նոյն:
- 151 Նոր Աշխարհ, 1912, 5/18 Ապրիլ:
- 152 Ազատամարտ, 1912, 13/26 Ապրիլ:
- 153 Նոյն:
- 154 Ազատամարտ, 1912, 15/28 Մայիս:
- 155 Ազատամարտ, 1912, Մարտ 24/6 Ապրիլ:
- 156 Նոր Աշխարհ, 1912, Մարտ 28/10 Ապրիլ:
- 157 Ազատամարտ, 1912, 6/19 Ապրիլ:
- 158 Ազատամարտ, 1912, 12/25 Ապրիլ: Ատանայի աղէտը, որ կը խլէ աւելի քան 20.000 հայու կեանք, տեղի կ'ունենայ այն միջոցին, երբ 1909 Մարտ 31ին (հին տոմարով), այսինքն Ապրիլ 13ին (նոր տոմարով), տեղի կ'ունենայ յեղաշրջման փորձ: Այդ անցուդարձերը օրուան մամուլին մէջ կը յիշատակուին որպէս «Մարտ 31ի դէպքեր»: Աւելի ուշ, երբ տեղի կ'ունենան Ատանայի աղէտին պատասխանատուները երեւան հանելու փորձեր, իշխանութիւնները խուսափելու համար իրենց բաժին հասնող պատասխանատուութենէն, յաճախ կը նշեն, թէ աղէտը տեղի ունեցաւ «Մարտ 31ի դէպքերուն» միջոցին ուր գլխաւոր դերը խաղցաւ տգէտ ու անպատասխանատու ամբոխը: Այստեղ, Զաւարեանի կողմէ «Մարտ 31»ի եւ «տգէտ խուժան»ի յիշատակումը ակնարկ է իշխանութիւններուն պատասխանատուութենէ խուսափելու ճիգերուն:
- 159 Նոր Աշխարհ, 1912, 15/28 Ապրիլ:
- 160 Նոր Աշխարհ, 1912, 1/14 Ապրիլ:
- 161 Ազատամարտ, 1912, 4/27 Ապրիլ:
- 162 Ազատամարտ, 1912, 18/31 Մայիս, 2/15 Յունիս:
- 163 Նոյն:
- 164 Ազատամարտ, 1912, Ապրիլ 21/4 մայիս:
- 165 Ազատամարտ, 1912, Օգոստ. 30/12 Սեպտ.:
- 166 Նոյն:
- 167 Կարճ ժամանակ անց, Ելեւմտական Նախարար Նայիմ պէյ կը հրաժարի եւ այդ պաշտօնին կը նշանակուի Հանրօգուտ Երեսօթեանց Նախարար Ժաւիտ պէյը, որուն բաց ձգած նախարարական պաշտօնին կը նշանակուի Հալաճեան:
- 168 Ahmed, *The Young Turks*, էջ 110:
- 169 Իր հրաժարումէն միայն երկու օր առաջ, Յուլիս 15ին, Սայիտ փաշայի դահլիճը, ձայներու 194 թեր եւ 4 դէմ յարաբերութեամբ կ'արժանանայ Երեսօթեանական ժողովի վստահութեան (ՀՅԴի երեսօթեաններ Վարդգէս, Գարօ, Վռամեան, Փաշապէգեան եւ Տէր Կարապետեան ձեռնպահ կը մնան): Երբ Սուլթանը հրաժարեալ վարչապետին հարց կու տայ թէ, վստահութեան քուէի արժանանալէն ետք ինչո՞ւ կը հրաժարի, Սայիտ փաշա կը պատասխանէ. «ամոնք իմ հանդէպս վստահութիւն ունիմ. ես է, որ ամոնք հանդէպ վստահութիւն չունիմ» (Bernard Lewis, *The Emergence of Modern Turkey*, London, 1968, էջ 223):
- 170 Այս կառավարութիւնը կը կոչուի նաեւ «հայր եւ որդիի դահլիճ», որովհետեւ վարչապետին որդին՝ Մահմուտ Մուխտար անոր կազմին մէջ կը զբաղեցնէ Նաւատորմի Նախարարի պաշտօնը (Ազատամարտ, 1912, 10/23 Յուլիս):

- 171 Ազատամարտ, 1912, Յուլիս 19/10 Օգոստոս:
- 172 Ազատամարտ, 1912, 18/31 Յուլիս:
- 173 Ազատամարտ, 1912, Յուլիս 19/1 Օգոստոս:
- 174 Ազատամարտ, 1912, Յուլիս 24/6 Օգոստոս:
- 175 Նոյն:
- 176 Բիւթանիա (Ազատամարտ, 1912, 14/27 Օգոստոս, 15/28 Օգոստոս), նաեւ Հայ մամուլի այլ օրկաններ, իշխանութիւններուն հանդէպ կատարած քննադատութիւններուն պատճառով, յաճախ կ'ենթարկուի կախակայման. այդ միջոցներուն, ան լոյս կը տեսնէ այլ անուններով: Սա այն միջոցն է, երբ Ազատամարտ, լոյս կը տեսնէր Բիւթանիա անունով:
- 177 Ազատամարտ, 1912, 12/25 Սեպտեմբեր:
- 178 Նոր Աշխարհ, 1912, Օգոստ. 23/5 Սեպտեմբեր:
- 179 Ազատամարտ, 1912, Օգոստ. 26/8 Սեպտեմբեր:
- 180 Ազատամարտ, 1912, 4/17 Օգոստ.:
- 181 Արսէն Կիտուր, էջ 343-349:
- 182 Նոր Աշխարհ, 1912, Սեպտեմբեր 22/5 Հոկտ.:
- 183 Նոյն:
- 184 Նոր Աշխարհ, 1912, 13/26 Սեպտեմբեր:
- 185 Նոր Աշխարհ, 1912, 13/26 Սեպտեմբեր:
- 186 Ազատամարտ, 1912, Օգոստ. 31/13 Սեպտեմբեր:
- 187 Նոր Աշխարհ, 1912, 5/18 Սեպտեմբեր:
- 188 Նոր Աշխարհ, 1912, 6/19 Սեպտեմբեր:
- 189 Նոյն:
- 190 Kayali, "Elections and...., էջ 278:

THE LEGISLATIVE ELECTIONS OF THE OTTOMAN EMPIRE IN 1912 AND THE WESTERN ARMENIANS (SUMMARY)

YEGHIG DJEREDJIAN

The author notes that Armenian parliamentary politics started before the proclamation of the Republic of Armenia in 1918. Rather, they started with the participation of the Armenians in the first Duma of Tsarist Russia in 1906 and continued in the next three Dumas until 1917. On the other hand, with the restoration of the 1876 Constitution in 1908 in the Ottoman Empire, a new venue of Armenian parliamentary politics was established.

Between 1908 and 1914 three legislative elections were held in the Ottoman Empire. The author dwells on the elections of 1912 arguing that in 1908 the Armenian parties and groupings were new to such a phenomenon and were not prepared for the first Ottoman legislative elections. On the other hand, during the 1914 elections, the Empire was under one-party rule and the elections had lost their democratic nature.

Every Ottoman male above the age of 25 was eligible to vote. Of these, all above the age of 30 were eligible to be elected. The elections were held in two stages. In the first stage every 250 to 275 voter would elect a representative for the Electoral College, which, in turn, elected the members of the Ottoman Legislative Assembly. In real terms the Assembly

member represented a constituency of 50,000. The electoral process extended for about three months. In fact, the Assembly was inaugurated while elections were still being held in certain constituencies.

The article sheds new light on various aspects of the pre-electoral period and the politics of different Armenian and other ethnic parties, particularly the *Ittihad ve Terakke* (Party of Union and Progress, PUP) and the *Hurriyet ve Itilaf* (Party of Liberty and Coalition, PLC).

The author notes that due to gerrymandering, the Armenians did not constitute a majority in any of the Electoral Colleges. Thus, they had to negotiate for seats in the Assembly. On the other hand, there was a significant discrepancy between the figures given by the Armenian Patriarchate of Constantinople and those of the Ottoman authorities. In almost all cases the number of Armenians given by the Ottoman authorities was far lower than the number registered by the Patriarchate. Furthermore, PUP aimed at having a majority in the parliament and opted to undermine ethnic parties and ethnic representation. These factors all led to unending and inconclusive discussions and negotiations between the Armenian parties and the PUP regarding the number of seats to be allocated to the Armenians. The Armenians demanded 23 while the PUP agreed to allocate a maximum of 15 seats but guaranteed 13.

On the Armenian scene, the Armenians were grouped around a number of parties and the Patriarchate. The latter was active through its Political Assembly. The Armenian parties and the Political Assembly extensively discussed the issue of alliance. Some of the parties had predispositions against the PUP. The Armenian Revolutionary Federation (ARF) had pre-electoral links with the PUP and aimed at capitalizing on these links to have most of the Armenian seats. Besides, there was a disagreement on the allocation of seats to the parties and the Patriarchate. However, the basic issue was the formation of alliances. The parties disagreed on which party to ally with. Eventually all but the Social Democrat Hunchag Party (SDHP) allied with the PUP.

Only 8 Armenians were elected to the Legislature. After several complaints and interventions two other Armenians were elected, which brought the total number of the Armenians to 10. Of these, 5 were members of the ARF, 4 were members of the PUP and one was independent. The SDHP, which had allied with the opposition PLC, lost.

All in all out of the 275-member Assembly only 6 constituted the opposition.

The 1912 Ottoman Legislature, however, could not survive the pressure of foreign politics. The loss of Tripolitania (Libya) to Italy was a major campaign issue which, unlike its vague impact in the pre-electoral period, was one of the main causes of the fall of the 1912 legislature.

The article is an important contribution towards developing a theory of the politics of Armenian participation in legislative elections and Armenian inter-party relations.